

## Տեսիլք առաջին

Հերմասի մերկացումը իր սեփական տկարությունների եւ իր երեխաների դաստիրակության անփութության համար:

1. Ինձ դաստիրակողը Հռոմում մի աղջկա վաճառեց: Շատ տարին անց, ես կրկին հանդիպեցի նրան, ճանաչեցի եւ սիրեցի որպես քրոջ: Որոշ ժամանակ անց ես նրան տեսա Տիբեր գետում լողանալիս եւ ձեռքս տվեցի նրան ու հանեցի գետից: Տեսնելով նրա գեղեցկությունը, մտածեցի սրտումս, ասելով. «Երջանիկ կլինեի, եթե այդպիսի դեմքով ու բարքով կին ունենայի»: Միայն այս, եւ ուրիշ ավելի ես ոչինչ չմտածեցի: Որոշ ժամանակ անց, ես ճանապարհվում էի Կուռ եւ փառաբանում էի Աստծո արարչությունը, թե ինչպես վեհ ու սքանչելի է: Զբոսնելիս ննջեցի, եւ Հոգին ինձ հայշտակեց ու տարավ մի տեղ, որտեղ մարդ չէր կարող անցնել. վայրն այդ ժայռոտ էր, զառիվեր եւ ջրերի պատճառով անանցանելի: Շրջանցելով այն, ես հասա մի հովիտ եւ ծունդ դնելով սկսեցի աղոթել առ Աստված ու խոստովանեցի մեղքերս: Եվ այն պահին, երբ աղոթքի մեջ էի, երկինքը բացվեց եւ տեսա այն կնոջը, ում ցանկացել էի: Նա երկնքից ողջունում էր ինձ եւ ասում՝ «Ողջ՝ ւյն, Հերմաս»: Նայելով նրան՝ ասացի. «Տիրուհի՝, ի՞նչ ես անում դու այտեղ»: Նա պատասխանում է ինձ. «Ես բերվել եմ այստեղ, որպեսզի Աստծո առաջ մերկացնեմ քո մեղքերը»: «Տիրուհի՝, ասում եմ ես, -մի՞թե դու ինձ պիտի մեղադրես»: «Ո՞չ, -ասում է նա, -բայց ունկնդրիր այն խոսքերը, որ պիտի ասեմ քեզ: Աստված, որ բնակվում է երկնքում, ոչնչեց է արարել բոլոր արարածներին ու բազմացրել հանուն իր սուրբ եկեղեցու. բարկանում է քեզ վրա, որ մեղանչել ես իմ հանդեպ»:

Ես, պատասխանելով նրան՝ ասում եմ. «Տիրուհի՝, եթե ես մեղանչել եմ քո հանդեպ, ապա ինչպե՞ս, որտե՞ղ, եւ ե՞րբ եմ քեզ որեւէ վատ խոսք ասել: Մի՞թե միշտ քեզ չեմ մեծարել որպես տիրուհու, արդյո՞ք միշտ քեզ չեմ հարգել որպես քրոջ: Ինչպե՞ս ես զրապատում ինձ»:

Այն ժամանակ նա ժպտալով ասաց ինձ. «Քո սրտում անմաքուր ցանկություն է ծագել: Մի՞թե չես մտածում, որ արդար մարդու համար արարավոր է նաեւ այն, որ նրա սրտում անմաքուր ցանկություն է ծնվում:

Այդ մեղք է նրա համար, եւ այն էլ՝ ծանր, քանի որ արդար մարդը արդարություն է խորհում: Եվ երբ նրա բոլոր խորհուրդները արդար են, նա անխոտոր դրան է ձգտում եւ երկնքում ունի Աստծո հաճությունը իր բոլոր գործերում: Իսկ նրանք, ովքեր արատավորն են խորհում իրենց սրտերում, իրենք իրենց վրա մահ ու գերություն են բերում, հատկապես նրանք, ովքեր սիրում են այս աշխարհը, շվայտանում են իրենց հարստության մեջ ու չեն սպասում գալիք բարիքներին. Նրանց հոգիները մեռնում են: Այդ անում են կասկածամիտները, որոնք Աստծո վրա հույս չունեն եւ խորտակում են իրենք իրենց ու իրենց կյանքի համար հոգ չանելով: Բայց դու աղոթիր առ Աստված ու Նա կրծշկի քո մեղքերը, եւ քո տան անդամներին:

2. Այս խոսքերն ասելիս երկինքները փակվեցին: Եվ ես վշտի ու համակ սարսափի մեջ էի, եւ ասում էի ինքս իմ մեջ. «Եթե ինձ այս մեղք է համարվում, ապա ինչպես կարող եմ փրկվել, կամ թողություն խնդրել Աստծուց իմ անթիվ մեղքերի համար: Ի՞նչ խոսքերով աղերսել Աստծուն, որ իմ հանդեպ ողորմած լինի»: Այն պահին, երբ ես մտորում ու դատողություն էի անում, քննարկում այս իմ սրտում, իմ առջեւ տեսաձյան նման ճերմակ բրդից մի մեծ ամբիոն: Եվ եկավ մի տարեց կին՝ շողափայլ հանդերձներով, ձեռքում մի գիրք, նստեց եւ ողջունեց ինձ. «Ողջույն, Հերմաս»: Եվ ես վշտով, արցունքով պատասխանեցի. «Ողջույն, Տիրուհի»:

Նա ասաց. «Ինչո՞ւ ես վշտացած, Հերմաս, դո՞ւ, որ համբերող ես, հանդարտ ու միշտ զվարթ»: Ես ի պատասխան ասում եմ նրան. «Տիրուհի, մի հիաքանչ կին հանդիմանեց ինձ, իբրեւ թե ես մեղանչել եմ իր դեմ»: Եվ նա ասաց ինձ. «Նման արարքը պիտի խորթ լինի Աստծո ծառային: Բայց չի՞ որ քո սրտում ցանկություն է ծագել նրա նկատմամաբ: Աստծո ծառաների համար լոկ այդպիսի մտածումն իսկ՝ մեղք է, քանի որ նման չար խորհուրդ չպիտի լինի Աստծո ծառայի մոտ, եւ մաքուր սիր-

տը չպիտի ձգտի վատ գործի, մանավանդ դու՝ Հերմա՛ս, որ միշտ հեռացել ես ամեն հանցավոր ցանկություններից, լցված պարզությամբ ու անոխակալությամբ»:

3. «Սակայն քո պատճառով չէ հատկապես, որ բարկանում է Տերը, այլ քո տան համար, որը ընկել է աղտեղության մեջ. Աստծո եւ իրենց ծնողների հանդեպ: Եվ դու, սիրելով քո զավակներին, չես հանդիմանել քո ընտանիքին եւ նրանց թույլ ես տվել, որ չափազանց անառականան: Հենց դրա համար էլ քեզ վրա բարկանում է Տերը: Բայց նա կրծշկի քո ընտանիքում գործած բոլոր նախկին անօրենությունները: Նրանց մեղքերի ու անօրենությունների պատճառով է, որ դու ճնշված ես այս աշխարհի գործերով: Սակայն Աստծո ողորմությունը գթացել է քեզ ու քո ընտանիքին եւ պիտի պահպանի քեզ փառքի մեջ: Դու մի՛ տատանվիր, այլ արիացի՛ր եւ հաստատի՛ր քո ընտանիքը: Ինչպես դարբինը, մուրճով աշխատելով հաղթահարում է գործը, ինչպես որ ուզում է, այդպես էլ ամեն օր ներշնչվող ուղիղ խոսքը կհաղթի ամեն չարի: Ուստի, մի՛ դադարիր քո զավակներին կրթելուց, քանի որ Աստված գիտի, որ նրանք ամբողջ սրտով կզղջան եւ կգրվեն կենաց գրքում»<sup>1</sup>: Ավարտելով այս խոսքը նա ասաց. «Ուզո՞ւմ ես լսել այն, որ պիտի կարդամ» ես ասացի նրան. «Ուզում եմ, տիրուհի»:

«Եվ այսպես լսի՛ր»: Ու բացելով գիրքը, նա կարդում էր վեհությամբ ինչ որ հրաշալի բան, որը ես չկարողացա պահել հիշողությանս մեջ, քանի որ խոսքերը զարհութելի էին, եւ մարդը չէր կարող տանել դրանք: Սակայն ամենավերջին խոսքերը ես հիշեցի, որովհետեւ քիչ էին եւ ուրախարար մեզ համար. «Ահա զորաց Աստվածը, որն իր աներեւույթ զորությամբ ու մեծագույն իմաստությամբ արարեց աշխարհը եւ արարածներին, վայելչություններով օժտեց իր մեծափառ խորհրդով եւ իր ամենազոր խոսքով հաստատեց երկինքը, ու ջրերի վրա հիմնեց երկիրը

Հմմտ. Առ Փիլիպեցիս Դ. Յ. նաեւ՝ Հայտնություն Հովհաննեսի հ. 15:

եւ իր ամենակարող զորությամբ հիմնեց իր Սուրբ եկեղեցին, որը եւ օր-  
հնեց: Նա կփոխի երկինքներն ու լեռները, բլուրներն ու ծովերը, եւ ամեն  
ինչ կհարթվի իր ընտրյալների համար, որպեսզի կատարվի խոստումը,  
որը նա տվել է իր մեծ փառքով եւ հանդիսավորությամբ. եթե նրանք  
պահեն Աստծո պատվիրանները, որ ստացել են հավատքով»:

4. Երբ նա ավարտեց ընթերցումը, վեր ելավ ամբիոնից, եւ եկան  
չորս պատանիներ ու ամբիոնը տարան դեպի արեւելք: Իսկ նա ինձ կան-  
չեց իր մոտ եւ դիպչելով կրծքիս, ասաց. «Քեզ դո՞ւր եկավ իմ ընթերց-  
վածը»: Ես ասացի նրան. «Տիրուհի, ամենավերջին խոսքերն ինձ դուր են  
գալիս, իսկ առաջինները սոսկալի էին ու ծանր»: Եվ նա ասում է ինձ.  
«Այս վերջին խոսքերը վերաբերվում են արդարներին, իսկ առաջինները՝  
ուրացողներին ու հեթանոսներին»:

Այն ժամանակ, երբ նա խոսում էր ինձ հետ, հայտնվեցին ինչ որ  
երկու մարդիկ, նրան առան իրենց ուսերին ու տարան այնտեղ, ուր տար-  
վել էր ամբիոն՝ դեպի արեւելք: Նա ուրախ հեռացավ, եւ հրաժեշտից  
առաջ ինձ ասաց. «Քաջալերվի՛ր, Հերմա՛ս»:

## ՏԵՍԻԼՔ ԵՐԿՐՈՐԴ

Հերմասի կանչը քարոզության, իր երեխանների ու բոլոր  
հավատացյալների ապաշխարության:

1. Երբ ես շրջում էի Կում տանող ճանապարհով, մոտավորապես  
նույն ժամանակին, ինչպես անցյալ տարի: Զբոսանքի ժամանակ հիշեցի  
նախորդ տեսիլքի մասին, եւ Հոգին ինձ կրկին հափշտակեց ու տարավ  
այն նույն տեղը, ուր եւ անցյալ անդամ: Հասնելով այնտեղ, ես ծունը  
իջա եւ սկսեցի աղոթել առ Աստված ու փառաբանել անունը նրա, որ նա  
ինձ արժանի արեց ու իմացրեց ինձ իմ առաջիկա մեղքերը: Եվ երբ ես վեր

<sup>1</sup> Հնուց ի վեր, նաեւ քրիստոնեական շրջանում, երկար ժամանակ օգտագործվել է անընդհատ գրության  
ձեւը, որտեղ բառերն իրարից տարանջատված չեն

ելա աղոթքից, տեսա իմ առաջ այն տարեց միանձնուհուն, որին հանդի-  
պել էի անցյալ անդամ: Նա զբոսնում էր ու կարդում ինչ-որ մի գիրք:  
Եվ նա ասում է ինձ. «Կարո՞ղ ես հայտնել Աստծո ընտրյալներին»: Ես  
պատասխանեցի. «Տիրուհի, այդքան շատ բան ես անկարող եմ հիշել, սա-  
կայն տուր ինձ գիրքը, ու ես կարտագրեմ»: «Վերցրո՛ւ, ասաց նա, եւ  
վերադարձրու այն ինձ»: Վերցնելով այն, ես հովտում մի տեղ առանձ-  
նացա ու արտագրեցի տառ առ տառ, քանի որ ես չէի կարողանում միտ-  
քը պարզել<sup>1</sup> Եվ երբ ես ավարտեցի գրքի արտագրությունը, հանկարծ այն  
իմ ձեռքից վերցվեց, բայց ում կողմից՝ ես չտեսա:

2. Տասնհինգ օր անց, որի ժամանակ ես պահեցողությունով շատ  
աղոթում էի Աստծուն, ինձ հայտնվեց գրվածքի իմաստը: Գրված էր հե-  
տեւյալը. «Հերմա՛ս, քո զավակները մեղանչել են Տիրոջ առաջ, անարգել  
նրան եւ մեծագույն անգուշությամբ դավաճանել են իրենց ծնողներին  
ու ծնողների դավաճանի համբավ ձեռք բերել: Դավաճանելով նրանց,  
նրանք չեն ուղղվել, այլ իրենց մեղքերին բարդել են անառակություն ու  
անհոգ պղծություններ, եւ այդպիսով լրացրել իրենց անօրենությունների  
չափը: Սակայն հաղորդիր այս խոսքերը բոլոր զավակներիդ ու կնոջը,  
որը քեզ համար պիտի քույր դառնա, <sup>1</sup> քանզի նա եւս չի զապում իր լե-  
զուն, որով մեղանչում է, բայց լսելով այս խոսքերը, նա կսանձի այն ու

1

ներում կդտնի այն բանից հետո, երբ հաղորդես նրան այս խոսքերը, որ Տերը պատվիրել է բացել քեզ: Այնժամ թողություն կլինի թե՛ նրանց մեղքերին, որ նրանք գործել են առաջներում, եւ թե՛ մինչեւ օրս մեղք գործած բոլոր սրբերի մեղքերին<sup>2</sup>, եթե ամբողջ սրտով ապաշխարեն ու իրենց սրտերից հեռացնեն կասկածները: Քանի որ Տերն իր փառքով երդվել է իր ընտրյալների համար<sup>3</sup>, որ եթե նրանցից մեկը այս կանխորոշված օրը<sup>4</sup> եւս շարունակի մեղք գործել, փրկություն չի ստանա, որովհետեւ արդարների քավությունը վերջ ունի<sup>5</sup> եւ բոլոր սրբերի համար որոշված են ապաշխարության օրերը, իսկ հեթանոսների համար ապաշխարություն կա մինչեւ վերջին օրը<sup>6</sup>: Ուստի, հայտնիր եկեղեցու առաջնորդներին որ արդարությամբ ընթանան իրենց ուղիով, որպեսզի կարողանան մեծամեծ փառքով լիովին ստանալ խոստացվածները: Եվ դուք որ արդարություն եք գործում, կայուն եղե՛ք, երկմիտ մի՛ եղեք, որպեսզի ձեր փոխադրումը լինի սուրբ հրեշտակների հետ<sup>7</sup>: Երանելի եք դուք, որ կհամբերեք որովհետեւ պիտի կրեք գալիք մեծ հալածանքները ու պիտի չուրանաք ձեր կյանքը, քանզի Տերը իր Որդիով երդվել է, որ Տիրոջն ուրացողները կորսայան են մատնում իրենց կյանքը: Այս հատկանի վերաբերում է նրանց, ովքեր պիտի ուրանան առաջիկա օրերում, իսկ նրանց նկատմամբ, որ ուրացել են առաջներում, նա իր մեծագույն գթասրտությամբ ողորմած է եղել»:

3. «Իսկ դու, Հերմաս, հիշաչար մի՛ եղիք քո զավակների անարդարությունների հանդեպ, եւ մի՛ լքիք քո քրոջըր, այլ հոգ տար, որ նրանք մաքրվեն նախկին մեղքերից: Նրանք խելքի կզան ճշմարիտ խոսքից, եթե դու նրանց հանդեպ ոխ չպահես, քանզի ոխակալությունը մահ է բերում, իսկ ներումը՝ հավիտենական կյանք: Իսկ դու Հերմա՛ս, այս աշխարհի շատ նեղություններ կրել ես քո ընտանիքի պատճառով, որովհետեւ դու ուշադրություն չես դարձրել, կարծես թե ամենեւին քեզ չեն վերաբերվել, եւ ընկղմվել քո սխալ ձեռնարկների մեջ: Բայց որ դու չես ու-

րացել կենդանի Աստծուն եւ քո պարզությունը ու մեծ ժուժկալությունը՝ քեզ կփրկեն, եթե հարատեւես դրանցում, եւ այս կփրկի բոլոր նրանց, ովքեր այս կերպ են գործում: Անմեղության ու պարզության մեջ ընթացողները ի գորու կլինեն ամեն չարի դեմ եւ կպահպանվեն հավիտենական կյանքի համար: Երանելի են արդարություն գործողները. նրանք հավետ չեն կորչի: Սակայն կասես՝ ահա վրա է հասնում մեծ հալածանքները: Եթե քեզ այդպես է թվում, ապա իմացի՛ր. Տերը մոտ է իրեն դիմողներին, ինչպես գրված է Եղաղի գրքում, որոնք մարդարություն էին անում անապատումօծ:

4. Քնած ժամանակ եղբայրնե՛ր, մի գեղեցիկ պատանի երեւացինձ ասելով՝ «Ինչ ես կարծում, ո՞վ էր այն տարեց միանձնուհին, ումից ստացար գիրքը»: Ես ասացի.«Սիրիլլան է»օ: «Սիրալվում ես, -ասում է, -նա Սիրիլլան չէ»: «Տե՛ր, ապա ո՞վ է նա»: Եվ նա ինձ ասաց. «Աստծո եկեղեցին է նա»: Ես հարցրի նրան. «Բայց ինչո՞ւ է նա ծեր»: Նա ասաց. «Որովհետեւ նա արարված է ամեն բանից առաջ եւ երկիրն էլ ստեղծվել է նրա համար»: Այնուհետեւ ես մի տեսիլք տեսա իմ տանը: Եկավ այն ծեր միանձնուհին եւ հարցրեց ինձ, թե ես արդեն տվի՞լ եմ գիրքը Եկեղեցու առաջնորդին: Ես պատասխանեցի. «Դեռ ո՞չ»: Եվ նա ասաց. «Լավ ես արել, որովհետեւ ես մի քանի խոսք ունեմ ավելացնելու: Երբ ես կավարտեմ իմ բոլոր խոսքերը, այն ժամանակ քո միջոցով կհաղորդվեն բոլոր ընտրյալներին: Դրա համար դու կգրես երկու գիրք, եւ մեկը կուղարկես կղեմասին, իսկ մյուսը՝ Գրափթայինք: Կղեմասը կուղարկի արտաքին քաղաքները, քանի որ այդ նրան է ընձեռնված, իսկ Գրափթան կհորդորի այրիներին ու որբերինիւ: Իսկ դու այն կկարդաս այս քաղաքում՝ Երեցների եւ Եկեղեցու առաջնորդի հետ»:

## ՏԵՍԻԼՔ ԵՐՐՈՐԴ

Եկեղեցին պատկերող աշտարակի շինությունը:

1. Իսկ մի անգամ, եղբայրնե՞ր, ինձ հայտնվեց հետեւյալ տեսիլքը: Այն բանից հետո, երբ ես բազում անգամներ պահք էի պահել եւ աղաջել Աստծուն, որ նա տար ինձ այն տարեց միանձնուհու միջոցով խոստացած հայտնությունը, այդ գիշեր հայտնվեց միանձնուհին եւ ասաց. «Քանի որ դու շատ ես խնդրում եւ ուզում ես ամեն բան իմանալ, ապա կդաս հովիտ ուզածդ տեղը, եւ մոտ վեցերորդ ժամին կհայտնվեմ քեզ եւ ցույց կտամ այն՝ ինչ որ քեզ պետք է տեսնել»: Ես հարցրի նրան. «Հովտի ո՞ր մասը գամ»: Նա ասաց. «Որտեղ ուզում ես»: Եվ ես գեղատեսիլ ու առանձնացած մի տեղ ընտրեցի: Բայց մինչեւ կսկսեի խոսել ու հայտնել նրան տեղը, նա ասաց ինձ. «Կդամ, ուր որ ուզում ես»: Եվ այդպիս, եղբայրներ, ես եկա հովիտ, որոշեցի ժամը եւ գնացի այն տեղը, որը նախապես ընտրել էի: Եվ տեսնում եմ մի նստարան, վրան վուշե բարձ դրված, իսկ թարձին փուփած էր քթանե ծածկոց: Տեսնելով այս պատրաստությունները, այն դեպքում, երբ ոչ ոք չկար այդ տեղում, ես ապչեցի, մազերս բիզ բիզ կանգնեցին. եւ սարսափը ինձ պատեց այն բանից, որ ես մենակ էի: Սակայն ուշքի գալով եւ մտաբերելով Աստծո փառքը, ես քաջալերվեցի՝ եւ ծունը դնելով՝ խոստովանեցի Աստծուն իմ մեղքերը, ինչպիս անցյալներում: Ահա եկավ տարեց միանձնուհին՝ վեց պատանիների հետ, որոնց մինչ այդ տեսել էի, եւ կանգնելով իմ ետեւում՝ լսում էր, թե ինչպիս եմ ես աղոթում ու մեղքերս խոստովանում Աստծուն: Եվ դիպչելով ինձ՝ նա ասաց. «Վե՛րջ տուր միայն քո մեղքերի համար աղոթելուն, աղոթիր նաեւ ծշմարտության համար, որպեսզի դրանից բաժին ստանաս քո տան համար»: Նա ինձ տեղիցս բարձրացրեց, եւ բռնելով ձեռքիցս, տարավ նստարանի մոտ եւ այն պատանիներին ասաց. «Գնացե՛ք եւ կառուցե՛ք»: Պատանիների հեռանալուց հետո, երբ մենք մենակ մնացինք,

նա ասաց ինձ. «Նստի՛ր այստեղ» ես ասացի նրան. «Տիրուհի, նախ թող երեցները նստեն»: «Ես քեզ ասում եմ, նստի՛ր», ասաց նա:

Երբ ես ուզում էի նստել իր աջ կողմում, նա թույլ չտվեց, այլ ձեռքով նշան արեց որ ես նստեմ ձախ կողմում: Երբ ես մտածմունքների մեջ ընկնելով վշտացա, որ նա թույլ չտվեց նստել աջ կողմում, նա ինձ ասաց. «Ինչո՞ւ ես վշտանում, Հերմա՛ս: Աջակողմյան տեղը պատկանում է նրանց, ովքեր արդեն գոհացրել են Աստծուն եւ տառապել են նրա անվան համար, քեզ դեռ շատ բան է պակաս, որպեսզի նստես նրանց հետ, բայց դու հարատեւիր քո պարզության մեջ, ինչպես այժմ ես անում եւ կնստես նրանց հետ, նույնպես եւ շատ շատերը, որ կգործեն նրանց գործերը ու կկրեն նրանց կրածները»:

2. Ես ասում եմ նրան. «Տիրուհի, ես կցանկանայի իմանալ ի՞նչ են նրանք կրել»: «Լսի՛ր, ասում է նա, արյունարբու գազաններ, խարազան, գնդան, խաչեր՝ հանուն նրա անվան: Դրա համար սրբության աջ կողմը նրանց է պատկանում եւ ամեն մեկին, ով կտառապի հանուն Աստծո անվան: Իսկ մնացածներին՝ ձախ կողմը: Դու շատ ես ուզում նստել աջ կողմում նրանց հետ, սակայն դու շատ տկարություններ ունես: Մաքրվիր քո տկարություններից, եւ նմանապես բոլոր աներկմիտները պետք է մինչ այն օրը մաքրվեն իրենց թուլություններից: Այս ասելուց հետո նա ուզում էր հեռանալ, բայց ես նրա ոտքերը ընկա եւ հանուն Տիրոջ խնդրեցի, որ ցույց տա խոստացված տեսիլքը: Եվ նա կրկին բռնելով իմ ձեռքից, վեր հանեց ու նստեցրեց նստարանի ձախ կողմում եւ, բարձրացնելով ինչ որ փայլուն գավազան ասաց ինձ. «Տեսնո՞ւմ ես այս մեծ աշխատանքը»: «Ոչինչ չեմ տեսնում, Տիրուհի՛»-ասում եմ նրան: «Մի՞թե քո առջեւ չես տեսնում այն մեծ աշտարակը, որը կառուցվում է ջրերի վրա՝ քառակուսի քարերից»: Իսկապես, կառուցվում էր քառակուսի մի աշտարակ այն վեց պատանիների կողմից, որ եկել էին նրա հետ: Հազարավոր ուրիշ այրեր քարեր էին բերում: Ոմանք քարերը հանում էին

խորքից, մյուսները՝ գետնի տակից եւ փոխանցում էին այն վեց պատահինքին, նրանք էլ ընդունում էին: Քարերը որոնք հանվում էին խորքից, անմիջապես տեղադրվում էին շինության մեջ, քանի որ նրանք հարթ էին եւ լավ էին հարմարվում մյուս քարերին, եւ այնքան քիչ էին նստում մեկը մյուսի վրա, որ անհնար էր նկատել նրանց միացման տեղերը: Ուստի՝ թվում էր, թե աշտարակը կերտված է մի քարից: Իսկ մյուս քարերը, որ բերվում էին գետնից, ոմանք մի կողմ էին դրվում, մյուսները տեղադրվում շինության մեջ, իսկ ոմանց փշուր և փշուր էին անում եւ նետում աշտարակից շատ հեռու: Արդ, շատ քարեր թափված էին աշտարակի շուրջը եւ չէին օգտագործվում շինության համար, քանի որ սրանցից որը ողորկ էր, որը ճեղքերով, իսկ որն էլ գունաթափ ու կլօր, եւ պիտանի չէին շինության համար: Եվ ես տեսա, թե ինչպես մյուս քարերը, որոնք նետվում էին աշտարակից հեռու, ընկնում էին ճանապարհի վրա եւ այնտեղ չմնալով, ճանապարհից դուրս էին գլորվում. ոմանք անապատ տեղ, ոմանք ընկնում էին կրակի մեջ ու այրվում, ոմանք էլ գլորվում էին ջրի եզրը, բայց չէին կարողանում ջուրն ընկնել, թեեւ ջանում էին գլորվել եւ մեջը ընկնել:

3. Այս ինձ ցույց տալուց հետո, ծեր միանձնուհին ուզում էր հեռանալ: Ես ասում եմ նրան. «Տիրուհի, ի՞նչ օգուտ ինձ տեսնել ու չիմանալ ի՞նչ է նշանակում այդ»: Նա պատասխանում է ինձ. «Դու հետաքրքասեր մարդ ես եթե ուզում ես իմանալ շինության իմաստը»: «Այո՛, տիրուհի՛, -ասում եմ ես, -որպեսզի հաղորդեմ եղբայրներին, եւ նրանք ուրախանան ու այդ լսելով փառակորեն Տիրոջը»: Եվ նա ասում է. «Շատերը պիտի լսեն, եւ լսելով ոմանք կուրախանան, իսկ ոմանք կողըքան: Սակայն վերջիններս էլ եթե լսելով ապաշխարեն, նույնպես կուրախանան: Արդ՝ այժմ լսիր աշտարակի բացատրությունը. ես ամեն բան կհայտնեմ քեզ, եւ այլեւս ինձ չանհանգստացնես հայտնություններ ինողելով, որովհետեւ այդ հայտնությունները սահման ունեն, որովհետեւ ավարտ-

վել են: Իսկ դու չես դադարում հայտնություններ պահանջելուց, որովհետեւ համառ ես: «Եվ այսպես, կառուցվող աշտարակը, որ տեսնում ես, ես եմ՝ եկեղեցինո, որը քեզ երեւացել է ինչպես այժմ, այնպես էլ առաջ: Հարցրու աշտարակի մասին, ինչ որ ուզում ես, եւ ես կհայտնեմ քեզ, որ դու ցնծաս սրբերի հետո»: Ես ասում եմ նրան. «Տիրուհի՛, եթե դու ինձ մի անգամ արժանի ես համարել հայտնելու ամեն բան, հայտնի՛ր»: Նա ասում է ինձ. «Ինչ որ հարկավոր է քեզ հայտնել, կհայտնվի, միայն թե սիրտդ Աստծո հետ լինի, չերկմտես ինչ էլ որ տեսնես»: Ես հարցրի նրան. «Տիրուհի՛, ինչո՞ւ է աշտարակը կառուցված ջրերի վրա»: Նա պատասխանում է. «Ես առաջ էլ էլ ասում, որ դու հետաքրքրասեր ես եւ ամեն ինչ մանրակրտորեն քննում ես, ահավասիկ փնտրելով կգտնես ճշմարտությունը: Դե, լսի՛ր, թե ինչու է աշտարակը կառուցված ջրերի վրա, քանի որ ձեր կյանքը փրկվել է ու պիտի փրկվի ջրի միջոցովք: Իսկ աշտարակը հիմնվել է Ամենակարող ու մեծափառ Անվան խոսքի միջոցով եւ կանգուն է Տիրոջ աներեւույթ կարողությամբ»:

4. Ես, ի պատասխան ասում եմ նրան. «Մեծ ու հրաշալի գործ է Տիրուհի՛. իսկ ովքե՞ր են այն վեց պատասխները, որ կառուցում են»: «Նրանք Աստծո առաջնաստեղծ հրեշտակներն են, որոնց հանձնել է Տերը ողջ իր արարածներին, որպեսզի բազմացնեն ու բարեկարգեն եւ կառավարեն իր արարածներին»: Իսկ ովքե՞ր են մյուսները, որ քարեր են բերում»: «Նրանք էլ են Աստծո սուրբ հրեշտակներ, սակայն առաջինները բարձր են հետիններից եւ սրանցից: Երբ կավարտվի աշտարակի շինությունը, սրանք՝ բոլորը միասին աշտարակի շուրջը կցնծան ու կփառակորեն Տիրոջը, որ պարտեց աշտարակի շինությունը»: Ես հարցրի նրան. «Տիրուհի՛, ես կուզենայի իմանալ որոնք են քարերի տարբերություններն ու իմաստը»: Եվ նա ինձ պատասխանեց. «Մի՞թե դու մյուսներից ավելի լավն ես, որ այդ հայտնվի քեզ: Մյուսները բարձր ու լավ են քեզնից, որոնց հարկ էր հայտնել այս տեսիլքները: Սակայն, որպեսզի փառակոր-

վի Աստծո անունը, քեզ դրանք հայտնել են եւ էլի պիտի հայտնվեն՝ կասկածամիտների, թերահավատների համար, որոնք իրենց սրտերում խորհում են, թե կլինի՞ այդ, թե՞ ոչիւ: Ասա նրանց, որ այդ ամենը ճշմարիտ է եւ որ ոչ մի սուտ բան չկա, եւ ամեն բան հաստատ ու ամուր հիմնավորված է»:

5. Արդ, հիմա լսիր շինության մեջ օգտագործվող քարերի մասին: Քառակուսի ու սպիտակ քարերը, որոնք իրար հետ լավ են հարմարվում՝ առաքյալներն են, եպիսկոպոսներն են վարդապետներն ու սարկավագներն են, որոնք ընթացել են Աստծո սուրբ ուսման մեջ, հսկել են եւ ուսուցանել. եւ սրբորեն ու անարատորեն ծառայել Աստծո ընտրյալներին: Ինչպես հանգուցյալները, նույնպես էլ մինչ այժմ ողջերը: Եվ քանի որ նրանք միշտ համերաշխ ու միաբան են եղել, խաղաղություն են ունեցել միմյանց միջեւ, դրա համար էլ աշտարակի շինության մեջ եւս լավ են իրար միանում իրենց կցակապերով: Իսկ խորքից հանած եւ շինության մեջ դրված քարերը, որոնք կցակապերով են հարմարվում մնացած քարերին, որոնք արդեն մեռել են տառապելով Տիրոջ անվան համար. արդեն շինության մեջ մտածը նրանք են»:

«Տիրուհի, ես ուզում եմ իմանալ այն մյուս քարերի նշանակությունը, որոնք դուրս բերվեցին հողից»: Նա ասաց. «Նրանք, որ առանց մշակվելու դրվում են աշտարակի հիմքում, այն մարդիկ են որոնց Աստված հավանել է այն բանի համար, որ ուղիղ են մնացել Աստծո առաջ եւ կատարել են Նրա պատվիրանները: Իսկ նրանք, որ բերվում ու տեղադրվում են աշտարակի շինության մեջ, նորադարձներն ու հավատարիմներն են: Նրանք Հրեշտակների կողմից համոզվել են, որ բարություն գործեն, եւ դրա համար նրանց մեջ չարություն չկա»: «Իսկ ովքե՞ր են այն քարերը, որ մի կողմ էին դրվում ու դիզվում էին աշտարակի մոտ»: Նա ասաց. «Այդ նրանք են, որ մեղք են գործել, բայց ցանկանում են ապաշխարել, դրա համար էլ նրանք նետվել են աշտարակից ոչ հեռու եւ պի-

տանի կլինեն, եթե ապաշխարեն: Ուստի, ապաշխարել ցանկացողները հավատով հաստատուն կլինեն, եթե միայն ապաշխարեն այժմ, քանի դեռ կառուցվում է աշտարակը: Որովհետեւ, երբ ավարտվի շինությունը, նրանք արդեն տեղ չեն ունենա, ուր կկարողանային տեղավորվել, այլ մերժված լինելով, միայն ընկած կլինեն աշտարակի մոտ:

6. «Ուզո՞ւմ ես իմանալ, թե ովքեր են այն քարերը, որոնք փշուր և փշուր արվեցին ու նետվեցին աշտարակից հեռու»: «Ուզում եմ, տիրուհի», -ասում եմ ես: «Նրանք, (ըստ էության), անօրենության զավակներ են, որոնք կեղծավորությամբ են հավատացել, եւ չեն հեռացել ամեն տեսակ ամբարշտություններից: Դրա համար էլ նրանք փրկություն չունեն, քանի որ շինության համար պիտանի չեն իրենց անօրենությունների պատճառով: Սրանք փշուր և փշուր են արվել ու հեռու են նետվել Տիրոջ բարկության պատճառով, այն բանի համար, որ անարգել են իրեն: Իսկ մյուսները, որ դու տեսար, մեծ քանակությամբ դիզված ու շինարարության մեջ չօգտագործվող քարերից, անողորկները իրականում նրանք են, որ ճանաչել են ճշմարտությունը, բայց չմնացին դրա մեջ, հեռացել են եւ սրբերի հետո չփման մեջ չեն գտնվում, դրա համար պիտանի չեն: Ճեղքերով քարերը իրականում նրանք են, որոնք իրենց սրտերում թշնամություն ունեն միմյանց հանդեպ, խաղաղություն, համերաշխություն չունեն, միավորվելիս՝ նրանք հաշտ են, սակայն երբ իրարից բաժանվում են, չարությունը մնում է իրենց սրտերում: Այդ այն ճեղքերն են, որ ունեն քարերը: Իսկ կարճեցված քարերը նրանք են, որոնք թեեւ հավատացել են, եկել, սակայն դեռ շատ անարդարություններ ունեն. դրա համար էլ կարճ են ու ոչ ամբողջական: «Տիրուհի՝ իսկ ովքե՞ր են սպիտակ ու կոր քարերը, որ չեն մտնում աշտարակի շինության մեջ»: Նա ինձ պատասխանեց. «Մինչեւ ե՞րբ ես դու մնալու այդքան անմիտ ամեն ինչի մասին հարցնում ես, բայց ոչինչ չես հասկանում: Այդ նրանք են, որոնք հավատք ունեն, բայց եւ ունեն այս աշխարհի հարստությունները, եւ

երբ կսկսվեն հալածանքները, նրանք իրենց հարստության ու շահի համար կուրանան Աստծուն»: Ես դրա համար ասում եմ նրան. «Իսկ նրանք ե՞րբ հաճո կլինեն Տիրոջը»: «Երբ հարստությունը, որ միսիթարում է նրանց, կկտրվի եւ կհեռացվի նրանցից, այն ժամանակ նրանք պիտանի կղառնան շինության համար: Քանի որ, եթե կլոր քարը չհատվի եւ նրանից չհեռացվի ինչ որ բան, չի կարող քառակուսի լինել. այդպես էլ այս աշխարհի հարուստները, եթե չհատվի չհեռացվի նրանց հարստությունները, չեն կարող հաճո լինել Տիրոջը: Ամենից առաջ այդ պետք է իմանաս ինքդ քո փորձից. երբ դու հարուստ էիր՝ օգտակար չէիր, իսկ այժմ օգտակար ես ու պիտանի կյանքի համար, եւ դու ինքդ էլ այդ քարերի թվում էիր»:

7. «Մյուս քարերը, որոնց տեսար, նետվում էին աշտարակից հեռու եւ գլորվում էին ճանապարհի վրա, ու ճանապարհից էլ գլորվում էին անապատ տեղեր, նրանք են, որ թեեւ դարձի են եկել, սակայն իրենց երկմտության պատճառով թողել են ճշմարիտ ուղին, կարծելով, թե կարող են գտնել ավելի լավ ճանապարհ: Բայց նրանք մոլորված են ու թշվառություն են քաղում, թափառելով անապատի ճանապարհներով: Իսկ այն քարերը, որ ընկնում էին կրակի մեջ ու այրվում, նրանք են, որոնք հավիտյան հեռացել են Աստծուց, եւ իրենց կատարած հանցավոր ցանկությունների պատճառով, մտքներով չի էլ անցնում ապաշխարենք: »Իսկ ո՞ւմ են պատկերում այն քարերը, որ ընկնում էին ջրերի մոտ, բայց չէին կարողանում գլորվել ջուրը»: «Այդ նրանք են, որ լսել են խոսքը եւ ուզում են մկրտվել, բայց հիշելով ճշմարտության սրբությունը, խուսափում են ու նորից քայլում են իրենց չար ցանկություններով»: Այդպիսով, նա ավարտեց աշտարակի բացատրությունը: Բայց ես տակավին համառելով, հարցրեցի նրան, թե՝ «ապաշխարություն կա՝ այն քարերի համար, որոնք դեն են նետվել ու աշտարակի շինության համար պիտանի չեն եղել եւ արդյոք տեղ կունենա՞ն նրանք այս աշտարակում, թե՝

ոչ»: Նա պատասխանեց. «Նրանց համար ապաշխարության հնարավորություն կա, բայց այս աշտարակում տեղ ունենալ չեն կարող: Նրանք կտեղադրվեն ուրիշ, ավելի ստորին տեղում, այն էլ այն ժամանակ, երբ կտառապես, եւ կլրանան նրանց մեղքերի օրերը: Եվ այն բանի համար, որ ընդունել են ճշմարիտ խոսքը՝ կտեղափոխվեն: Եվ այն գեաքում նրանք կազատվեն իրենց պատիժներից, եթե սրտերում հիշեն իրենց հանցավոր գործերը, որ կատարել են իրենք եւ ապաշխարեն: Եթե նրանք չսթափվեն, իրենց սրտերի համառության պատճառով չեն փրկվի:

8. Երբ ես դադարեցի նրան այս ամենի մասին հարցնելուց, նա ինձ ասաց. «Կցանկանայի՞ր այլ բաներ տեսնել»: Եվ քանի որ շատ էի ուզում տեսնել, ուրախությունս արտահայտվեց դեմքիս վրա: Նայելով ինձ, նա ճպտաց ու ասաց. «Տեսնո՞ւմ ես այն յոթ կանանց, աշտարակի շուրջը»: «Տեսնում եմ, Տիրուհի», ասում եմ ես: «Այս աշտարակը, ասում է նա, Տիրոջ Հրամանով, նրանց միջոցով է պահպում: Իսկ արդ, լսիր նրանց գործունեությունների մասին: Նրանցից առաջինը, որն այն պահում է ձեռքերով, անվանվում է Հավատ: Նրա միջնորդությամբ փրկվում են Աստծո ընտրյալները: Մյուսը որ գոտենորված է եւ առնական է գործում՝ կոչվում է Պահեցողություն. նա Հավատքի դուստրն է: Եվ ով որ հետեւ նրան, երանելի կլինի իր կյանքում, քանի որ, եթե զսպի իրեն ամեն մի չար ցանկություններից, ապա հավիտնական կյանք կժառանգի»: «Տիրուհի, իսկ ովքե՞ր են մյուս հինգը», ասում եմ ես: «Ամեն մեկը մյուսի դուստրն է: Մեկը անվանվում է Պարզություն, մյուսը՝ Անմեղություն, երրորդը՝ Համեստություն, չորրորդը՝ Գիտություն, հինգերորդը՝ Սեր: Ուստի, երբ դու կկատարես նրանց մոր գործերը, կկարողանաս եւ մյուսները պահել»: «Տիրուհի, կուգենայի իմանալ, թե նրանցից յուրաքանչյուրը ի՞նչ ուժ ունի»:

«Լսի՛ր, ասում է նա, նրանք հավասարագոր են եւ կապված են իրար հետ ու հետեւում են մեկը մյուսին՝ ըստ իրենց ծննդյան հաջորդա-

Հանության: Հավատքից ծնվում է պահեցողությունը, պահեցողությունից՝ պարզությունը, պարզությունից՝ անմեղությունը, անմեղությունից՝ համեստությունը, համեստությունից՝ գիտությունը, գիտությունից՝ սերը: Նրանց գործերն ողջախոհ են, առաքինի ու սուրբ, ու ով որ կծառայի նրանց եւ ի զորու կլինի կատարելու նրանց գործերը, նա աշտարակում, Աստծո սրբերի հետ, հանգրվան կունենա»: Ես նրան հարցրի ժամանակի մասին. «Արդյո՞ք ավարտին չի հասել այն»: Եվ նա բարձրաձայն բացականչեց. «Անմիտ մարդ, մի՞թե դու չես տեսնում, որ աշտարակը տակավին շարունակվում է կառուցվել: Երբ կավարտվի աշտարակի շինությունը, այն ժամանակ էլ վերջը կլինի. Եւ այն շուտով կավարտվի: Ինձանից այլեւս ոչինչ չհարցնես: Այս հիշեցումը եւ ձեր սրտերի նորոգումը, բավական են քեզ ու բոլոր սրբերի համար: Սակայն միայն քեզ համար չէ այս բացահայտված, այլ՝ որ դու այս ամենը հաղորդես բոլորին: Եվ այսպես, Հերմա՛ս, երեք օրվա ընթացքում դու պետք է հասկանաս հետեւյալ խոսքերը, որ պիտի ասեմ քեզ, որպեսզի հայտնես ի լուր սրբերի ականջներին, որ այն լսելով ու կատարելով, նրանք մաքրվեն իրենց անօրենություններից. Եւ դու ինքդ էլ նրանց հետ»:

9. «Ինձ լսե՛ք, զավակներս, ես Տիրոջ ողորմությամբ մեծացրել եմ ձեզ անսահման պարզության, անմեղության ու առաքինության մեջ: Եվ այդ ճշմարտությունը թափեցի ձեր վրա, որպեսզի դուք արդարանաք եւ մաքրվեք ամեն անօրենությունից ու անարդարությունից, բայց դուք չեք ուզում հրաժարվել ձեր անարդարություններից: Եվ արդ, ինձ լսեցե՛ք. միմյանց հետ խաղաղություն ունեցե՛ք, հսկեցե՛ք ուշադիր մեկդ մյուսին. փոխարդաբար սատարեք միմյանց եւ Աստծո ստեղծածներից մեն և մենակ մի՛ օգտվեք, այլ առատաձեռն բաժանեք նրանց, ովքեր կարիքի մեջ են: Ոմանք առատ կերակուրներից իրենց մարմիններին տկարություն են պատճառում եւ հյուծում են այն: Իսկ սնունդ չունեցողների մարմինները նույնպես հյուծվում են այն պատճառով, որ չունեն բավարար սնունդ.

Եւ մեռնում են նրանց մարմինները: Նման անժուժկալությունը վնասակար է ձեզ, որ ունեք եւ չեք կիսվում կարիքավորների հետ: Մտածե՛ք վերահաս դատաստանի մասին: Դուք, որ մյուսներից առավել եք հարստությամբ, փնտրե՛ք եւ գտե՛ք կարիքավորներին, քանի դեռ աշտարակի շինությունը չի ավարտվել: Քանի որ հետո, երբ ավարտվի աշտարակը, թե եւ կցանկանաք բարեգործություն անել, բայց այլեւս հնարավորություն չեք գտնի:

Այսպիսով, դո՛ւք, որ հապատանում եք ձեր հարստություններով, տեսե՛ք, որ կարիքից տառապղները չհառաչենո. այլապես նրանց հառաչը կհասնի Տիրոջը, եւ դուք ձեր գանձերով աշտարակի դներից դուքս կհանվենք: Ասում եմ այժմ, ձեզ՝ Եկեղեցու ղեկավարներիդ, որ նախագահում եք, չարագործների նման մի եղեք: Զարագործները գոնե իրենց թույնը կրում են սրվակներում, իսկ դուք ձեր ղեղերն ու թույնը կրում եք ձեր սրտերում. Եւ չեք ցանկանում մաքրել ձեր սրտերը ու մաքուր սրտերով միավորվել համախունությամբ, որպիսզի ողորմություն գտնեք Մեծ Թագավորից: Զավակներս, տեսե՛ք, որ այդպիսի երկպառակությունները ձեզ չզրկեն կյանքիցը: Ինչպե՞ս եք դուք ցանկանում ուսուցանել Աստծո ընտրյալներին, երբ ինքներդ եք անուս: Ուստի, ուսուցանե՛ք միմյանց եւ միաբան եղեք, որպեսզի ես կարողանամ ուրախությամբ կանգնել ձեր Հոր առջեւ, եւ հաշվետու լինել Աստծո մոտ բոլորիդ համար»:

10. Երբ նա վերջացրեց ինձ հետ խոսելը, այն վեց պատանիները, որ կառուցում էին, եկան եւ նրան տարան աշտարակից ներս, իսկ մյուս չորսը վերցրին նատարանը եւ այն նույնպես տարան աշտարակից ներս: Սրանց դեմքերը ես չուսաս, որովհետեւ շրջված էին մյուս կողմը: Երբ նա հեռանում էր, ես խնդրեցի նրան բացատրել ինձ այն երեք կերպարանքների խորհուրդը, որոնցով նա երեւացել էր ինձ: Բայց նա ասաց. «Այդ մասին դու պետք է ուրիշին հարցնես, որ բացատրի քեզ»: Իսկ նա եղբայրներ, երեւացել է ինձ անցյալ տարվա առաջին տեսիլքում, շատ ձեր էր եւ ամբիոնում նա-

տած: Երկրորդ տեսիլքում նրա գեմքը երիտասարդ էր, իսկ մարմինն ու մազերը՝ ծեր. եւ նա ինձ հետ զրուցում էր կանգնած, եւ ավելի զվարթ էր, քան առաջ: Իսկ երրորդ տեսիլքում նա ամբողջովին երիտասարդ էր ու գեղեցկադեմ, եւ միայն մազերն էին ծեր: Նա լիովին ուրախ էր եւ նստած էր նստարանին: Այս մասին մտածելիս ես շատ էի վշտանում, մինչեւ որ ստացա հետեւյալ հայտնությունը: Գիշերվա երազում ես տեսա այն միանձնուհուն, եւ նա ինձ ասաց. «Ամեն մի աղոթք խոնարհության կարիք ունի. դրա համար ծոմ պահիր եւ Տիրոջից կստանաս խնդրվածքոյ»: Այսպիսով, ես մի օր ծոմ պահեցի, եւ նույն գիշեր ինձ հայտնվեց մի երիտասարդ ու ասաց. «Ի՞նչ ես այդքան հաճախ հայտնություն խնդրում քո աղոթքներում: Տե՛ս, որ շատը ցանկանալով, չվնասես մարմինդ: Այսքան հայտնություններն էլ բավական են քեզ: Կարողանա՞ս արդյոք, քո տեսածներից ավելի մեծ հայտնություններ տեսնել»: Ես պատասխանեցի նրան. «Տե՛ր, ես միայն մի բան եմ խնդրում, որ ինձ տրվի միանձնուհու երեք կերպերի ամբողջական բացարձությունը»: Նա ասաց ինձ. «Մինչեւ երեք եք այսքան անհամացող լինելու: Զեր կասկածներն են ձեզ անհամացող դարձնում, որովհետեւ առ Աստված ուղղված սրտեր չունեք»: Ես պատասխանեցի նրան. «Քեզանից այդ մասին մենք ավելի ստույգ կիմանանք»:

11. «Լաի՛ր, ասում է նա, կերպարանքների վերաբերյալ, որոնց մասին խնդրում ես: Ինչո՞ւ միանձնուհին առաջին տեսիլքում քեզ երեւաց ծերացած ու ամբիոնին նստած: Որովհետեւ ձեր հոգին ծերացած է ու թուլացած, եւ այլեւս ուժը չունի ձեր մեղքերից ու սրտերի երկմտանքներից: Քանզի ինչպես ծերերը, որ ուժերի վերականգման հույս չունեն, մահճում հանդստանալուց բացի, ուրիշ ոչինչ չեն ցանկանում, այդպես էլ դուք՝ ծանրաբեռնված այս աշխարհի զբաղմունքներով, ընկել եք անհոգության մեջ եւ ձեր հույսերը կապված չեն Տիրոջ հետ, ձեր մտքերը զառամել են, եւ դուք ծերացել եք ձեր վշտերից»: «Տե՛ր, ես ցանկանում եմ իմանալ, թե ինչո՞ւ էր նա նստած ամբիոնին»: «Որովհետեւ, պատաս-

խանեց նա, ամեն ուժասպառ նստում է նստարանին իր տկարության պատճառով, որպեսզի նրա թուլացած մարմինը նեցուկ ունենա: Ահա քեզ առաջին տեսիլքի խորհուրդը»:

12. «Երկրորդ տեսիլքում դու նրան տեսար ոտքի վրա կանգնած, երիտասարդացած գեմքով եւ առավել զվարթ, քան առաջ, սակայն ծերացած մարմնով ու մազերով: Լսիր այս առակը», ասում է նա: «Եթե մի մարդ խիստ ծերանա եւ հուսահատվի տկարության ու աղքատության պատճառով, բացի կյանքի իր վերջին օրվանից ուրիշ ոչ մի բան չի սպասում: Բայց հանկարծ նրան ժառանգություն է թողնվում: Լսելով այդ մասին, նա վեր է ցատկում եւ զվարթանալով լցվում է ուժով, եւ այլեւս չի պառկում, այլ ոտքի է ենում ու նախկին գործերից կոտրված նրա հոգին կրկին նորոգվում է: Եվ նա այլեւս չի նստում, այլ գործում է խիզախորեն: Այդպես էլ եղավ եւ ձեզ հետ, երբ դուք լսեցիր հայտնության մասին, որն Աստված հայտնեց ձեզ: Տերը ձեզ գթաց եւ նորոգեց ձեր հոգիները. եւ մի կողմ դրեցիր ձեր տկարությունները, լցվեցիր ուժով ու զորացաք հավատքով. եւ Տերը, տեսնելով ձեր զորությունը ուրախացավ: Դրա համար նա ձեզ ցույց տվեց աշտարակի շինությունը, եւ ուրիշ բաներ էլ ցույց կտա, եթե ամբողջ սրտով խաղաղություն ունենաք միմյանց հետ»:

13. «Երրորդ տեսիլքում դու նրան տեսար որ դեռ առավել երիտասարդ էր, գեղեցիկ ու զվարթ, եւ նրա գեմքը պայծառ էր: Ինչպես, երբ մի սգավորի մոտ բարի ավետարեր է դալիս, նա իսկույն մոռանում է իր նախկին վիշտը եւ ուրիշ ոչ մի բանի մասին չի մտածում, բացի իր ստացած բարի լուրից, նա սրտապնդվում է, ու նրա հոգին ստացված ուրախությունից նորոգվում է: Ճիշտ այդպես, իմանալով այսքան բարի բաներ, դուք նույնպես ձեր հոգիներին նորոգություն ստացաք: Իսկ այն, որ դու նրան տեսար նստարանին նստած, հաստատուն վիճակ է նշանակում, քանի որ նստարանը չորս ոտք ունի եւ կայուն է կանգնած, ինչպես

աշխարհն էլ է պահպանվում չորս տարերքներով։ Ուստի եւ նրանք, որ լիովին ու ամբողջ սրտով կապաշխարհն՝ նորից կերիտասարդանան, կհաստատվեն եւ կմնան։ Այժմ դու ունես հայտնության լրիվ բացատրությունը։ Այլեւս ոչինչ չհարցնես հայտնության վերաբերյալ, իսկ եթե որեւէ բան պետք լինի, քեզ կհայտնվի»։

### ՏԵՍԻԼՔ ԶՈՐՈՐԴ

Քրիստոնյաների գալիք հալածանքների մասին։

1. Զորբորդ տեսիլքը, որ տեսա, եղբայրնե՛ր, նախորդից քսան օր անց, գալիք հալածանքների կերպարն էր։ Ես գնում էի Կամպանյան ճանապարհի մերձակա դաշտով։ Մեծ ճանապարհից մինչեւ դաշտը մոտ տասը ստագիախ էր եւ այս տեղով ճանապարհ հազվագյուտ էր լինում։ Միայնակ զբոսնելով, ես աղերսում էի Տիրոջը, որ նա հաստատի այն հայտնություններն ու տեսիլքները, որ տպել էր իր սուրբ Եկեղեցու միջոցով։ Որ զորացնի ինձ եւ ապաշխարություն շնորհի իր բոլոր ծառաներին, որոնք գայթակղզել են, որպեսզի փառավորվի Նրա մեծ ու պատվական անունը, որ ինձ արժանի է համարել ցույց տալ իր հրաշքները։ Եվ այն ժամանակ, երբ ես փառաբանություն ու գոհություն էի մատուցում Նրան. ասես մի ձայն ինձ պատասխանեց. «Զերկմտե՛ս, Հերմաս»։ Ես սկսեցի ինքս ինձ մտածել ու ասել. «Ինչո՞ւ Երկմտեմ, երբ այսքան զորացած եմ Աստծո կողմից եւ հրաշալի գործեր եմ տեսել»։ Ես մի փոքր առաջ անցա ու տեսա եղբայրներ, մինչեւ Երկինք բարձրացող փոշի, եւ ասում եմ ինքս ինձ. «Մի՞թե անասուններ են անցնում ու փոշի բարձրացնում»։ այն ինձանից մոտ մեկ ստաղիա հեռավորության վրա էր։ Քանի որ փոշու ամպը ավելի ու ավելի էր թանձրանում, ես սկսեցի կարծել, թե այն ինչ որ գերբնական բան է։ Հետո արեւը մի փոքր դուրս եկավ, եւ ես տեսա կետածկան նման մի հսկա հրեշի. Նրա երախից հրե մորեխներ էին դուրս դալիս։ Այդ գաղանը մոտ հարյուր ֆութ երկարություն ուներ, իսկ

գլուխը նման էր կավե անոթի։ Եվ սկսեցի լաց լինել ու թախանձել Տիրոջը, որ փրկի ինձ դրանից։ Հետո հիշեցի այն խոսքերը, որ լսել էի՝ «Զերկմտե՛ս, Հերմաս»։ Եվ այսպես, եղբայրնե՛ր լցվելով առ Աստված հավատքով ու հիշելով Նրա կողմից ինձ տրված զարմանալի գործերը, ես անվախորեն գնացի գեպի գաղանը։ Իսկ գաղանը մոնչալով այնպիսի թափով էր մոտենում, որ հարձակման դեպքում կարող էր քաղաք ավերել։ Ես մոտեցա նրան, եւ այդքան հսկա գաղանը փուլեց գետնին ու բացի լեզվից, ոչինչ չէր ցույց տալիս. եւ ամբողջ այդ ընթացքում, երբ ես անցնում էի նրա մոտով, նա չշարժվեց։ Այդ գաղանը իր գլխի վրա չորս գույն ուներ՝ սեւ, հետո՝ կարմիր կամ արնագույն, հետո՝ ոսկեգույն, եւ վերջապես՝ սպիտակ։

2. Այնուհետեւ, երբ ես անցա գաղանի կողքով եւ մոտ երեսուն ֆուտ հեռացա, ինձ հանդիպեց զուգված մի կույս, ասես դուրս եկած ամուսնական առագաստից՝ ճերմակ հողաթափերով, մինչեւ ճակատը ծածկված ճերմակ զգեստներով, իսկ քղամիդը ծածկոց էր նրա համար, եւ ճերմակ էին նրա մազերը։ Նախկին տեսիլքներից ես գլխի ընկա, որ այդ եկեղեցին է, եւ ուրախացա։ Նա ողջունեց ինձ. «Ողջույն քեզ, մա՛րդ»։ Եվ ես նրան ողջունելով պատասխանեցի. «Ողջույն Տիրուհի»։ Ի պատասխան նա ասում է ինձ. «Քեզ ոչինչ չհանդիպե՞ց, մա՛րդ»։ Ես ասում եմ նրան. «Տիրուհի, ինձ մի այնպիսի գաղան հանդիպեց, որը կարող էր Երկրներ ոչնչացնել, սակայն Աստծո զորությամբ եւ Նրա մեծագույն ողորմությամբ ես փրկվեցի գրանից»։ «Դու լավ ես փրկվել-ասում է նա, -որպէս հետեւ ապավինել ես Տիրոջը եւ սիրտդ բացել Նրա առջեւ, հավատալով որ ուրիշ ոչ մի բանի միջոցով չէս կարող փրկվել, բացի Նրա մեծ ու փառագոր Անունից։ Դրա համար Տերն ուղարկեց գաղանների վրա կարգված իր Հրեշտակին, որի անունն է Հետրին. եւ նա փակեց նրա երախը, որ քեզ չխժուի։ Մեծ փորձանքից դու խուսափեցիր հավատքիդ շնորհիվ, քանի որ

\* Ստեղծագործ, կազմակերպող ուժ՝ զորություն (թարգմանչի ծանոթագրություն)։

գազանի տեսքից չերկմտեցիր: Ուրեմն, գնա՛ եւ ի լուր Աստծո բոլոր ընտրյալներին հայտնիր Նրա ամենամեծ գործերը եւ ասա նրանց, որ այս գազանը վերահաս մեծ հալածանքների նախատիպարն է: Ուստի, եթե պատրաստվեք եւ Տիրոջ առջեւ ամբողջ սրտով ապաշխարեք, կարող էք դրանից փրկվել, եթե ձեր սիրտը լինի մաքուր ու անարատ, եւ ձեր կյանքի մնացած օրերում անխոտոր ծառայեք Աստծուն: Զեր հոգսերը թողեք Տիրոջը եւ նա կրծշկի դրանքօ: Դուք՝ երկմիտներդ, հավատացե՛ք Աստծուն, որ նա ամենազոր է: Նա կարող է ձեզնից իր բարկությունը հեռացնել եւ իսարազան ուղարկել երկմիտների վրա: Վա՛յ նրանց, որ կմսեն այս խոսքերն ու կարհամարհեն. լավ կլիներ նրանց, եթե անդամ ծնված չլինեինք անդամ»:

3. Ես նրան հարցրեցի այն չորս գույների մասին, որ գազանն ուներ իր գլխին: Եվ նա պատասխանեց ինձ. «Դու կրկին հետաքրքրվում ես հարցնելով նման բաների մասին»: «Այո, Տիրուհի՛, -ասացի ես, -բացատրիր դրանց իմաստը»: «Լսի՛ր, -ասում է նա, -սեւ գույնը խորհրդանշում է աշխարհը, ուր ապրում եք դուք, հրե արնագույն՝ որ այս աշխարհը պիտի կործանվի կրակի ու արյան միջոցով, իսկ ոսկեգույն մասը՝ դուք եք, որ փախչում եք այս աշխարհիցիս: Քանզի, ինչպես ոսկին կրակով է փորձվում եւ դառնում պիտանի, այդպես էլ փորձվում եք եւ դուքշ, որ ապրում եք նրանց մեջու: Նրանք, որ հաստատուն կմնան ու կփորձվեն դրանցով. կմաքրվեն: Եվ ինչպես ոսկին է թողնում իր անմաքրությունը, այնպես էլ դուք կթողնեք ձեր բոլոր հոգսերն ու վշտերը, կմաքրվեք եւ պիտանի կլինեք աշտարակի շինության համար: Սպիտակ մասը՝ գալիք դարն է, երբ պիտի ապրեն Աստծո ընտրյալները, որովհետեւ անարատ ու մաքուր պիտի լինեն նրանք, ովքեր Աստծո կողմից ընտրված են հավիտենական կյանքի համար: Այսպիսով, մի՛ դադարիր սրբերի ականջներին այս ասելուց: Արդ, դուք ունեք դալիք փորձությունների խորհրդանիշը: Եթե ուզեք, այն ոչինչ կլինի ձեզ համար: Հիշեցե՛ք ձեզ պատվիրածները:

Այս ասելով նա հեռացավ, եւ ես չտեսա թե նա ուր գնաց, երբ աղմուկ բարձրացավ ու ես սարսափած շրջվեցի, կարծելով թե այն գազանն է մոտենում:

### ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ՆԱԽԱԲԱՆ

Երբ ես տանն աղոթում էի եւ նստած էի մահճին, ներս մտավ պատկառելի տեսքով մի մարդ՝ հովի հագուստով, սպիտակ թիկնոցով, ուսին պայուսակ եւ ձեռքին գավազան: Նա ինձ ողջունեց, ես նույնպես պատասխանեցի նրան ողջույնով: Նա իսկույն նստեց կողքիս եւ ասաց. «Ես ուղարկված եմ սրբազնագույն հրեշտակի կողմից, որպեսզի կյանքիդ մնացած օրերում բնակվեմ քեզ հետա»: Ինձ թվաց, թե նա գայթակղեցնում է ինձ, եւ ասացի նրան. «Իսկ ո՞վ ես դու: Քանի որ ես ճանաչում եմ նրան, ում որ հանձնարարված եմ»: Նա ասում է ինձ. «Զե՞ս ճանաչում ինձ»: «Ո՛չ, -ասում եմ ես»: «Ես, -ասում է նա, -հենց այն հովիկն եմ, որին դու հանձնարարված ես»: Այն ընթացքում, քանի դեռ նա խոսում էր, նրա կերպարանքը փոխվեց, եւ ես ճանաչեցի, որ այդ նա է, որին հանձնարարված եմ ես: Այն ժամ ես շփոթվեցի, վախն ինձ պատեց, ու ես ճմլվում էի այն մտատանջությունից, որ այդքան խորամանկաբար ու անխոհեմաբար պատասխանեցի: Նա ասում է ինձ. «Մի՛ ամաչիր, այլ զորացիր իմ պատվիրաններով, որ պիտի տամ քեզ: Քանի որ ես ուղարկված եմ, -ասում է նա, -քեզ վերստին ցույց տալու համար այն ամենը, որ տեսել ես առաջվանից, հատկապես այն, ինչ օգտակար է ձեզ: Նախ եւ առաջ գրի առ իմ պատվիրաններն ու առակները, որպեսզի ժամանակ առ ժամանակ ընթերցես այն, եւ առավել կարող լինես պահելու դրանք»: Այդ պատճառով, պատվիրաններն ու առակները գրի առա այնպես, ինչպես նա ինձ հրամայեց: Եթե դրանք լսելով, դուք պահեք եւ վարվեք ըստ դրանց ու մաքուր սրտով կատարեք, ապա Տիրոջից կստանաք այն, ինչ

որ նա ձեզ խոստացել է: Իսկ եթե դրանք լսելով չապաշխարեք, այլ դառնաք ձեր մեղքերին, Աստծուց դրա հակառակը կստանաք: Այս ամենը ինձ պատվիրեց գրել այն հովիվը՝ ապաշխարության հրեշտակը:

### ՊԱՏՎԻՐԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻԱԿ ԱՍՏԾՈՒ ՀԱՆԴԵՊ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ:

Նախ եւ առաջ հավատա, որ Աստված մեկ է, ամեն ինչ արարողն ու ավարտողը, ամեն բան անդոյությունից գոյության բերողը: Նա կրում է ամեն բան, ինքը լինելով համապարփակ, օ ինքնապարփակ, եւ չի կարող լինել ո՞չ խոսքով բացատրելի, ո՞չ մտոք հասանելի: Եվ այսպես, հավատա՛ նրան եւ վախեցի՛ր նրանից, ու վախենալով ժուժկալություն պահիր: Պահպանիր այս, եւ քեզնից կվանես ամեն տեսակի ցանկասիրություն ու ամբարիշտություն, եւ կզգեստավորվես բոլոր առաքինություններով ու ճշմարտությամբ, եւ կընակվես Աստծո հետ, եթե պահես այս պատվիրանը:

անհաշտության մեջ: Հեռու պահիր քեզ նրանից եւ խաղաղություն ունեցիր քո եղբոր հետ: Զգեստավորվիր պարկեշտությամբ, բարեվայել-չությամբ ուր չկա ոչ մի անարգ բան, այլ ամեն ինչ հարթ է ու հաճելի: Բարություն արա,՝ եւ քո ջանքերի պտուղներից, որ շնորհում է քեզ Աստված՝ պարզամտությամբ բաժանիր կարիքավորներին, փոքր ինչ անգամ չտարակուելով, թե ում ես տալիս: Տո՛ւր բոլորին, որովհետեւ Աստված ուղում է, որ իր պարգևներից բոլորին էլ հասնի: Վերցնողները իրենք հաշվետու կլինեն Աստծու առջեւ, թե ինչո՞ւ եւ ինչի՞ համար են վերցրել: Կարիքից դրդված վերցնողները չեն դատապարտվի, իսկ աղքատ ձեւացողները՝ կենթարկվեն դատաստանի: Իսկ տվողը մեղավոր չի լինի, որովհետեւ նա կատարել է Աստծու տված ծառայությունը առանց խտրության՝ ում տալ, կամ ում չտալ: Եվ այսպես, պահի՛ր այս պատվիրանը, ինչպես ես քեզ ասացի, որպեսզի քո եւ քո տան ապաշխարությունը պարզությամբ լինի, եւ քո սիրտը մաքուր ու անարատ լինի Աստծո առջեւ:

### ՊԱՏՎԻՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Այն մասին, որ պետք է խուսափել չարախոսությունից եւ պարզամտությամբ ողորմություն կատարել:

Հովիվն ասաց ինձ. «Ունեցիր պարզություն ու եղիր անչար, ինչպես երեխան, որն անտեղյակ է մարդկանց կյանքը կործանող չարությանը: Նախ եւ առաջ, ոչ մեկի մասին չար մի՛ խոսիր, եւ մի՛ սիրիր լսել ով չար բան է խոսում: Իսկ եթե լսես՝ չարախոսի մեղքին մասնակից կլինես եւ հավատալով կնմանվես նրան, որովհետեւ հավատացել ես քո եղբոր դեմ չարախոսողին: Կործանարար չարախոսությունը՝ դա անհանգիստ չար ոգի է, որը երբեք խաղաղ չի մնում, այլ միշտ բնակվում է

## ՊԱՏՎԻՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Այն մասին, որ պետք է խուսափել ստությունից:

Նաեւ ասաց ինձ նա. «Սիրիր ճշմարտությունը, եւ թող քո շուրջերից միշտ ճշմարտություն դուրս գա, որպեսզի հոգին, որ Աստված բնակեցրել է այդ մարմնի մեջ, բոլոր մարդկանց առջեւ ճշմարիտ գտնվի, որպեսզի փառափորվի Տերը, որը քեզ հոգի է տվել քանզի Աստված ճշմարիտ է ամեն խոսքի մեջ, եւ ոչ մի ստություն չկա նրա մեջ: Եվ նրանք, որ ստում են, դրանով ուրանում են Տիրոջը եւ չեն վերադարձնում նրան կանխավճարը, որ ստացել են. իսկ նրանք ստացել են անսուտն հոգի: Եթե նրանք վերադարձնում են ստությամբ, դրանով անարդում են Տիրոջ պատվիրանը եւ դառնում հափշտակողներ: Այս լսելով՝ ես դառնորեն լաց եղա: Տեսնելով իմ ողբը՝ նա ասաց ինձ. «Ինչո՞ւ ես լալիս»: Եվ ես ասացի «Տե՛ր, որովհետեւ ես չգիտեմ, թե կարո՞ղ եմ արդյոք փրկվել»: Ինչո՞ւ, ասաց նա: Եվ ես ասացի. «Տե՛ր, որովհետեւ իմ կյանքում երբեք ճշմարիտ խոսք չեմ ասել, այլ միշտ նենդորեն եմ խոսել եւ այն ճշմարտության տեղ եմ մատուցել, ու ոչ մեկը չի ընդիմացել ինձ, որովհետեւ վստահել են իմ խոսքին: Այլեւ ես ինչպես կարող եմ ապրել, ք երբ այսպիսի բաներ եմ գործել»: «Դու լավ ու ճշմարիտ ես դատողություն անում, քանի որ քեզ, որպես Աստծո ծառայի, հարկավոր էր ճշմարտությամբ ընթանալ ու չգուգակցել կեղծավոր խիզճը ճշմարտության հոգու հետ եւ չանարգել Աստծո ճշմարիտ ու Սուրբ Հոգին»: «Տե՛ր, ես երբեք ավելի լավ ու հստակ բան չէի լսել, քան այս խոսքերը», ասացի ես: Եվ նա ասաց. «Արդ, լսո՞ւմ ես հիմա, պահիր դրանք եւ աշխատիր, որպեսզի այն սուտ խոսքերը, որ ասել ես ի շահ գործերիդ, դառնան ճշմարտիտ քո հետագա խոսքերից, եթե նրանք ճշմարտությամբ դուրս գան քո շուրջերից: Քանի որ նրանք եւս կարող են ճշմարիտ դառնալ, եթե այսուհետեւ միայն ճշմարտություն խոսես, ու եթե պահս ճշմարտությունը, կարող ես քեզ համար կյանք ստանալ: Եվ ամեն ոք, ով կլսի այս պատվիրանը, կկատարի այն ու հեռու կմնա ստից՝

կապրի Աստծո հետ»:

## ՊԱՏՎԻՐԱՆ ԶՈՐՅՈՐԴ

Ողջախոհությանի եւ ամուսնալուծության մասին:

«Պատվիրում եմ քեզ, ասում է հովիվը, պահպանել ողջախոհություն եւ թող սրտումդ մտածմուքներ չսփրդի ուրիշի կնոջ, կամ չնության, կամ նման այլ գործի մասին, քանի որ այդ անողը մեծ մեղք է գործում: Այլ անընդհատ հիշիր Աստծուն եւ երբեք մեղք չես գործի: Որովհետեւ, եթե այսպիսի չանցավոր արարք է գործում՝ իրեն մահվան է դատապարտում: Դրա համար, տե՛ս, հեռու մնա այդպիսի մտքերից, որովհետեւ որտեղ ողջախոհությունն է բնակվում, այնտեղ՝ արդար մարդու սրտում, չպետք է չար միտք ծագի»: Ես ասացի նրան. «Տե՛ր, թույլ տուր ինձ հարցնեմ»: «Խոսի՛ր», ասաց նա: «Տե՛ր, ասացի ես, եթե մեկը կին ունենա եւ նրան բունի պոռնկության մեջ, ապա ամուսինը նրա հետ ապրելով մե՞ղք է գործում»: Եվ նա ինձ ասաց. «Քանի դեռ նա անտեղյալ է նրա մեղքից, ամուսինը մեղք չի գործում, եթե ապրում է նրա հետ: Իսկ եթե ամուսինը իմանա նրա մեղքի մասին, եւ կինը չապաշխարի ու շարունակի մնալ իր շնության մեջ, ամուսինը նրա հետ ապրելով մեղք կգործի եւ կդառնա պոռնկության մասնակից»: «Ի՞նչ անել, ասացի ես, եթե կինը մնա իր արատի մեջ»: Եվ նա ասաց. «Թող ամուսինը արձակի նրան, իսկ ինքը մնա միայնակ: Իսկ եթե արձակելով կնոջը ուրիշն կին առնի, ինքն էլ շնություն արած կլինի»: «Իսկ ի՞նչ կլինի, Տե՛ր, ասում եմ, եթե արձակված կինը ապաշխարի եւ ցանկանա իր ամուսնու մոտ վերադառնալ. պե՞տք է ընդունի ամուսինը, թե՞ ոչ»: Եվ նա ինձ ասաց. «Եթե նրա ամուսինը չի ընդունում, նա մեղք է գործում եւ մեծագույն մեղք է բարդում իր վրա: Հարկ է ընդունել մեղսագործուհուն, որն ապաշխարում է, բայց ոչ բազմիցս. քանզի Աստծո ծառաների

Համար ապաշխարությունը միայն մեկն է: Ուստի՝ հանուն զղջման, ամուշ սինը իր կնոջը արձակելով չպետք է ուրիշին առնի: Այսպիսի վարքագիծը վերաբերում է հավասարապես ինչպես ամուսնուն, այնպես էլ կնոջը: Սակայն շնանալը միայն մարմինը պղծելը չէ. շնություն է անում նաև նա, ով անում է այն, ինչ հատուկ է հեթանոսներինք: Եվ եթե մեկը ընթանում է այսպիսի գործերով եւ չի ապաշխարում, դու հեռու մնա նրանց, եթե ոչ՝ ինքու էլ նրա մեղքերին բաժնեկից կդառնաս: Ուստի, ձեզ պատվիրվում է մնալ միայնակին, ինչպես ամուսինը, այնպես էլ կինը, քանի որ միայն այդ գեպքում կարող է ապաշխարություն լինել: Սակայն ես առիթ չեմ տալիս, որ այսպես արվիշ, այլ թո՛ղ այլեւս մեղք չգործի նա, ով մեղք է գործել: Իսկ ինչ վերաբերում է նրա նախկին մեղքերին, ապա կա Աստված, որը կարող է թողություն շնորհել, քանի որ նա իշխանություն ունի բոլորի վրա»:

2. Ես կրկին հարցրի նրան. «Քանզի Տերն ինձ արժանացրել է այն բանին, որ դու միշտ ապրես ինձ հետ, թույլ տուր ինձ մի քանի խոսք եւս ասել, որովհետեւ ես շատ անմիտ եմ, եւ սիրու մթագնել է լիմ առաջվա գործերից. Հասկացրու ինձ, քանի որ ես բացարձակապես ոչինչ չեմ հասկանում»: Եվ նա, ի պատասխան ինձ, ասաց. «Ես ապաշխարության հսկիչ եմ նշանակված եւ բոլոր ապաշխարողներին գիտակցություն եմ տալիս: Եվ հենց նույն ապաշխարությունը, ի՞նչ ես կարծում, խորը գիտակցությունը չէ՝ Զղջացող մեղսագործը գիտակցել է, որ ինքը մեղք է գործել Տիրող առաջ. նա հիշում է իր սրտում կատարած գործերը եւ զղջալով այլեւս մեղք չի գործում, այլ միայն բարի գործեր է անում եւ խոնարհեցնում իր հոգին ու չարչարում նրան այն բանի համար, որ այն մեղսագործել է: Արդ, տեսնո՞ւմ ես, որ ապաշխարությունը դա խորը գիտակցությունն է»: Ես ասացի նրան. «Տե՛ր, հենց դրա համար եմ ես քեզ նից մանրամասնորեն հարցնում ամեն բանի մասին եւ ուզում եմ իմանալ, թե մեղսագործս ի՞նչ է հարկավոր անել, որպեսզի կյանք ունենամո, որով

հետեւ մեղքերն իմ բազում են ու բազմազան»: «Դու կապրես, ասաց նա, եթե պահես իմ պատվիրանները եւ ընթանաս նրանցով. եւ ամեն ոք, որ կլսի ու կկատարի այս պատվիրանները, կապրի Աստծո հետ»:

3. Ես ասացի նրան. «Տե՛ր, որոշ ուսուցիչներից լսել եմ, որ չկա այլ ապաշխարություն, բացի նրանից, որ ջուրն ենք ընկղմվումք եւ մեր նախկին մեղքերի թողություն ենք ստանումք»: «Ճշմարիտ ես դու լսել, ասում է նա: Որովհետեւ մեղքերի թողություն ստացողը այլեւս չպետք է մեղք գործի, այլ պետք է ապրի սրբությամբ: Ուստի, քանի որ դու հարցնում ես ամեն բանի մասին, ես քեզ այդ ամենը կբացատրեմ, մոլորության առիթ չտալով նրանց, որ այսուհետեւ պիտի դարձի գան, կամ նոր են հավատքի դարձել առ Տեր: Նրանք, որ նոր են հավատացել, կամ այսուհետեւ պիտի հավատան՝ չունեն մեղքերի ապաշխարություն, այլ ունեն միայն նախկին մեղքերի թողությունյ: Իսկ նրանց համար, որ կանչված են մինչեւ այս օրերը, Տերն է սահմանել ապաշխարություն, որովհետեւ նա լինելով սրտեր քննող կանխագետ, գիտեր մարդկանց տկարությունը եւ սատանայի մեծ չարությանը, ինչով նա պետք է վնասեր Աստծո ծառաներին ու նենդանար նրանց հանդեպ: Ուստի, ողորմած Տերը գթաց իր արարածներին եւ կարգեց ապաշխարություն, որի իշխանությունն էլ ինձ է տրված: Արդ, ասում եմ քեզ, որ այս մեծ ու սուրբ կոչից հետող, եթե մեկը, լինելով սատանայի կողմից գայթակղված մեղք գործի՝ ապաշխարության մեկ հնարավորություն ունի: Իսկ, եթե հաճախակի մեղք գործի եւ ապաշխարի՝ այդպիսի մարդուն այն օգուտ չի տա, որովհետեւ նա դժվարությամբ կապրի ի Տեր: Ես ասացի նրան. «Տե՛ր, ես նորոգվեցի, երբ այդ մասին այդքան մանրամասնորեն լսեցի: Քանի որ գիտեմ, որ կիրկվեմ, եթե այլեւս ոչինչ չբարդեմ իմ մեղքերին»: «Կիրկվես, ասաց նա, եւ բոլոր նրանք, ովքեր այդպես կանեն»:

4. Ես նորից հարցրի նրան. «Տե՛ր, քանի որ դու համբերատար

լսում ես ինձ, բացատրիր ահա թե ինչ»: «Խոսի՛ր», -ասաց նա: «Եթե կի՞նը կամ ամուսինը մեռնի, -ասում եմ ես, -եւ նրանցից մեկը ամուսնանա, արդյոք մեղք գործած կլինի՝ ամուսնացողը»: «Մեղք գործած չի լի՞նի, -ասում է նա, -սակայն, եթե մնա միայնակ՝ ինքն իրեն, ապա մեծ վիառք ձեռք կբերի Տիրոջ մոտ: Ուստի, պահպանիր սրբություն, ողջախուզություն, եւ կապը ես Աստծո հետ: Ինչ որ ասում եմ քեզ, եւ պիտի հետո ասեմ, կատարի՛ր Հենց այս օրվանից, քանի որ դու վստահված ես ինձ, ու ես բնակվում եմ քո տանը. եւ քո նախկին մեղքերին էլ թողություն կլինի, եթե պահես իմ պատվիրանները. ու բոլոր նրանք, որ կպահեն այս պատվիրանները եւ կքայլեն սրբությամբ՝ թողություն կստանան»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վշտի եւ համբերության մասին:

1. «Եղի՛ր մեծահոգի եւ համբերող, -ասաց Հովիկը, -եւ կիշխես բոլոր չար գործերի վրա, եւ կգործես ամենայն արդարություն: Եթե լինես մեծահոգի, քո մեջ բնակվող Սուրբ Հոգին կլինի մաքուր ու չի մթափնի որեւէ չար ոգուց, այլ բերկությամբ կնդարձակվի, եւ անոթի հետ միասին որտեղ բնակվում է՝ ցնծությամբ կծառայի Տիրոջը: Իսկ եթե որեւէ բարկություն գա վրադ, քո մեջ բնակվող Սուրբ Հոգին իսկույն կնեղվի ու կջանա հեռանալ, որովհետեւ այն ճնշվում է չար ոգուց եւ հնարավորություն չի ունենում ծառայելու Տիրոջը՝ ինչպես որ ուզում է, որովհետեւ բարկությունը վիրավորում է նրան, որովհետեւ Տերը բնակվում է համբերատարության մեջ, իսկ չար ոգին՝ բարկության: Դրա համար, երբ այս երկու հոգիները միասին են բնակվում, շատ վատ է լինում այն մարդու համար, ում մեջ նրանք բնակվում են: Ինչպես, եթե մեկը վերցնի մի քիչ օշինդր եւ դնի մեղրով լի ամանի մեջ, չի՝ վնասվի արդյոք ամբողջ մեղրը: Եվ այդքան մեղրը կփչանա օշինդրի աննշան քանակությունից»:

կկորցնի քաղցրությունը եւ տհաճ կլինի իր տիրոջը, որովհետեւ ամբողջ մեղրը կդառնանա ու գործածության համար անպիտան կլինի: Բայց, եթե մեղրի մեջ օշինդր չդրվի, այն կլինի քաղցրահամ ու պիտանի իր տիրոջ համար: Տեսնո՞ւմ ես, որ մեծահոգությունը մեղրից էլ քաղցր է, եւ այն հաճելի է Աստծուն ու Տերը բնակվում է նրա մեջ: Իսկ բարկությունը դառն է ու անպետք: Ուստի, եթե մեծահոգությանը խառնվի բարկություն, Հոգին խոռվում է ու նրա աղոթքը հաճելի չէ Աստծուն»: Եվ ես ասացի նրան. «Տե՛ր, ես կուզենայի իմանալ բարկության գործողության մասին, որպեսզի ինձ հետ պահեմ դրանից»: «Ահա՝ թե ինչ, -ասում է նա, -եթե դու եւ քո ընտանիքը ձեզ հեռու չպահեք նրանից՝ ապա կկորցնեք փրկության ողջ հույսը: Բայց պահպանիր քեզ բարկությունից, քանի որ ես քեզ հետ եմ, եւ նրանից հեռու կմնան բոլոր նրանք, ովքեր ամբողջ սրտով կապաշխարեն, քանզի ես նրանց հետ կլինեմ ու կպահպանեմ նրանց: Բոլոր այդպիսիները սրբազան Հրեշտակի կողմից ընդունվում են արգարների գասը»:

2. «Արդ, -ասում է նա, -Հիմա լսիր բարկության ներգործության մասին. թե որքան վնասակար է այն, եւ ինչպես է իր գործողությամբ կործանում Աստծո ծառաներին ու նրանց շեղում ճշմարտությունից: Այն չի կարող վնասել նրանց, որոնք լցված են հավատքով, որովհետեւ նրանց հետ է Աստծո զորությունը, այլ գայթակղեցնում է կասկածամիտներին ու հավատք չունեցողներին: Եթե ինչքան շատ նման մարդկանց գտնում է հանգիստ վիճակում, սողոսկում է նրանց սրտերը, եւ կինը, կամ ամուսինը, առանց առիթի, գժովում են իրար հետ, որեւէ կենցաղային հարցի, կամ կերակուրի, կամ սին խոսքի, կամ որեւէ բարեկամի, կամ պարտքի, կամ էլ նման մանրունքների պատճառով: Այս բոլորը անմտություն է, փուչ ու անվայել Աստծո ծառաներին: Իսկ մեծահոգությունը կայուն է ու վեհ, ունի հաստատուն ուժ, եւ բարգավաճում է մեծ ընդարձակության մեջ՝ բերկությամբ, զվարթությամբ եւ անհոգությամբ, ամենայն ժամ փառաբանում է Տիրոջը. օտար ամեն դառնությանը, եւ մշտապես խաղալ է

ու հեզ: Իսկ բարկությունը անխելամիտ է, սին ու թեթեւամիտ: Անխելամտությունից ծնվում է դառնություն, դառնությունից՝ գոգովածություն, գոգովածությունից՝ բարկություն, բարկությունից՝ ցասում: Այդքան չարիքներից առաջացած ցասումը մեծ ու անբուժելի մեղք է: Եվ երբ այս բոլորը գտնվում է մի անոթի մեջ, որտեղ բնակվում է Սուրբ Հոգին, ապա անոթը չի կարողանում սրանց տեղափորել իր մեջ, եւ փոթորկվում է: Ուստի հեզ Հոգին չի կարողանում ապրել չար ոգու հետ եւ հեռանում է այդպիսի մարդուց եւ ապաստան է փնտրում հեզության ու լուռթյան մեջ: Իսկ երբ նա հեռանում է այն մարդուց, ում մեջ որ բնակվում էր, եւ այդ մարդը դառնում է օտար Սուրբ Հոգուն, լցվում է չար ոգիներով, ու դառնում է կույր բարի մտքերի հանդեպ: Այսպես է պատահում բոլոր ցասկուների հետ: Ուստի, հեռո՛ւ մնա բարկությունից եւ լցվիր մեծահոգությամբ, ու ընդդիմացիր բոլոր տեսակի դառնություններին. եւ կդտնվես Աստծուն հաճելի մաքրության ու սրբության մեջ: Արդ, տե՛ս, որ երբեւէ չարհամարհես այս պատվիրանը, որովհետեւ, եթե պահես այն, կարող կիխնես կատարելու եւ մյուս պատվիրանները, որ պիտի քեզ տամ: Դրա համար, այժմ հաստատվիր այս պատվիրաններով, որ ապրես Աստծո հետ. ու բոլոր նրանք, որ կընթանան ըստ դրանց՝ նույնպես կապրեն Աստծո հետ»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՎԵՅՑԵՐՈՐԴ

Մարդու հետ գտնվող երկու ոգիների մասին, եւ  
նրանց ներշնչումների մասին:

1. «Առաջին պատվիրանում ես հրամայեցի քեզ՝ պահպանել հավատք. երկյուղածություն եւ պահեցողություն», -ասաց նա: «Այո, Տե՛ր», -ասացի ես, «Իսկ այժմ, -ասաց նա, -ես ուզում եմ քեզ ցույց տալ այդ առաքինությունների գորությունը, որպեսզի իմանաս, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպիսի կարողություն ու ներգործություն ունի: Սրանց ներգործությունը երկակի է, որոնք երեւում են արդարության եւ անարդարության մեջ: Դու հավատա արդարությանը, իսկ անարդարու-

թյանը՝ փոքր-ինչ անդամ չհավատաս, որովհետեւ արդարության ճանապարհը ուղիղ է, իսկ անարդարությունը՝ ծուռ ու մուռ: Բայց դու ընթացիր ուղիղ ճանապարհով, իսկ ծուռումուռը՝ թող: Ծուռ ու մուռ ճանապարհը անհարթ է, լի գայթաքարերով, ժայռոտ է ու փշոտ, եւ կործանման է տանում նրանց, ովքեր ընթանում են այդտեղով: Իսկ նրանք, ովքեր գնում են ուղիղ ճանապարհով ընթանում են հավասար եւ առանց խոչընդոտների, որովհետեւ այն ոչ ժայռոտ է եւ ոչ էլ փշոտ: Ուստի, տեսնո՞ւմ ես որ ավելի լավ է ընթանալ այս ուղիով»: Ես ասացի. «Տե՛ր, ինձ դուք է գալիս այդ ճանապարհի ընթացքը»: «Եվ դու կնթանաս, -ասում է նա, -նմանապես եւ ամեն ոք, որ ողջ սրտով դարձի կդա առ Աստված»:

2. «Այժմ, լսիր հավատքի մասին, -ասում է նա: -Երկու հրեշտակներ կան մարդու հետ. մեկը բարի, մյուսը՝ չար»: Ես հարցրի նրան. «Տե՛ր, ես ինչպե՞ս կարող եմ տարբերել նրանց գործերը, երբ երկու հրեշտակներն էլ բնակվում են ինձ հետ»: «Լսի՛ր եւ հասկացի՛ր, -ասում է նա: Բարի հրեշտակը լուակյաց է ու համեստ, հեզ ու խաղաղ: Ուստի, երբ նա մտնի քո սիրտը, քեզ անընդհատ կներշնչի արդարություն, ողջախոհություն, մաքրություն, սիրալիություն, ներողամտություն, սեր եւ բարեպաշտություն: Լսի՛ր եւ չար հրեշտակի գործերի մասին: Նախ եւ առաջ այն չարակամ է, ցասկոտ ու անխոհեմ, նրա գործերը չար են եւ այլասերում են Աստծո ծառաներին: Ուստի, երբ նա սողոսկի քո սիրտը, նրա գործերից հասկացիր, որ դա չար հրեշտակն է»: «Տե՛ր, ինչպե՞ս ճանաչեմ նրան», -ասացի ես: «Լսի՛ր, -ասում է նա, -երբ վրադ բարկություն կամ վրդովմունք գա, իմացի՛ր, որ նա քո մեջ է: Նաեւ, երբ սրտումդ կծագի բազում գործերի, զանազան ու ճոխ կերակուրների եւ խմիչքների, ուրիշների կանանց նկատմամբ ցանկություն, ու գոռոզություն, պարծենկոտություն, ամբարտավանություն, եւ այլ նման բաներ, իմացի՛ր, որ չար հրեշտակը քեզ հետ է: Ուստի, ճանաչելով նրա գործերը,

Հեռացի՛ր նրանից, եւ մի՛ հավատա նրան, որովհետեւ նրա գործերը չար են ու ոչ հատուկ Աստծո ծառաներին: Այսպես են այս, եւ մյուս հրեշտակի գործերը: Գիտակցիր դրանք, հավատա՛ բարի հրեշտակին, եւ հեռու մնա չար հրեշտակից, որովհետեւ ամեն գործում նրա ներշնչանքը չար է: Ինչպես՝ եթե մեկը հավատացյալ է, եւ նրա սիրտը սողոսկել են չար հրեշտակի ցանկություններ, այդ տղամարդը, կամ կինը, անպայմանորեն մեղք կդորձեն: Եվ նորից, եթե տղամարդ կամ կին չար մարդեկ լինեն, եւ իրենց սրտում բարի հրեշտակի գործերը խորհեն, նրանք անպայմանորեն որեւէ բարի գործ կանեն: Ուստի, տեսնո՞ւմ ես, լավ է բարի հրեշտակին հետեւելը: Եթե միշտ ենթարկվես նրան եւ կատարես նրա գործերը՝ կատրես Աստծո հետ. Նմանապես նրանք, որ կհետեւեն նրա գործերին՝ կատրեն Աստծո հետ»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Այն մասին, որ պետք է Աստծուց վախենալ, իսկ սատանայից՝ ոչ:

«Վախեցի՛ր Աստծուց, ասում է հովիվը, եւ կատարի՛ր նրա պատվիրանները. որովհետեւ պահելով Աստծո պատվիրանները, ամեն գործում հաստատուն կլինես եւ ամեն կատարած գործդ գերազանց կլինի: Վախենալով Աստծուց, ամեն բան լավ կանես: Ահա այն վախը, որով պետք է երկյուղես, որպեսզի փրկվես: Իսկ սատանայից մի՛ վախեցիր, քանզի վախենալով Աստծուց՝ կիշխես սատանայի վրա, որովհետեւ այն ոչ մի ուժ չունի: Իսկ ով անզոր է, նրանից պետք չէ վախենալ: Նրանից է պետք վախենալ, ով գերազանց զորություն ունի: Քանզի զորություն ունեցող ամեն ոք վախ է ներշնչում, իսկ ով անզոր է, բոլորի կողմից արհամարհվում է: Սակայն, սատանայի գործերից վախեցի՛ր, որովհետեւ նրանք չար են, վախենալով Աստծուց, չես կատարի սատանայի գործերը. այլ հեռու կմնաս նրանից: Ուստի, վախը երկակի է: Եթե ուղենաս չարիք գործեկ՝ վախեցիր Աստծուց եւ այն չես անի. Նմանապես, եթե ուղենաս

բարիք գործել, վախեցիր Աստծուց եւ դու կանես այն: Իսկապես մեծ է Աստծո երկյուղը՝ զորավոր ու փառավոր: Արդ վախեցիր Աստծուց եւ կյանք կունենաս: Եվ բոլոր նրանք, ովքեր կվախենան նրանից եւ պահելով նրա պատվիրանները՝ կապրեն Աստծո հետ, իսկ ովքեր չեն պահում նրա պատվիրանները՝ այդպիսիների մեջ կյանք չկա»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Զարից հեռու մնալու եւ բարին գործելու մասին:

«Ես ասացի քեզ, ասում է հովիվը, որ Աստծո ստեղծածները երկակի են. երկակի է նաև պահեցողությունը: Ուրեմն, որոշ բաներից պետք է հետ պահել, իսկ որոշ բաներից՝ ոչ»: «Տե՛ր, բացատրիր ինձ, թե ինչի՞ց է պետք հետ պահել, եւ ինչից՝ ոչ»: «Լսի՛ր, ասում է նա, հեռու մնա չարից եւ մի գործիր այն, իսկ բարուց քեզ հետ մի պահիր, այլ կատարիր այն: Որովհետեւ, եթե բարուց հետ պահես եւ այն չգործես, մեծ մեղք գործած կլինես: Արդ՝ պահիր քեզ ամենայն չարից ու գործիր ամենայն բարիք»: «Զարի ինչպիսի՞ տեսակներ կան, որոնցից պետք է հեռու մնալ»՝ ասում եմ ես:

«Լսի՛ր, ասում է նա, պոռնկությունից, հարբեցողությունից եւ չափից գուրս շատ խնջույքներից, կերակուրների ավելորդությունից, ճոխությունից ու փառամոլությունից, խաբեությունից եւ զրպարտությունից, շողոքորթությունից, քենախնդրությունից ու որեւէ մեկի պատիվն անարգելուց: Այս են չար գործերը, որոնցից Աստծո ծառային պարտ է խուսափել: Ով իրեն չի զսպում սրանցից, նա չի կարող ապրել Աստծո հետ: Արդ՝ լսի՛ր սրանց հաջորդող գործերի մասին»: «Տե՛ր, մի՞թե գեռ էլի շատ գործեր կան», ասում եմ: «Արդարեւ՝ գեռ շատ կան, որոնցից պետք է խուսափի Աստծո ծառան: Դրանք են՝ գողությունն ու թալանը, սուտ վկայությունը, ուրիշնը ունենալու ցանկությունը, ամբարտավանությունը, եւ դրա նման այլ բաներ: Արդյոք չար չե՞ս հա-

մարում այս ամենը. քանզի սրանք չարիքներ են: Աստծո ծառան պետք է իրեն հեռու պահի դրանցից: Արդ՝ դու եւս քեզ հետ պահիր այս բաներից, որպեսզի ապրես Աստծո հետ եւ լինես նրանց հետ, ովքեր պահել են իրենց չար գործերից: Ահա թե ինչից դու պետք է քեզ հետ պահես: Իսկ թե ինչից չպետք է քեզ զսպե՞լ լիփ՛ր: Բարուց մի՛ խուսափիր, այլ գործիր այն: Լսի՛ր, -ասում է, -բարի գործերի մասին, որ պետք է գործել փրկվելու համար: Դրանցից առաջնայիններն են՝ հավատքը, Աստծո երկյուղածությունը, սերը, միաբանությունը, արդարությունը, ճշմարտությունը, համբերությունը. որոնցից ավելի լավ բան չկա մարդկային կյանքում. ով այս ամենը կպահի եւ չի խուսափի սրանցից՝ երանելի է նա իր կյանքում: Այնուհետեւ սրանց հաջորդում են. ծառայել այրիներին, հոգ տանել որբերին ու աղքատներին, կարիքներից ազատել Աստծո ծառաներին, լինել հյուրընկալ /քանի որ Հյուրնկալությունը բարի գործ է հանդիսանում/, չհակածառել, լինել խոնարհ, ինքը իրեն բոլոր մարդկանցից ցածր համարել, հարգել մեծահասակներին, պահել արդարությունը, եղբայրասեր լինել, ներել վիրավորանքները, լինել մեծահոգի, չժողնել հավատքից հեռացածներին, այլ դարձի բերել ու քաջալերել խելքի բերել մեղսագործներին, չնեղել պարտապաններին եւ այլն: Դու բարի չե՞ս համարում այս բոլորը»: «Ի՞նչ կա սրանց ավելի լավ», -ասում եմ: «Ուրեմն, -ասում է նա, -ընթացի՛ր այս գործելով եւ մի՛ խուսափիր դրանից: Որովհետեւ, եթե պահես այս պատվիրանը՝ կապրես Աստծո հետ. նմանապես եւ բոլոր նրանք, որոնք կպահեն այն՝ կապրեն Աստծո հետ»:

## ՊԱՏՎԻՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Այն մասին, որ պետք է խնդրել Աստծուց եւ չերկմտել:

Նա ասաց ինձ. «Վանի՛ր քեզանից երկմտությունը, եւ Տիրոջից որեւէ բան խնդրելուց փոքր ինչ անգամ մի՛ երկմտիր. ինքդ քեզ ասելով. «Ես ինչպե՞ս կարող եմ Աստծուց մի բան խնդրել եւ այն ստանալ, երբ Նրա առաջ այսքան մեղք եմ գործել»: Այսպես մի մտածիր այլ ամբողջ սրտով դարձիր դեպի Տերը եւ խնդրիր Նրանից առանց երկմտելու. եւ դու կճաշակես Նրա մեծագույն գթասրտությունը, քանզի Նա քեզ չի լրի, այլ կկատարի հոգուդ խնդրածը, որովհետեւ Աստված մարդկանց նման չէ, որոնք ոխակալ են, այլ Նա անոխակալ է ու ողորմած՝ իր արարածների նկատմամբ: Եվ այսպես, մաքրի՛ր սիրոտ այս աշխարհի բոլոր ունայնություններից. կատարի՛ր առաջներում քեզ ասածները՝ Աստծո կողմից քեզ տրված խոսքերը, ու կստանաս այն բոլոր բարիքները, որ խնդրում ես, եւ քո բոլոր խնդրվածքները չեն մնա անկատար. եթե Աստծուց առանց երկմտելու խնդրես: Իսկ նրանք, որ այդպես չեն, Նրանից բնավ ոչինչ չեն ստանում, ինչ որ խնդրում են: Բայց նրանք, որ լցված են հավատքով՝ ամեն բան խնդրում են ապավինելով Աստծուն, եւ ստանում են Տիրոջից, որովհետեւ խնդրում են առանց երկմտելու: Իսկ ամեն տատանվող մարդ, եթե չապաշխարի, դժվարությամբ կփրկվի: Ուստի, հոգիդ սրբիր կասկածներից եւ զգեստավորվիր հավատքով. եւ հավատա Տիրոջը. ու կստանաս այն ամենը, որ խնդրում ես: Սակայն, եթե Տիրոջից որեւէ բան խնդրելով երբեմն երկար ժամանակ չես ստանում, մի՛ տատանվիր, որ անմիջապես չես ստանում հոգուդ խնդրածը: Որովհետեւ կարող է պատահել փորձության համար, կամ մեղքիդ պատճառով, որի մասին չգիտես, ուշացումով ստանաս քո խնդրածը: Սակայն, մի՛ դադարիր հոգուդ ցանկացածը խնդրելու, եւ կստանաս այն: Իսկ եթե վհատվես ու դադարես խնդրելուց, ապա տրտնջա ինքդ քո դեմ եւ ոչ թե Աստծո, թե Նա չի չնորհում քեզ»:

Արդ, տեսնո՞ւմ ես, թե որքան կործանարար ու ահավոր է այդ երկմտությունը, եւ շատերին, անգամ հավատքով կայուններին, լիովին հեռացնում է հավատքից: Քանի որ այդ երկմտությունը, արդարեւ, սատանայի դուստրն է եւ մեծամեծ չարիքներ է նյութում Աստծո ծառաների դեմ: Ուրեմն՝ քեզնից ամբողջովին հեռացրու երկմտությունը եւ հաղթահարիր այն ամեն գործում, զգեստավորվելով զորեղ ու ամենակարող հավատքով, որովհետեւ հավատքը ամեն բան խոստանում է, ամեն բան կատարում, իսկ երկմտությունը ոչ մի բանում չի վստահում ինքն իրեն եւ դրանից էլ ոչ մի գործում հաջողություն չի ունենում: Արդ, տեսնո՞ւմ ես, ասում է նա, որ հավատքը ի վերուստ է՝ Աստծուց, եւ մեծ զորություն ունի: Իսկ երկմտությունը երկրային ոգի է՝ սատանայից, եւ զորություն չունի: Ուստի, ծառայի՛ր ամենազոր հավատքին եւ հեռացի՛ր երկմտությունից, որը ուժ չունի. եւ կապրեք Աստծո հետ, դու եւ բոլոր նրանք, որ այսպես կվարվեն»:

## ՊԱՏՎԻՐԱՆ ՏԱՄԵՐՈՐԴ

Հոգին մթագնող տրտմության ոգու մասին, որ խանգարում է աղոթքին:

1. «Հեռացրո՛ւ քեզանից ամեն տրտմություն, որովհետեւ այն կասկածի եւ բարկության քույրն է»: «Տե՛ր, ինչպե՞ս թե այն նրանց քույրն է», ասում եմ: «Ես կարծում եմ, որ վհատությունը Աստծո ծառաների համար բոլոր ոգիներից ամենաչարն է եւ ամենավտանգավորը, եւ կործանում է մարդուն առավել քան, բոլոր ոգիները ու դուրս է վանում Սուրբ Հոգուն եւ վերստին փրկում»: «Տե՛ր, ասում եմ, ես անմիտ եմ եւ չեմ հասկանում այդ առակները. թե ինչպե՞ս կարող է վհատությունը կործանել ու վերստին փրկել. չեմ կարողանում ըմբռնել»: «Լսի՛ր եւ հասկացի՛ր, ասում է նա:՝ նրանք, որ երբեք չեն փնտրել ու քննել ճշմարտությունը եւ չեն մտածել աստվածության մասին, այլ լոկ հավատացել են եւ արվել են զանազան հեթանոս զբաղմունքների ու այս աշխարհի այլ գոր-

ծերի, չեն հասկանում աստվածային առակները, որովհետեւ նրանք մթագնվում են այսպիսի գործերից, խաթարվում ու կործանվում են մտքով: Ինչպես խաղողի ընտիր որթատունկերը, երբ արհամարված, ու լքված են, ճնշվում ու խեղդվում են զանազան մոլախոտերից եւ վշերից, այնպես էլ այն մարդիկ, որ միայն մտածելով հարստության մասին, կորցնում են իրենց հասկացողությունը եւ արդարության վերաբերյալ ոչ մի բան չեն ընկալում, եւ երբ որեւէ բան են լսում աստվածության կամ ճշմարտության վերաբերյալ, նրանց միտքը զբաղված է լինում իրենց գործերով եւ ոչինչ չեն հասկանում: Իսկ նրանք, որ Աստծո երկյուղն ունեն, ճշմարտության վերաբերյալ մանրազնենին քննություն են անում ու Տիրոջ ուղղված հոգի ունեն՝ հեշտությամբ ըմբռնում են ամեն բան, որ ասվում է իրենց, եւ հասկանում են, որովհետեւ իրենց մեջ Աստծո հանդեպ երկյուղ ունեն: Քանզի, որտեղ բնակվում է Տերը, այնտեղ միտքը առատ է, ուստի հպվի՛ր Տիրոջը եւ ամեն բան կհասկանաս ու կմբռնես»:

2. «Իսկ այժմ, լսի՛ր, տկարամի՛տ, թե ինչպես է վհատությունը վանում Սուրբ Հոգուն եւ ինչպես է նորից փրկում: Երկմիտ մարդը, երբ որեւէ գործ է ձեռնարկում եւ իր երկմտանքի պատճառով հաջողության չի հասնում, այնժամ վհատությունը սողոսկում է այդպիսի մարդու սիրացը ու տրտմեցնում է Սուրբ Հոգուն եւ դուրս վանում նրան: Այդպես էլ երբ մի մարդու վրա ինչ և որ պատճառով զայրութ է գալիս, եւ նա սաստիկ բարկանում է, տրտմություն է ընկնում բարկացողի սիրտը. նա վշտանում է իր արարքի համար եւ զղում է, որ վատ է վարվել: Այս տրտմությունը փրկարար է. քանի որ զղում է վատ արարքների համար: Սակայն տրտմության այս երկու ձեւերն էլ անարգում են Սուրբ Հոգուն: Երկմտությունից ծնված տրտմությունը այն տրտմությունն է, երբ մարդուն չի հաջողվել իր գործը՝ այդ մեղավոր, ու անարդար տրտմություն է, իսկ տրտմությունը՝ ծնված սրտնեղությունից, թե վատ է վարվել՝ վատ տրտմություն չէ: Թե այս եւ թե մյուս տրտմությունն էլ անարգում են

**Սուրբ Հոգուն:** Ուստի հեռացրու տրտմությունը քեզանից եւ մի՛ անարդիր քո մեջ բնակվող Սուրբ Հոգուն, որպեսզի նա Տիրոջ առջեւ չաղաղակի քո դեմ եւ չհեռանա քեզանից: Որովհետեւ Աստծո Հոգին, որ տրված է այս մարմնին, տրտմություն չի հանդուրժում:

3. Ուստի դու լցվիր ուրախությամբ, որը միշտ շնորհ ունի Տիրոջ մոտ ու հաճելի է նրան, եւ մխիթարվիր նրանով, որովհետեւ ամեն մի կենսուրախ մարդ բարիք է գործում, եւ խորհում է բարու մասին, եւ արհամարհում է տրտմությունը: Իսկ տրտում մարդը միշտ չար է, նախ եւ առաջ, որովհետեւ անարգում է Սուրբ Հոգուն, որ մարդուն տրված է լինելու կենսուրախ եւ, երկրորդ, որովհետեւ նա անօրենություն է գործում՝ չդիմելով ու չխոստովանելով Տիրոջը: Տրտում մարդու աղոթքը երբեք ի զորու չէ Աստծո գահին հասնելու»: Եվ ես հարցիր նրան. «Տե՛ր, իսկ ինչո՞ւ տրտում մարդու աղոթքը չի հասնում Աստծո գահին»: «Որովհետեւ, ասում է նա, տրտմությունը բնակվում է նրա սրտում: Եվ աղոթքի հետ խառնված տրտմությունը, աղոթքին թույլ չի տալիս անարդիել վեր հառնել դեպի Աստծո գահը: Ինչպես քացախի հետ խառնված գինին այլեւս չունի իր նախկին հաճելիությունը, այդպես էլ տրտմության հետ խառնված Սուրբ Հոգին, չունի նույն անարատ աղոթքը: Ուրեմն, սրբի՛ր չար տրտմությունից, եւ կապրես Աստծո հետ. եւ Աստծո հետ կապրեն բոլոր նրանք, ովքեր դեն կնետեն իրենցից տրտմությունը ու կապրուրվեն ուրախությամբ»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

Այն մասին, որ ճշմարիտ եւ սուտ մարգարեները  
ճանաչվում են գործերից:

Հովիվը ինձ ցույց տվեց նստարաններին նստած մարդկանց, եւ մի մարդու՝ նստած ամբիոնին: Եվ նա ինձ ասաց. «Տեսնո՞ւմ ես նրանց,

որ նստած են նստարաններին»: «Տեսնում եմ, Տե՛ր», ասում եմ ես: «Սրանք, ասում է նա, արդարներն են, իսկ ամբիոնին նստածը սուտ մարգարեն է, որը ապականում է Աստծո ծառաների մտքերը՝ նրանց, որոնք երկերեսանի են, այլ ոչ թե ճշմարիտ հավատացյալներ: Այս երկերեսանիները գալիս են նրա մոտ, որպես մարգարենի եւ հարցնում, թե ի՞նչ է լինելու իրենց հետ, իսկ նա, իր մեջ չունենալով Աստվածային հոգու գորությունը, պատասխանում է նրանց հարցումներին եւ խոստումներով լցնում նրանց հոգին իրենց իսկ ցանկությունների համաձայն: Լինելով ունայն, նա ունայնությամբ էլ պատասխանում է ունայն մարդկանց: Սակայն նա ասում է նաև որոշ ճիշտ բաներ, քանի որ սատանայից լցվում է նրա ոգով, որպեսզի հրապուրի արդարներից որեւէ մեկին: Բայց ճշմարտությամբ համակված հավատքով ուժեղները չեն մերձենում այդպիսի ոգիներին, այլ հեռանում են դրանցից: Իսկ երկերեսանիները ու հաճախակի ապաշխարողները, հեթանոսների նման դիմում են գուշակությունների, ու ինչպես եւ կուապաշտները իրենց կուապաշտությունով իրենց վրա մեծ մեղք են բարդում, որովհետեւ մի գործի մասին կեղծ մարդկարեն հարցնողը կուապաշտ է. ճշմարտությանը խորթ եւ անխելամիտ: Իսկ Աստծուց տրված ամեն հոգի չի սպասում հարցումի, այլ ունենալով Աստվածային զորություն, ամենը ինքն է խոսում որովհետեւ այն ի վերուստ է՝ Աստծո Հոգու զորությունից: Ոգին, որը խոսում է ըստ հարցերի ու մարդկային ցանկությունների համաձայն, երկրային ոգի է՝ թեթեւամիտ ու անզոր. այն երբեք չի խոսում, եթե իրեն չեն հարցնում»: Եվ ես ասացի «Ինչպե՞ս կարելի է ճանաչել, թե որն է ճշմարիտ մարգարեն, իսկ որը՝ կեղծ»: «Լսի՛ր, ասում է, երկու մարգարեների մասին, եւ ըստ այնմ, ինչ որ կասեմ ես քեզ, կճանաչես Աստծո մարգարենին եւ կեղծ մարդարեն: Իր կյանքով ճանաչելի մարդուն, որն Աստծո Հոգին ունի: Նախ ի վերուստ տրված հոգի ունեցողը հանդարտ է, հեզ ու խոնարհ, հեռու է մնում ամեն չարից եւ այս կյանքի սին ցանկություններից, իրեն բոլորից ցածր է դասում ու ոչ մեկին չի պատասխանում ըստ հարցերի եւ չի

խոսում առանձնության մեջ: Աստծո Հոգին խոսում է ոչ թե այն ժամանակ, երբ մարդն է ուզում, այլ այն ժամանակ, երբ հաճո է Աստծուն: Ուստի, մարդ, որը ունի Աստծո Հոգին, կդա արդարների եկեղեցին, որոնք Աստծո Հոգու հավատը ունեն, որտեղ աղոթք է լինում առ Տեր, այնժամ մարդարեական Հոգու հրեշտակը, որ կցված է նրան, այդ մարդուն լցնում է Սուրբ Հոգով, եւ նա խոսում է համայնքի հետ այնպես, ինչպես որ հաճո է Աստծուն: Այսպես է դրսեւորվում Աստվածային Հոգին նրա զորությունը: Իսկ հիմա լսի՛ր երկրային ոգու մասին, որը փուչ է, անմիտ ու չունի զորություն: Նախ եւ առաջ, այն մարդը, որը թվում է թե լցված է Հոգով. ինքն իրեն բարձրացնում է եւ ձգտում է առաջնության, նա լկտի է ու շաղակրատ, ապրում է ճոխության եւ բազում վայելքների մեջ. իր գուշակությունների դիմաց վարձ է վերցնում. իսկ եթե չի ստանում, գուշակություն էլ չի անում: Արդ՝ կարո՞ղ է արդյօք Աստվածային Հոգին վարձ վերցնել ու մարդարեւություն անել: Այդ հատուկ չէ Աստծո մարդարեին, իսկ այսպես վարդողների մեջ գործում է երկրային ոգին: Հետո նա չի մտնում արդարների հավաքը, այլ խուսափում է նրանցից ու ընդհակառակը, շփում է երկերեսանի եւ ունայն մարդկանց հետ, գուշակություններ է անում գաղտնի տեղերում ու խարում նրանց, խոսելով ըստ նրանց ցանկությունների՝ ունայնությամբ պատասխանելով ունայն մարդկանց, քանի որ, երբ դատարկ ամանները դարսվում են ուրիշ դատարկ ամանների հետ, չեն ջարդվում, այլ լավ հարմարվում են մեկը՝ մյուսին: Իսկ երբ նա մտնում է Աստծո Հոգին ունեցող արդարների հավաքը, երբ նրանց կողմից աղոթք է արվում, այդ մարդը դատարկվում է, ու երկրային ոգին վախից փախչում է նրանից, եւ նա շփոթվում է, լրիվ կարկամում, ու չի կարողանում խոսել: Եթե մառանում գինի, կամ յուղ գնեք եւ դրանց հետ նաեւ դատարկ անոթ, իսկ հետո սկսեք վերցնել մառանի պաշարները, ապա այն անոթը, որ դատարկ էիր դրել, այդպես էլ դատարկ կգտնեք: Նույնպես էլ դատարկ մարդարեները, որքան էլ դան Աստվածային Հոգի ունեցող մարդկանց մոտ, ինչպես որ կան,

այդպես էլ կմնան: Ահա ճշմարիտ եւ սուտ մարդարեների կյանքի նկարագիրը: Ուրեմն, գործով ու կյանքով փորձիր այն մարդուն, որն ասում է, թե Սուրբ Հոգի ունի: Հավատա՝ Աստծուց բխող եւ զորություն ունեցող Հոգուն, իսկ երկրային ոգուն, որ դատարկ է ու անզոր, մի՛ հավատա, քանի որ այն բխում է սատանայից: Լսի՛ր առակս, որ պիտի ասեմքեզ: Վերցրու մի քար եւ նետիր գեպի երկինք եւ տե՛ս, կարո՞ղ ես հասցնել մինչեւ այն. կամ վերցրու ջրով լի խողովակ եւ ջուրը ցայտեցրու մինչեւ երկինք ու տե՛ս, կարո՞ղ ես, արդյօք ծակել երկինքը: «Ինչպե՞ս կարող է այդ լինել, տե՛ս, -ասում եմ ես, -քանի որ երկուսն էլ, ինչի մասին որ ասացիր՝ անկարելի են»: «Եվ այսպես, -ասում է նա, -ինչպես որ անկարելի է այդ, ճիշտ այդպես էլ, երկրային ոգին է անզոր ու տկար: Իսկ հիմա հասկացիր ի վերուստ եկող զորության մասին: Կարկուտը շատ փոքր հատիկ է, սակայն, եթե ընկնի մարդու գլխին, ինչպիսի ցավ կպատճառի: Կամ էլ, վերցրու, օրինակ, անձրեւի կաթիլը, որը տանիքից ընկնում է գետնին ու ծակում քարը: Տեսնո՞ւմ ես, որ փոքրագույնն անգամ, որ ընկնում է վերեւից՝ ունի մեծ զորություն. նույնպես զորեղ է եւ ի վերուստ եկող Աստվածայինը: Դու հավատա ա՛յս Հոգուն, իսկ մյուսից՝ հեռու մնա»:

### ՊԱՏՎԻՐԱՆ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Զար ցանկություններից հեռու մնալու եւ այն մասին, որ Աստծո պատվիրանները հնարավոր է կատարել հավատացյալներին:

1. Հովիվն ասաց ինձ. «Հեռացրու քեզանից ամեն մի չար ցանկություն եւ զգեստավորվիր բարի ու սուրբ ցանկություններով: Քանզի լցվելով բարի ցանկություններով, կատես չարը եւ կղեկավարես նրան, ինչպես որ ուզես: Զար ցանկությունը մոլեզին է ու դժվարությամբ է զսպվում. այն սոսկալի է, եւ իր մոլեզնությամբ կործանում է մարդկանց, հատկապես, եթե նրա որոգայթն ընկնի Աստծո ծառան եւ շրջահայաց չկին՝ չարաչար կտուժի նրանից: Սակայն, այն կործանում է այնպիսի

մարդկանց, որոնք չունեն բարի ցանկության զգեստներ եւ ընկլմված են այս կյանքի գործերի մեջ. հենց նրանց էլ մահվան է մատնում»: «Տե՛ր, -ասում եմ ես, -ինչպիսի՞ն են չար ցանկությունների գործերը, որոնք մարդկանց մահվան են մատնում: Բացատրիր ինձ, որպեսզի ես կարողանամ խուսափել դրանցից»: «Լսի՛ր, թե ինչ գործերի միջոցով է չար ցանկությունը կործանում Աստծո ծառաներին»:

2. «Ամենից առաջ՝ ուրիշի կնոջը, կամ ամուսնուն ցանկանալն է, նաեւ՝ մեծ հարստությունն, բազում ճոխ կերակուրներ ու խմիչքներ, եւ ուրիշ այլ վայելքներ ցանկանալը. քանզի Աստծո ծառաների համար ամեն մի վայելք անիմաստ է ու փուչ: Զար ցանկությունը սատանայի դուստրն է: Այդ պատճառով պարտ է հեռու մնալ չար ցանկությունից, որպեսզի ապրեք Աստծո հետ: Իսկ նրանք, որոնք կտրվեն չար ցանկություններին եւ չեն ընդդիմանա նրան՝ մեկընդմիշտ կմեռնեն, որովհետեւ այն մահաբեր է: Ուրեմն՝ զգեստավորվի՛ր ճշմարտության ցանկությամբ եւ սպառագինվիր Աստծո երկյուղով ու ընդդիմացիր չար ցանկությանը, քանի որ Աստծո երկյուղը բնակվում է բարի ցանկության մեջ: Եվ չար ցանկությունը քեզ զինված տեսնելով Տիրոջ երկյուղածությամբ եւ իրեն ընդդիմացող, հեռու կփախչի քեզնից ու չի հայտնիվ քեզ՝ վախենալով քո զենքից: Ուրեմն՝ երբ հաղթես նրան ու պսակավորվես դրա համար՝ արվիր ճշմարտության ցանկությանը, եւ հատուցելով նրան քո տարած հաղթանակի համար. ծառայիր նրան իր կամքի համաձայն: Եվ եթե ծառայես բարի ցանկությանը եւ հնազանդվես նրան, ապա կարող ես իշխել չար ցանկության վրա ու ղեկավարել նրան, ինչպես որ ուզես»:

3. «Տե՛ր, ես կուզենայի իմանալ, թե ինչպէս պետք է ես ծառայեմ բարի ցանկությանը»: «Լսի՛ր, -ասում է նա, -Աստծո երկյուղն ունեցիր, եւ հավատ առ Աստված, սիրի՛ր ճշմարտությունը, գործի՛ր արդարություն եւ դրա նման այլ բարի գործեր: Այդպիսով դու Աստծո համար

պիտանի ծառա կլինես եւ կապրես Աստծո հետ. ու բոլոր նրանք, որ կծառայեն բարի ցանկությանը՝ կապրեն Աստծո հետ»: Եվ այսպես նա ավարտեց տասներկու պատվիրանները եւ ասաց ինձ. «Ահա՛ եւ քեզ պատվիրանները. ընթացի՛ր ըստ դրանց, նաեւ հորդորիր քեզ լսողներին, որ նրանց ապաշխարությունը անարատ լինի իրենց կյանքի մնացած օրերում: Եվ այս ծառայությունը, որ վստահում եմ քեզ, կատարիր ջանադրությամբ եւ մեծ արդյունքի կհասնես, քանզի սեր կդժոնես բոլոր նրանց մոտ, որ կապաշխարեն ու կհնազանդվեն քո խոսքերին: Ես քեզ հետ կինեմ եւ կդրդեմ նրանց, որ քեզ լսեն»: Ես ասացի նրան. «Տե՛ր, այս պատվիրանները փառավոր են ու հիանալի, եւ ընդունակ են ուրախացնելու այն մարդու սիրաը, որ կարող է կատարել դրանք: Տե՛ր, սակայն չգիտեմ, կարո՞ղ են արդյոք այս պատվիրանները պահվել մարդու կողմից, որովհետեւ դրանք շատ գժվար են»: Նա պատասխանում է ինձ եւ ասում. «Այս պատվիրանները դու հեշտությամբ կպահես, եւ դժվար չի լինի դրանք, եթե համոզված լինես, որ կարող ես պահել, իսկ եթե սրտումդ դնես, որ դրանք չեն կարող պահվել մարդու կողմից, ապա չես պահի դրանք: Արդ, ասում եմ քեզ. եթե չպահես այս պատվիրանները, այլ արհամարհես դրանք, ապա չես փրկվի դու, քո զավակներն ու քո ողջ ընտանիքը, որովհետեւ դու ինքդ կայացրիր քո դատավճիռը, որ այս պատվիրանները չեն կարող պահվել մարդու կողմից»:

4. Այս նա ասում էր մեծ զայրույթով, եւ այնպես, որ ես շփոթվեցի ու վախեցա, քանի որ նրա դեմքն այնպես այլայլվեց, որ մարդ չէր կարող տանել նրա զայրությունը: Բայց տեսնելով, որ ես ամբողջովին շփոթմունքի ու վախի մեջ եմ, սկսեց ավելի մեղմ ու փաղաքշանքով խոսել: «Անհասկացող ու անկայուն մարդ, չե՞ս տեսնում, թե որքան վեհ ու մեծ է փառքն Աստծո, ինչ մեծ ու զարմանալի է նա, որն աշխարհն արարեց մարդու համար, եւ իր բոլոր ստեղծվածները հնազանդեցրեց մարդուն ու նրան իշխանություն տվեց տիրել երկնքի տակ եղած ամեն բանի վրա:

Եթե մարդը հանդիսանում է Աստծո արարածների տիրակալը եւ իշխում է ամեն բանի, ապա մի՞թե նա չի կարող գերիշխել այս պատվիրանների վրա: Այդ հնարավոր է մարդուն, որ Տիրոջն ունի իր սրտում: Իսկ ով Տիրոջն ունի միայն շրթունքների վրա, սրտով քարացած է ու հեռացել Տիրոջից, դրա համար այս պատվիրանները ծանր են ու անիրազործելի: Ուստի, դուք, որ թույլ ու անկայուն եք հավատքով, Տիրոջը դրեք ձեր սրտերում, եւ կտենեք որ այս պատվիրաններից ավելի հաճելի ու մատչելի բան չկա: Դարձե՛ք առ Աստված, թողե՛ք սատանային՝ նրա հաճույքները, որոնք չար են ու դառը, եւ մի՛ վախեցեք սատանայից, որովհետեւ նա ձեզ վրա զորություն չունի, քանի որ ես՝ ապաշխարության հրեշտակ՝ որն իշխում է նրա վրա. ձեզ հետ եմ: Սատանան վախ է ստեղծում, բայց նրա վախը զորություն չունի, ուրեմն, մի՛ վախեցեք նրանից, եւ նա կփախչի ձեզանից»:

5. Ես ասացի նրան. «Տե՛ր, լսիր իմ մի քանի խոսքերը»: «Խոսի՛ր», ասաց նա: «Ամեն մարդ, ասում եմ, ուզում է կատարել Աստծո պատվիրանները, եւ չկա մեկը, որ չխնդրի Աստծուց, որ կարողանա պահել նրա պատվիրանները, բայց սատանան համառ է եւ իր ուժով ընդդիմադրում է Աստծո ծառաներին»: «Սատանան, ասաց նա, չի՛ կարող հաղթել Աստծո ծառաներին, որոնք ամբողջ սրտով հավատում են Տիրոջը: Սատանան կարող է ընդիմամարտել, բայց հաղթել՝ ո՛չ: Եթե նրան հակառակ մնաք, ապա նա պարտված ու ամոթահար կփախչի ձեզանից: Սատանայից, որպես իշխանություն ունեցողի, վախենում են նրանք, որ հավատքի մեջ հաստատուն չեն: Սատանան գայթակղում է Աստծո ծառաներին, եւ եթե գտնում է թույլերի, կործանում է նրանց: Եթե մարդ սափորները լցնի լավ գինով, եւ դրանց հետ դնի նաև ոչ լրիվ լցված սափորներ, ապա երբ դա սափորները ստուգելու եւ համտեսելու, չի մտածում լիքը սափորների մասին, որովհետեւ գիտի, որ նրանք լավն են, այլ կփորձի քիչ լցվածները, թե չե՞ն թթվել արդյոք, որովհետեւ կիսատ լց-

ված սափորներում գինին շուտ է թթվում ու կորցնում են համը: Այսպես էլ սատանան է գալիս Աստծո ծառաների մոտ, որպեսզի փորձի նրանց: Եվ բոլոր նրանք, ովքեր լի են հավատով, արիաբար ընդդիմանում են նրան: Այդ ժամանակ նա մոտենում է նրանց, ովքեր թերի են հավատով եւ հնարավորություն ունենալով, սողոսկում է նրանց մեջ, նրանց հետ անում է ինչ ուզում է, եւ նրանք դառնում են նրա ստրուկները»:

6. «Բայց ես՝ ապաշխարության հրեշտակս, ձեզ եմ ասում. մի՛ վախեցեք սատանայից: Որովհետեւ ես նրա համար եմ ուղարկված, որպեսզի ձեզ հետ լինեմ, որոնք զղջում են ամբողջ սրտով, եւ հաստատեմ հավատքի մեջ: Ուստի, դուք, որ ձեր մեղքերի պատճառով հուսալքվել եք փրկության համար եւ ձեր մեղքերին մեղք բարդելով, ծանրացնում եք ձեր կյանքը. Եթե ամբողջ սրտով դառնաք Տիրոջը եւ ձեր կյանքի մնացած օրերում արդարություն գործեք, ծառայեք նրան իր կամքով, ապա նա կբժշկի ձեր նախկին մեղքերը, եւ զորություն կունենաք գերիշխել սատանայի գործերի վրա: Իսկ սատանայի սպառնալիքներից ամենեւին մի՛ վախեցեք, որովհետեւ դրանք անզոր են, ինչպես մեռած մարդու զղերը: Ուրեմն, լսե՛ք ինձ եւ Աստծուց վախեցեք, որը ի զորու է փրկելու եւ կործանելու. պահե՛ք նրա պատվիրանները ու կապե՛ք Աստծո հետ»: Եվ ես ասացի նրան. «Տե՛ր, ես այժմ հաստատվեցի Տիրոջ բոլոր պատվիրաններում, որովհետեւ դու ինձ հետ ես. եւ ես գիտեմ, որ դու կկործանես սատանայի ողջ զորությունը, եւ մենք կիշխենք նրա վրա: Եվ հուսով եմ, որ Աստծո օգնությամբ կարող եմ պահել պատվիրանները, որ դու ինձ սովորեցրեցիր»: «Կպահե՛ս, ասաց նա, եթե սիրտդ մաքուր լինի Աստծո առաջ, եւ կպահեն նրանք, որոնք իրենց սրտերը կմաքրեն այս կյանքի սին ցանկություններից ու կապեն Աստծո հետ»:

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

### ԱՌԱԿ ԱՌԱՋԻՆ

Մենք այս աշխարհում չունենալով մշտական քաղաք,  
պետք է գալիքը փնտրենք:

Հովհաննես ասաց ինձ. «Գիտե՞ք, դուք՝ Աստծո ծառաներդ, որ գտնվում եք պանդխտության մեջօ, ձեր քաղաքը այս քաղաքից շատ հեռու է գտնվում: Որեմն, եթե ճանաչում եք ձեր հայրենիքը, ուր պիտի բնակվեք, էլ ինչո՞ւ եք այստեղ ագարակներ գնում, հոյակապ շինություններ եւ ոչ պիտանի կացարաններ կառուցում, քանի որ, ով այսպիսի բաներ է պատրաստում այս քաղաքում, նա չի մտածում իր հայրենիքը վերադառնալու մասին: Անհասկացող, երկմիտ եւ ողորմելի մարդ, մի՞թե չես հասկանում, որ այդ ամենը ուրիշինն է, եւ օտարի իշխանության տակ էք: Որովհետեւ այս քաղաքի տերն ասում է. «Կամ հետեւիր իմ օրենքներին, կամ հեռացիր իմ շրջանից»: Ուստի, դու, որ սեփական օրենքը ունես քո հայրենիքում, ի՞նչ կանես: Մի՞թե հանուն քո արտերի եւ այլ ինչքերի կհրաժարվես հայրենական օրենքից: Իսկ եթե հրաժարվես եւ հետո ուզենաս վերադառնալ քո հայրենիք. չես ընդունվի, այլ դուրս կվոնդվես այնտեղից: Դրա համար, տե՛ս, պանդուխտի նման օտար կողմերում ավելին, քան քեզ անհրաժեշտ է ապրելու համար, մի՞ կուտակիր, այլ պատրաստ եղի՛ր, երբ այս քաղաքի տերը ցանկանա քեզ վոնդել, այնտեղից նրա համար, որ չես ենթարկվում իր օրենքներին, հեռանալու քո հայրենիքը եւ ապրելու քո օրենքով՝ անհոգ եւ ուրախ: Ուստի, դուք՝ Աստծո սպասավորներդ, որ ձեր սրտերում Տիրոջը ունեք, տեսէ՛ք. գործե՛ք, Աստծո գործերը՝ հիշելով նրա կողմից տրված պատվիրաններն ու խոստումները, եւ հավատացե՛ք նրան, որ նա կկատարի դրանք, եթե պահեք իր պատվիրանները:

Արտերի փոխարեն գնեք հոգիներ, որ կարիքի մեջ են, ով որքան կարող է. օգնե՛ք այրիներին ու որբերինիւ. ձեր բոլոր հարստությունն ու կարողությունը օգտագործեք այնպիսի գործերի համար, ինչի համար որ այն ստացել էք Աստծուց: Որովհետեւ Տերը ձեզ հարստացրել է, որ դուք այդպիսի ծառայություն մատուցեք իրեն: Այս անելը անհամեմատ ավելի լավ է, քան ագարակներ կամ տներ գնելը, քանի որ այդ ամենը կորչելու է այս աշխարհում, այն դեպքում, երբ այն, ինչ որ կանես հանուն Աստծո, կստանաս քո քաղաքում, եւ ուրախ կլինես՝ առանց հոգսի եւ վախի: Ուրեմն, հեթանոսների հարստությունը մի՛ ցանկացեք, քանի որ այդ վայել չէ Աստծո ծառաներին. ձեր ստացվածքը այնպես օգտագործեք, որ կարողանաք ուրախություն ստանալ: Եվ կեղծ դրամներց չկտրեք, ուրիշինը ձեռք մի՛ տվեք եւ մի՛ ցանկացեք: Կատարի՛ր գործդ ու կփրկվես»:

### ԱՌԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Ինչպես խաղողի որթատունկը պահպան է կնձենու միջոցով, այդպես էլ հարուստին է օգնում աղքատի աղոթքը:

Մի անգամ, երբ ես շրջում էի դաշտում, տեսա կնձենու մի ծառ ու խաղողի մի որթատունկ, ու խորհում էի դրանց պտուղների մասին՝ հայտնվեց Հովհաննես ասաց. «Ի՞նչ ես մտածում այս խաղողի որթատունկի եւ կնձենու մասին»: «Մտածում եմ, թե որքան օգտակար են մեկը, մյուսին» Նա ինձ ասաց. «Այս երկու ծառերը Աստծո ծառաների համար իրենցից խոր իմաստ են ներկայացնում»: «Տե՛ր», -ասում եմ, -կուզենայի իմանալ այդ ծառերի իմաստը»: «Տեսնո՞ւմ ես, -ասում է նա, -որթատունկն ու կնձենին»: «Տեսնում եմ, Տե՛ր», ասում եմ ես: «Սա խաղողի որթատունկն է, -ասում է նա, -եւ պտուղ ունի, իսկ կնձենին անպտուղ ծառ է: Սակայն որթատունկը չի կարող առատ պտուղ տալ, եթե չհենվի կնձենուն: Որովհետեւ գետնին փոված, այն նեխած պտուղներ է տալիս, իսկ

եթե որթատունկը կախված լինի կնձենուց, պտուղ կտա, թե ի՞ր եւ թե՛ կնձենու փոխարեն: Ուրեմն, տեսնո՞ւմ ես, որ կնձենին ոչ պակաս պտուղ է տալիս, եթե ոչ առավել, քան որթատունկը, որովհետեւ որթատունկը կառչած լինելով կնձենուն, տալիս է առատ ու լավ պտուղներ: Բայց գետնին փոխած՝ տալիս է քիչ ու վատ պտուղներ: Այս Աստծո ծառաների՝ հարուստի ու աղքատի համար ծառայում է որպես առակ»: «Ինչպե՞ս, -հարցնում եմ ես, -քացատրիր ինձ»: «Լսի՛ր-ասում է նա, -հարուստը շատ գանձեր ունի, բայց Տիրոջ համար աղքատ է: Զվարճանալով իր հարստությունով, նա շատ քիչ է աղոթում Աստծուն, իսկ եթե անդամ աղոթում է, այն շատ թույլ է ու անզոր: Բայց, երբ հարուստը աղքատին տալիս է այն, ինչի կարիքը որ նա ունի, ապա աղքատը աղոթում է Տիրոջը հարուստի համար, եւ Աստված հարուստին տալիս է ամեն բարիքներ, որովհետեւ աղքատը հարուստ է աղոթքով, եւ նրա աղոթքը մեծ ուժ ունի Տիրոջ առջեւ: Հարուստը հոգ է տանում աղքատին, հավատալով, որ Տերը լսում է նրան, եւ հոժարությամբ ու առանց երկմտելու տալիս է նրան ամեն բան, հոգալով, որ նա ոչ մի բանում պակասություն չունենա: Իսկ աղքատը Աստծուն գոհություն է հայտնում իրեն հոգ տանող հարուստի համար: Սա եւ մյուսը իրենց գործն են անում: Այսպիսով, մարդիկ կարծում են, թե կնձենին պտուղ չի տալիս, բայց նրանք չգիտեն եւ չեն հասկանում, որ երաշտի ժամանակ կնձենին իր մեջ խոնավություն ունենալով, սնում է որթատունկին, իսկ որթատունկը մշտապես խոնավություն ունենալով՝ կրկնակի պտուղ է տալիս եւ իր, եւ կնձնենու փոխարեն: Այդպես էլ աղքատները Տիրոջն աղոթելով հարուստների համար, լսելի են լինում, եւ բազմապատկում են նրանց հարստությունը, իսկ հարուստները հոգալով աղքատների կարիքները, քաջալերում են նրանց հոգիները: Եվ թե՛ նրանք, եւ թե՛ մյուսները բարի գործի մեջ են մասնակցում: Ուրեմն, ով այսպես վարվի, նա չի լրվի Աստծո կողմից, այլ կգրվի կենաց գրքում: Երանելի են նրանք, որոնք հարստություն ունենալով՝ գիտակցում են, որ հարստանում են Աստծո կողմից, եւ ով այսպես զգա, կարող կլինի բարի

գործ կատարելու»:

### ԱՌԱԿ ԵՐՐՈՐԴ


Ինչպես ձմռանը անհնար է տարբերել կյանքով լի ծառերին չորացածներից, այդպես էլ այս կյանքում հնարավոր չէ զատել արդարներին ամբարիշտներից:

Հովիվն ինձ շատ տերեւաթափ ծառեր ցույց տվեց եւ ինձ թվաց, թե դրանք չորացած են, որովհետեւ նրանք բոլորն էլ իրար նման էին: Եվ նա ասաց ինձ. «Տեսնո՞ւմ ես այս ծառերը»: «Տեսնո՞ւմ եմ, Տե՛ր, -ասում եմ ես, -նրանք բոլորն էլ իրար նման են ու չորացած»: Ի պատասխան նա ասում է ինձ. «Այս ծառերը որպես մարդկանց տիպար են ծառայում, որոնք այս աշխարհում բնակվում են»: «Եվ ինչո՞ւ են, Տե՛ր, -ասացի ես, -նրանք կարծես թե չորացած են եւ բոլորն իրար նման»: «Որովհետեւ, -ասում է նա, -այս աշխարհում իրարից չեն զանազանվում ոչ արդարները, ոչ մեղավորները. նրանք իրար նման են: Որովհետեւ այս աշխարհը ձմեռ է արդարների համար, որոնք ապրելով մեղավորների հետ, արտաքնապես չեն զանազանվում նրանցից: Ինչպես ձմռանը բոլոր տերեւաթափ ծառերը նման են իրար եւ չի երեւում թե նրանցից որն է իսկապես չորացած եւ որը դալար, ճիշտ այդպես էլ ներկա աշխարհում անհնար է զանազանել արդարին մեղավորից, քանի որ նրանք բոլորն էլ իրար նման են»:

### ԱՌԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Ինչպես որ ամռանը կանաչ ծառերը տարբերվում են չորերից պտուղներով եւ տերեւներով, այդպես էլ գալիք դարում արդարները ամբարիշտներից տարբերվում են երանություններով:

Հովիվն ինձ նորից շատ ծառեր ցույց տվեց, որոնցից մի քանիսը



ծաղկել էին, իսկ մյուսները չորացած էին: Եվ ասաց ինձ. «Տեսնո՞ւմ ես այս ծառերը»: «Տեսնում եմ, Տե՛ր,-պատասխանում եմ ես,-նրանց մի մասը չորացել է, իսկ մյուսները ծածկված են տերեւներով»: «Այս կանաչախիտ ծառերը,-ասում է նա,-վկայում է արդարներին, որոնք պիտի ապրեն գալիք աշխարհում, քանի որ գալիք աշխարհը արդարների համար ամառ է նշանակում, իսկ մեղավորների համար՝ ձմեռ: Ուստի, երբ կշողա Տիրոջ ողորմությունը, այնժամ կերեւան Աստծո ծառաները, ու բոլորը հայտնի կդառնան: Ինչպես որ ամռանը ամեն մի ծառի պտուղ հայտնի է դառնում եւ ճանաչվում է նրա ինչ լինելը, այդպես էլ հայտնի կլինեն ու կիմացվեն արդարների պտուղները, եւ բոլորը ուրախ կլինեն այն աշխարհում: Հեթանոսներն ու մեղավորներն այն չորացած ծառերն են, որ դու տեսար. նրանք չորացած ու անպտուղ կմնան այն աշխարհում եւ կրակի կտրվեն ինչպես վառելափայտ. եւ հայտնի կդառնա, որ նրանց գործերն իրենց կյանքի ընթացքում չար են եղել: Մեղավորները կտրվեն կրակին, որովհետեւ մեղսագործեցին եւ չգողացին իրենց մեղքերի համար, իսկ հեթանոսները՝ որովհետեւ չճանաչեցին իրենց Արարիչ Աստծուն: Ուստի, դու բարի պտուղ տուր, որպեսզի քո պտուղը ի հայտ գա այն ամռանը: Հրաժարվի՞ր շատ հոգսերից եւ երբեք չես մեղանչի, որովհետեւ շատ հոգս ունեցողները շատ բաներում են մեղք գործում, քանի որ զբաղված են իրենց գործերով եւ Աստծուն չեն ծառայում: Ինչպե՞ս կարող է մարդ, որը չի ծառայում Աստծուն, խնդրել ու ստանալ ինչ որ բան Աստծուց: Նրանք, որոնք ծառայում են Աստծուն, խնդրում են եւ ստանում են իրենց ինդրվածները, իսկ նրանք, որ չեն ծառայում Աստծուն, չեն ստանում: Ով զբաղվում է մի գործով, նա կարող է ծառայել Աստծուն, որովհետեւ նրա հոգին չի հեռանում Տիրոջից, այլ մաքուր մտքով ծառայում է նրան: Ուրեմն, եթե այս կատարես, գալիք աշխարհում պտուղ կունենաս, ինչպես եւ բոլոր նրանք, որ այս կկատարեն՝ պտուղ կունենան:

## ԱՌԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ճշմարիտ պահքի եւ մարմնական մաքրության մասին:

Մի անգամ, երբ ես պահքի մեջ էի եւ լեռան վրա նստած գոհություն էի հայտնում Տիրոջը, այն բանի համար, ինչ որ կատարեց ինձ հետ, տեսա հովիվը նստած է կողքիս: Եվ նա ասում է ինձ. «Ինչո՞ւ ես այսքան վաղ եկել այստեղ»: «Տե՛ր,-ասում եմ,-որովհետեւ ես հսկման մեջ եմ»: «Իսկ ի՞նչ է հսկումը», հարցրեց նա: «Այսինքն՝ պահք եմ պահում», -ասացի ես: «Իսկ ինչպե՞ս ես պահք պահում», ասում է նա: «Ինչպես սովորաբար պահք եմ պահել,-ասում եմ,-այնպես էլ այժմ»: «Դուք Աստծո առաջ պահք պահել չգիտեք,-ասաց նա, -եւ պահեցողությունը, որ դուք եք անում, անօգուտ է»: «Տե՛ր, ինչո՞ւ ես դա ասում»: «Այն, ինչ դուք կարծում եք պահեցողություն է, ծմբարիտ պահք չէ, սակայն ես կուսուցանեմ, թե որ պահքն է կատարյալ եւ ընդունելի Տիրոջը»:

«Լսի՛ր,-ասում է նա, -Աստված նման ունայն պահեցողություն չի ցանկանումք, որովհետեւ այդպիսի պահքով արդարություն չես գործի: Աստծու առջեւ պահեցողություն արա հետեւյալ կերպ. կյանքումդ խորամանկություն մի արա, այլ Աստծուն ծառայիր մաքուր սրտով. պահիր նրա պատվիրանները, ընթացիր նրա հրահանգներով, եւ սրտումդ մի թույլ տուր ոչ մի չար ցանկություն մտնի: Հավատա՛ Աստծուն, եւ եթե դու այս ամենը կատարես ու Աստծո երկյուղն ունենաս եւ հրաժարվես ամեն չար գործց, ապա կապրես Աստծո հետ: Այդպիսով, դու կատարած կլինես մեծ եւ Աստծուն հաճելի պահեցողություն»:

2. «Լսիր պահեցողության վերաբերյալ մի առակ, որ ցանկանում եմ պատմել քեզ: Մի մարդ ուներ ագարակներ եւ շատ ծառաներ, եւ հողերի մի մասում տնկել էր խաղողի այգին: Հեռավոր ճամփորդության ուղեւորվելուց առաջ, ընտրեց մի ծառայի, որը ամենանվիրվածն ու աղնիվն էր, կանչեց նրան եւ հանձնեց խաղողի այգին, որպեսզի նա խաղո-

դի որթատունկերին հենարան դնի, խոստանալով այդ հրամանի կատարման համար ազատություն տալ նրան: Դրանից բացի տերը նրան ուղիղ ոչինչ չհրամայեց, եւ այդպես ճանապարհ ընկալ: Ծառան խնամքով կատարեց տիրոջ պատվերը. նա հենարաններ դրեց որթատունկերին, բայց նկատելով, որ այնտեղ շատ մոլախոտ կա, սկսեց ինքն իրեն մտածել. «Ես կատարեցի տիրոջ պատվերը, այժմ փորձեմ մաքրել այդին եւ այն ավելի գեղեցիկ կլինի ու մոլախոտը քաղհաներուց հետո ավելի առատ բերք կտա՝ չխեղդվելով մոլախոտերից»: Եվ նա սկսեց փորել այդին եւ այնտեղի ողջ մոլախոտը քաղհանեց ու այսպիսով, խաղողի այգին դարձավ առավել ծաղկուն: Որոշ ժամանակ անց տերը վերադարձավ ու խաղողի այգի գնաց: Երբ նա տեսավ խաղողի որթատունկերը լավ խնամված են, եւ ավելին՝ այգին մաքրված է մոլախոտից, քաղհանած եւ որթատունկերը առատ բերքով, ու շատ գոհ մնաց ծառայի արարքից: Եվ այսպես, կանչեց իր սիրելի որդուն, որն իր ժառանգորդն էր, բարեկամներին եւ իր խորհրդատուներին ու պատմեց նրանց, թե ինչ էր պատվիրել ծառային եւ ինչ արեց նա իր ասածից ավելին: Նրանք իսկույն ողջունեցին ծառային, որ նա իր տիրոջից այդքան մեծ գովասանքի արժանացավ: Իսկ տերն ասաց նրանց. «Ես այս ծառային ազատություն էի խոստացել, եթե նա կատարեր իրեն տրված հրամանը: Նա կատարեց այն եւ ավելին՝ նա բարի գործ արեց այդու համար, որն ինձ շատ գուրք եկավ: Ուստի, այդ գործի համար, որ նա կատարեց, ես ցանկանում եմ նրան դարձնել իմ որդու ժառանգակիցը, որովհետեւ բարին խորհելով, նա այն չթողեց, այլ ի գործ դրեց»:

Տիրոջ այս մտադրությանը՝ այսինքն, որպեսզի ծառանգակից դառնա, հավանեցին եւ որդին եւ նրա ընկերները: Մի քանի օր անց, տերը խնջույք կազմակերպեց եւ իր սեղանից այն ծառային շատ կերպակուր ուղարկեց: Ստանալով գրանք, ծառան վերցրեց որքան հարկավոր էր իրեն, իսկ մնացածը բաժանեց իր ծառայակիցների միջեւ: Երբ նրանք ստացան կերակուրները, ուրախացան եւ սկսեցին աղոթել նրա

համար, որ ավելի մեծ սիրո արժանանա տիրոջ մոտ, որովհետեւ այդքան ազնիվ էր վերաբերվել իրենց հետ: Այս ամեն կատարվածի մասին լսեց տերը եւ նորից շատ ուրախացավ: Նա կրկին կանչեց իր որդուն եւ բարկամներին ու նրանց պատմեց իր ծառայի արարքը՝ թե ինչպես է նա վարվել իր ուղարկած կերակուրների հետ. եւ նրանք ավելի խրախուսեցին տիրոջ մտադրությունը, որ ծառան դառնա որդու ժառանգակիցը»:

3. Ես ասում եմ նրան. «Տե՛ր, ես չեմ հասկանում այս առակները եւ չեմ կարող ըմբռնել, եթե դու չբացատրես ինձ»: «Ես ամեն բան, որ ցույց կտամ, կամ կասեմ քեզ, կբացատրեմ, -ասաց նա: Պահիր Տիրոջ պատվիրանները ու Հածո կլինես Աստծուն եւ կգրվես նրանց թվում, որ պահեցին նրա պատվիրանները: Իսկ եթե Տիրոջ պատվիրաններից դուրս որեւէ բարի գործ անես, ապա առավել մեծ փառք կվաստակես եւ Տիրոջ մոտ առավել փառավոր կլինես, քան առաջ: Ուրեմն, եթե պահես Տիրոջ պատվիրանները եւ նրանց կցես նաեւ այս հակումները, մեծ ուրախություն կունենաս, մանավանդ, եթե կատարես իմ խորհուրդների համաձայն»: «Տե՛ր, ես ամեն բան կկատարեմ, ինչ որ դու ինձ կհրամայես, քանզի գիտեմ, որ դու ինձ հետ կլինես»: «Քեզ հետ կլինեմ, -ասաց նա, -որովհետեւ դու այդպիսի նպատակներ ունես. կլինեմ նաեւ բոլոր նրանց հետ, որոնք նույնպես այդպիսի նպատակներ կունենան»: «Այս պահեցողությունը, -շարունակեց նա, -շատ լավ է Տիրոջ պատվիրանները կատարելիս, եւ այն պահիր հետեւյալ կերպ. նախ պահիր քեզ ամեն տեսակի վատ խոսքից ու չար ցանկությունից, եւ սիրտդ մաքրիր այս աշխարհի բոլոր ունայնություններից: Եթե այդ կատարես, պահքդ ճշմարիտ կլինի: Արա՞ ահա այսպես. վերն ասածները կատարելով, այն օրը երբ պահեցողություն կանես, բացի հացից ու ջրից ուրիշ ոչինչ չճաշակես եւ հաշվելով ծախսերը, որ կերակուրների համար պիտի անեիր ուրիշ օրերի պես, այդ օրվա խնայածը հավաքիր եւ տուր այրու, որբի, կամ կարիքավորի, այսպիսի դու կլինարհեցնես հոգիդ եւ քեզնից ստացածը կլիխաց-

նի իր հոգին ու նա քեզ համար կաղոթի Տիրոջը: Եթե պահքը կատարես այնպես, ինչպես ես պատվիրեցի, ապա քո զոհաբերությունը ընդունելի կլինի Տիրոջը, եւ այդ պահքը կդրանցվի, ու այդպես կատարած գործը հրաշալի է, ուրախարար եւ Աստծուն հաճելի: Եթե այս պահես քո զավակներով եւ ողջ տնով՝ երանելի կլինիս: Եվ ամեն որ, ով կափահի այս, երանելի կլինի, եւ ինչ որ Տիրոջից խնդրելու լինի՝ կատանա»:

4. Եվ ես նրան աղերսում էի, որ նա բացատրի ինձ ագարակի տիրոջ, խաղողի այգու եւ ծառայի, որը հենարաններ էր գրել, քաղհանած խոտերի, որդու եւ խորհրդի կանչված բարեկամների մասին առակը: Որովհետեւ ես հասկացա, որ այդ ամենը առակ է»: Սակայն նա ինձ պատասխանեց ու ասաց. «Դու շատ անվախ ես քո հարցասիրությամբ: Դու ոչ մի բանի մասին չպետք է հարցնես. ինչ որ պետք լինի քեզ բացատրելով՝ կբացատրվի»: «Տե՛ր, -ասում եմ, -զուր կլինի ինձ տեսնել այն ամենը, որը ցույց տաս ու չբացատրես. եթե չհասկանամ դրանց իմաստը. ճիշտ այդպես էլ առակները, եթե դու ինձ մատուցես առանց մեկնության»: Նա կրկին պատասխանում է ինձ. «Ով Աստծո ծառա է եւ Տիրոջն ունի իր սրտում, նա նրանից իմաստություն է խնդրում եւ ստանում է. եւ լուծում է ամեն մի առակ եւ հասկանում է Տիրոջ խոսքերը՝ ասված առակի ձեւով: Իսկ նրանք, որ անհոգ ու ծույլ են աղոթքի նկատմամբ, այդպիսիները տարակուսում են Տիրոջից խնդրել, մինչդեռ Տերը գթառատ է իրենից խնդրողների հանգեպ: Իսկ դու, որ հաստատված ես այն սրբազնագույն հրեշտակի կողմից եւ նրանից աղոթքի զորություն ես ստացել, եթե ծույլ չես, ինչո՞ւ Տիրոջից իմաստություն չես խնդրում եւ ստանում նրանից»: Ես ասում եմ նրան. «Տե՛ր, ես երբ քեզ ունեմ ինձ հետ, հարկ է ամեն բանի մասին քեզնից խնդրել եւ հարցնել, որովհետեւ դու ինձ ամեն բան ցույց ես տալիս եւ խոսում հետս: Եթե այս ամենը ես առանց քեզ տեսնեի եւ լսեի, այնժամ Տիրոջից կիսնդրեի, որ բացատրվեր ինձ»:

5. Եվ նա պատասխանեց. «Ես առաջ էլ էի ասում, որ դու հմուտ ես եւ անվախ առակների մեկնությունները հարցնելու մեջ: Քանի որ համառ ես, ես կբացատրեմ քեզ ուզածդ առակը կալվածքի եւ այլ բաների մասին, որպեսզի դու բոլորին հայտնի անես: Ուրեմն, լսի՛ր եւ հասկացի՛ր, -ասաց նա: -Կալվածքը, որի մասին խոսվում է առակում, խորհրդանշում է աշխարհը: Կալվածքի տերը Արարիչն է, որն ամեն բան կարգավորել է եւ հաստատել: Որդին՝ դա Սուրբ Հոգին էօ: Խաղողի այգին՝ ժողովուրդը, որ տնկել է Տերը: Հենարանները՝ Տիրոջ կողմից. Իր ժողովրդին պահպանելու համար կարգված հրեշտակներն են: Խաղողի այգուց արմատախիլ արված մոլախոտերը՝ Աստծո ծառաների հանցանքներն են: Կերակուրները, որ տերը ինչնույրի ժամանակ ուղարկում էր ծառային՝ պատվիրաններն են, որոնք Տերը իր Որդու միջոցով տվեց իր ժողովրդին: Խորհրդի կանչված բարեկամները՝ նախաստեղծ սուրբ հրեշտակներն են: Տիրոջ բացակայությունը՝ խորհրդանշում է այն ժամանակահատվածը, որ մնացել է մինչեւ իր գալուստը»: Ես ասում եմ նրան. «Տե՛ր, այս ամենը վեհաբանչ է ու զարմանալի. Կարո՞ղ էի ես, Տեր, հասկանալ այն: Եվ ոչ մի մարդ, անգամ շատ խելացի, չի կարող այդ հասկանալ: Բայց այժմ ինձ բացատրիր, ինչի մասին որ կհարցնեմ քեզ»: «Հարցրու ինչ ուզում ես»: «Ինչո՞ւ է Աստծո Որդին, -ասում եմ ես, -այս առակում ներկայացվում է որպես ծառա»:

6. «Լսի՛ր, -ասաց նա: Աստծո Որդին ներկայացվում է ծառայի կերպարանքով, սակայն ունի մեծ զորություն եւ իշխանություն»: «Ինչպե՞ս, տե՛ր, -ասում եմ»: «Աստված, -ասում է նա, -տնկել է խաղողի այգին, այսինքն ստեղծել է մարդկությունը եւ վստահել իր Որդուն. Որդին կարգել է հրեշտակներին՝ մարդկանցից ամեն մեկին պահպանելու համար. եւ ինքն էլ բավական շատ է աշխատել եւ բավական շատ է չարչարվել նրանց մեղքերը մաքրելու համար. քանզի ոչ մի խաղողի այգի չի կարող մաքրվել առանց ջանքերի ու հոգածության: Մաքրելով իր ժողովրդի մեղքերը, նա նրանց ցույց տվեց կյանքի ուղին եւ տվեց օրենքը, որ ըն-

դունել էր Հորից: Տեսնո՞ւմ ես, որ նա է ժողովրդի Տերը՝ Հորից ստացված լի իշխանությամբ: Իսկ թե ինչո՞ւ ժառանգության կապակցությամբ արված խորհրդին Տերը կանչեց իր Որդուն եւ մեծափառ հրեշտակներին՝ լսի՛ր: Աստված բոլոր արարածներին ստեղծող նախագո Սուրբ Հոգինք բնակվեց իր ցանկացած մարմնին մեջ: Եվ այդ մարմինը, որտեղ բնակվեց Սուրբ Հոգին, լավ ծառայեց Հոգուն՝ ընթանալով անարատությամբ ու սրբությամբ, ոչնչով չապականելով Հոգին: Ուստի քանի որ նա /մարմինը/ ապրում էր անարատությամբ եւ համագործակցում էր Հոգու հետ եւ արիաբար աջակցում էր Նրան ամեն բանում, ապա Տերը նրան ընդունեց, որովհետեւ իրեն հաճելի էր մարմնի կյանքը, որը չպղծեց երկրի վրա՝ իր մեջ ունենալով Սուրբ Հոգին: Այսպիսով, նա խորհրդի կանչեց Որդուն եւ բարի հրեշտակներին, որպեսզի Հոգուն անարատությամբ ծառայած այդ մարմինը եւս հանգրվան ստանա.ո. որպեսզի առանց պարզեւի չմնա անարատ ու մաքուր մարմինը, որտեղ բնակվել է Սուրբ Հոգին:

Աչա եւ այս առակի մեկնությունը»:

7. «Տե՛ր, -ասում եմ, -լսելով այս բացատրությունը, ես ուրախությամբ լցվեցի»: «Լսի՛ր շարունակությունը, -ասաց նա: Քո այդ մարմինը պահիր սուրբ եւ անարատ, որպեսզի նրա մեջ բնակվող Հոգին նրանից գոհ լինի եւ փրկի քո մարմինը: Նաեւ տե՛ս, երբեք մտքովդ չանցկացնես, թե այդ մարմինը մեռնող է եւ չչարաշահես այն որեւէ չար ցանկությամբ: Որովհետեւ, եթե պղծես մարմինդ, դրանով պղծած կլինես Սուրբ Հոգին, իսկ եթե պղծես Սուրբ Հոգին՝ չես ապրի»: Եվ ես ասացի. «Ի՞նչ կլինի, եթե մեկը իր վարքով, նախկինում չիմանալով այս խոսքերը, պղծել է իր մարմինը. նա ինչպե՞ս փրկություն կստանա»: «Անգիտության նախկին գործերը, -ասաց նա, -կարող է դարմանել միայն Աստված, որովհետեւ նրան է պատկանում ամեն իշխանություն: Բայց այժմ, պահպանի՛ր քեզ, եւ ամենակարող ու ողորմած Տերը քավություն կշնորհի նախկին մեղքերիդ, եթե հետագայում չպղծես մարմինդ ու հոգիդ. քանզի այս երկուսը

լծակից են իրար, եւ մեկն առանց մյուսի չի պղծվում: Ուստի, թե՛ այն, թե՛ մյուսը պահիր սրբությամբ եւ կապրես Աստծո հետ»:

ԱՌԱԿ ՎԵՅՑԵՐՈՐԴ

Երկու տեսակի ցանկասեր մարդկանց եւ նրանց պատժի մասին:

1. Երբ ես տանը նստած փառաբանում էի Տիրոջը բոլոր տեսածներիս համար եւ խորհում էի պատվիրանների մասին, թե որքան հիանալի են դրանք, հաստատուն, պատվական ու քաղցր, եւ ի զորու են փրկելու մարդու Հոգին, ինքս ինձ ասում էի. «Երանելի կլինեմ ես, եթե ընթանամ այդ պատվիրաններով, եւ ամեն մեկը, որ ըմթանա նրանցով, երանելի կլինի»: Երբ ես խոսում էի ինքս ինձ հետ, հանկարծ տեսա, Հովիվը նստել է կողքիս: Եվ նա ասում է ինձ հետեւյալը. «Ի՞նչ ես տատամսելով խորհրդածում քեզ մատուցած իմ պատվիրանների մասին: Դրանք հիանալի են. ամենեւին մի՛ կասկածիր, այլ համակվիր հավատքով առ Տեր եւ կարող կլինես կատարելու դրանք, որովհետեւ դրա համար զորություն կտամ քեզ: Այս պատվիրանները օգտակար են նրանց համար, ովքեր ցանկանում են ապահարացել, իսկ եթե չընթանան ըստ դրանց, ապա նրանց ապաշխարությունն ապարդյուն կլինի: Ուրեմն, դուք՝ ապաշխարողներդ, հետացըք ձեզնից այս աշխարհի կործանող խաբեռությունները: Զգեստավորվե՛ք ամենայն առաքինությամբ, որպեսզի կարող լինեք պահելու այս պատվիրանները, եւ ոչինչ չափելացնելով ձեր մեղքերին: Որովհետեւ, եթե նորից չմեղանչեք, կհարթեք ձեր նախկին մեղքերը: Ընթացե՛ք ըստ իմ պատվիրանների եւ կապրեք Աստծո հետ: Այս ամենը ձեզ արդեն ասվել է իմ կողմից»: Այս խոսքերից հետո նա ասաց ինձ. «Արի գնանք հովիտ եւ ես քեզ ոչիսարներ ցույց կտամ»: «Գնանք, Տե՛ր», -ասացի ես: Եվ մենք գնացինք մի հովիտ, եւ այնտեղ նա ինձ ցույց տվեց մի երիտասարդ հովիկ՝ հագնված թանկագին ծիրանագույն զգեստներ: Նրա հոտը բազմաքանակ էր, ոչիսարները լիության մեջ էին եւ ուրախ ցատկուելով վազվզում էին այս ու այն կողմ: Եվ ինքը՝ Հովիվը, հրճվում էր

իր հոտով եւ ուրախ դեմքով քայլում էր ոչխարների կողքից:

2. Ապաշխարության հրեշտակն ասաց ինձ. «Տեսնո՞ւմ ես այս հովվին»: «Տեսնում եմ, տե՛ր», ասում եմ ես:

«Այս,-ասաց նա,-հաճույքի ու խաբեռության հրեշտակն է: Նա կործանում է Աստծո ծառաների հոգիները եւ նրանց գայթակղելով չար ցանկություններով, շեղում է ճշմարտությունից. ու նրանք կործանվում են, որովհետեւ մոռանում են կենդանի Աստծո պատվիրանները եւ ապրում են ճոխության ու փուչ վայելքների մեջ. եւ կործանման են տարվում այս չար հրեշտակի կողմից, ոմանք մինչեւ մահ, ոմանք՝ մինչեւ ապականություն»: «Տե՛ր, հարցնում եմ ես,-չեմ հասկանում, ի՞նչ է նշանակում մինչեւ մահ, եւ ի՞նչ՝ մինչեւ ապականություն»: «Լսի՛ր,-ասում է նա,-այն ոչխարները, որ դու տեսար շատ ուրախ ու ցատկոտող, խորհրդանշում են նրանց, ովքեր մեկնդմիշտ հեռացել են Աստծուց եւ տրվել են այս աշխարհի վայելքներին: Ուստի, նրանց համար այլեւս չկա վերադարձ դեպի կյանք ապաշխարության միջոցով, որովհետեւ նրանք իրենց հանցաներին բարդել են էլ ավելին՝ անպատկառորեն անարդել են Աստծո անունը: Այսպիսի մարդկանց կյանքը մահ է: Իսկ քո տեսած այն ոչխարները, որոնք չեն ցատկոտում, այլ արածում էին միասին, խորհրդանշում են նրանց, ովքեր թեեւ տրվել են հաճույքների ու վայելքների, սակայն ոչ մի հայհոյություն չեն արել Աստծո դեմ. սրանք ճշմարտությունից չեն հեռացել, եւ սրանց համար դեռ ապաշխարության հնար կա, որի միջոցով կարող են կյանք ունենալ: Ապականումը կարող է վերականգնման որոշ հույս ունենալ, իսկ մահն հավիտենական վախճան ունի»: Մենք մի փոքր էլ անցանք եւ նա ցույց տվեց ինձ մի խոշորակազմ հովվի, տեսքից վայրենի, հագին այծի ճերմակ մորթ, ուսին պայուսակ ուներ, ձեռքում՝ ոստոտ ու շատ ամուր մի փայտ ու մեծ մտրակ: Նրա դեմքը այնքան խիստ ու դաժան էր, որ սարսափազգու էր: Նա այն երիտասարդ հովվից ընդունում էր այդ ոչխարներին, որոնք ապրում էին հա-

ճույքի մեջ, բայց չէին ցատկոտում, եւ նրանց քշում տանում էր ժայռոտ ու փշոտ տեղերով, այնպես որ նրանք չէին կարողանում դուրս պրծնել փշերի ու տատասկների միջից, այլ խճճվելով նրանց մեջ, շատ էին տառապում եւ ցավեր կրում նրա հարվածներից: Նա նրանց այս ու այն կողմէ էր քշում, նրանց հանգիստ չէր տալիս եւ թույլ չէր տալիս որեւէ տեղում դադար առնեն:

3. Տեսնելով որ ոչխարները ենթարկվում են այդպիսի չարչարանքների ու հարվածների, ես խղճացի նրանց, որ տառապում էին ու հանգիստ չունեին: Հովվին, որ ինձ հետ էր, ես ասացի. «Տե՛ր, ո՞վ է այս անողորմ ու դաժան հովվը, որը փոքր և ինչ անգամ գութ չունի այդ ոչխարների հանդեպ»: «Այդ,-ասում է նա,-պատժի հրեշտակն է: Նա արդար հրեշտակներից է, սակայն կարգված է պատմելու համար: Նրան են հանձնարարվում նրանք, ովքեր շեղվել են Աստծուց եւ իրենց տվել են այս աշխարհի տոփանքներին ու վայելքներին, եւ նա նրանց պատժում է ըստ արժանվույն, զանազան ու խիստ պատիժներով»: «Տե՛ր,-ասում եմ,-ես կուզենայի իմանալ թե այդ զանազան պատիժները որո՞նք են»: Լսի՛ր,-ասում է նա,-այդ զանազան պատիժներն ու չարչարանքները այն են, որոնց մարդիկ ենթարկվում են իրենց ներկա կյանքում: Ոմանք վնասներ են կրում, ոմանք՝ չքավորություն, ուրիշները՝ տարբեր հիվանդություններ, ոմանք կյանքի անկայունություն, ուրիշները անարժան մարդկանց կողմից ենթարկվում են անարգանքի եւ շատ ու շատ անախորժությունների: Շատ շատերը անկայուն մտադրություններով տարբեր գործեր են ձեռնարկում, բայց նրանց ոչինչ չի հաջողվում, եւ ասում են, որ իրենք հաջողություն չունեն իրենց գործերում. չհասկանալով, որ իրենք շատ փատ գործեր են կատարել, բայց բողոքում են Աստծո դեմ: Դրանից հետո, երբ շատ վշտեր կրեն, նրանք ինձ են փոխանցվում բարի խրատներ ստանալու համար, զորանում են առ Աստված հավատքով եւ իրենց կյանքի մնացյալ օրերում մաքուր սրտով ծառայում են Տիրոջը:

Եվ, երբ սկսում են զղալ իրենց մեղքերի համար, սրտերում հիշում են իրենց անօրեն գործերը եւ փառաբանում են Տիրոջը, ասելով, որ նա է արդար Դատավորը եւ որ իրենք բոլորը պատժվել են ըստ արժանվույն, իրենց կատարած գործերի համար: Եվ կյանքի մնացած ընթացքում, մաքուր սրտով ծառայում են Աստծուն եւ Հաջողություններ են ունենում իրենց բոլոր գործերում, Աստծուց ստանալով ամեն բան, ինչ էլ որ խնդրել են, այնժամ գոհություն են մատուցում Աստծուն, որ հաճնարարվել են ինձ եւ այլեւս ոչ մի դաժանության չեն ենթարկվում»:

4. Ես ասում եմ նրան. «Տե՛ր, ասա ինձ Հետեւյալը»: «Ի՞նչ է քեզ Հետաքրքրում»», ասում է նա: Ես ասացի նրան. «Տե՛ր, Աստծո երկյուղը լքածները արդյոք նույնքա՞ն ժամանակ են չարչարվում, որքան ժամանակ որ տրվել են վայելքների»: «Նույնքան ժամանակ էլ չարչարվում են», -ասաց նա: «Քիչ են չարչարվում, -ասում եմ ես, -ակետք է, որ վայելքների տրվածներն ու Աստծուն մոռացածները յոթ անգամ ավելի պատիժ կրեն»: «Անմիտ ես դու, -ասաց նա, -եւ չես հասկանում պատժի ուժը»: «Տե՛ր, -ասում եմ ես, -եթե ես հասկանայի, ապա չէի խնդրի, որ դու ինձ բացատրեիր»: «Լսի՛ր, -ասում է նա, -թե ինչպիսի ուժ ունեն եւ մեկը եւ մյուսը՝ վայելքն ու պատիժը: Վայելքի մեկ ժամը սահմանափակվում է իր տեւողությամբ իսկ պատժի մեկ ժամը հավասարագոր է երեսուն օրվա: Ով մեկ ժամ տրվել է տոփանքների ու վայելքների, կչարչարվի մեկ օր, բայց չարչարանքի մեկ օրը հավասար է մի ամբողջ տարվա: Հետեւաբար, ով քանի օր վայելքների մեջ է եղել այդքան տարի էլ կչարչարվի: Տեսնու՞մ ես, -ասում է նա-որ աշխարհի վայելքների ու գայթակղությունների պահը շատ կարճատել է, իսկ պատժինն ու չարչարանքին՝ երկարատել»:

5. Ես ասացի նրան. «Այնքան էլ չեմ հասկանում այն, ինչ վերաբերվում է վայելքի ու պատժի տեւողությանը, բացատրի՛ր խնդրում եմ, ավելի պարզ»: «Քո անհասկացողությունը համառորեն մնում է քեզ

հետ, եւ դու չես ուզում սիրտդ մաքրել ու ծառայել Աստծուն: Տե՛ս, որ երբ ժամանակը լրանա, անմիտ չմնաս: Իսկ արդ, քանի որ ուզում ես, լսի՛ր, որ հասկանաս: Ով մեկ օր տրվում է վայելքների եւ անում է այն, ինչ որ ցանկանում է նրա հոգին, նա լցվում է մեծագույն հիմարությամբ եւ առավոտյան չի գիտակցում իր կատարածները ու մոռանում է, թե ինչ է արել անցյալ օրը, որովհետեւ վայելքներն ու գայթակղությունները ոչ մի հիշողություն չունեն այն հիմարության պատճառով, որով լցվում է մարդը: Բայց, երբ պատիժն ու չարչարանքը հասնում են մարդուն մեկ օրով, ապա նա տառապում է մի ամբողջ տարի, որովհետեւ պատիժն ու տառապանքը շատ ուժեղ հիշողություն ունեն: Ամբողջ տարվա ընթացքում տառապողը, հիշում է թե՛ փուչ վայելքների մասին, թե՛ հասկանում է, որ դրանց պատճառով է դառնություններ կրում: Այդ ձեւով էն պատժվում նրանք, որոնք տրվել են վայելքների ու գայթակղությունների, որովհետեւ կյանք ունենալով, իրենք իրենց մահվան են մատնել»: Ես ասացի նրան. «Տե՛ր, ո՞ր վայելքներն են վնասակար»: «Ամեն գործ, -ասում է նա, -մարդու համար վայելք է, եթե նա այն կատարում է հաճույքով: Որովհետեւ նաեւ բարկացկու մարդը իր գործը կատարելով հաճույք է ստանում, եւ՝ պոռնիկը, եւ՝ գինեմոլը, եւ՝ ամբաստավանողն ու խաբերան, եւ՝ շողոբորթը, եւ՝ արյունաբրուն, ամեն ոք, որ նման գործ է անում, բավարարում է իր կրքերը ու հաճույք է զգում իր գործից: Բոլոր այս հաճույքները վնասակար են Աստծո ծառաների համար, եւ հենց դրանց պատճառով էլ նրանք չարչարվում են: Բայց նաեւ կան հաճույքներ, որոնք փրկարար են մարդկանց համար: Շատերը, բարի գործ անելով՝ հաճույք են ստանում, դրանց մեջ իրենց համար քաղցրություն գտնելով: Այդպիսի վայելքները օգտակար են Աստծո ծառաների համար եւ կյանք են նախապատրաստում մարդկանց համար: Իսկ նրանք, ում մասին ասվեց նախապես, ծնում են պատիժներ ու տառապանքներ, եւ նրանք որոնք կրեն դրանք ու չեն զղա իրենց հանցանքների համար՝ մահ ձեռք կբերեն»:

## ԱՌԱԿ ՅՈՒԹԵՐՈՐԴ

Այն մասին, որ ապաշխարողները պետք է ապաշխարությանը արժանի պտուղներ բերեն:

Մի քանի օր անց նույն այն հովտում, որտեղ տեսել էի այն հովիվներին, Հանդիպեցի հովվին, եւ նա ասաց. «Ի՞նչ ես փնտրում»: «Տե՛ր, ես եկել եմ, -ասում եմ, -քեզ խնդրելու, որ դու պատժի Համար կարգված հրեշտակին հրամայես, որ հեռանա իմ տնից, որովհետեւ նա ինձ խիստ վնասում է»: «Քեզ անհրաժեշտ է Համբերել վշտի եւ դառնության, որով հետեւ այն փառավոր հրեշտակը, որն ուզում է քեզ փորձել, այդպես է պատվիրել քեզ համար»: «Տե՛ր, -ասում եմ, -ի՞նչ չարություն եմ արել, որ տրվել եմ այդ հրեշտակի ձեռքը»: «Լսի՛ր, -ասում է նա:- Դու շատ մեղքեր ունես, բայց ոչ այնքան շատ, որպեսզի Հարկ լիներ քեզ տալու այդ հրեշտակի ձեռքը, սակայն քո ընտանիքը մեծ մեղքեր ու հանցանքներ է գործել, եւ այն փառավոր հրեշտակը բարկացել է նրանց գործերի Համար ու հրամայել է, որ դու որոշ ժամանակ պատիճ կրես, որպեսզի նրանք էլ զղջան իրենց մեղքերը եւ սրբվեն այս աշխարհի չար ցանկություններից: Եվ երբ նրանք կապաշխարեն ու կմաքրվեն, այնժամ քեզնից կհեռանա պատժի հրեշտակը»: Ես ասացի նրան. «Տե՛ր, եթե նրանք այնպես են իրենց պահել, որ բարկացրել են փառավոր հրեշտակին, ապա ես ինչ եմ արել»: Նա պատասխանեց. «Նրանք չեն կարող պատժվել, եթե դու՝ ընտանիքի գլուխը, չպատժվես: Որովհետեւ ինչ որ կրես դու, անպայման պիտի կրեն եւ նրանք, իսկ քո հանդարտության դեպքում նրանք չեն կարող ոչ մի տառապանք կրել», ասաց նա: «Տե՛ր, բայց ահա, -ասացի ես, -նրանք զղջացել են ամբողջ սրտով»: «Գիտեմ, որ զղջացել են ամբողջ սրտով, -ասում է նա: -Բայց, ի՞նչ է, դու կարծում ես թե ապաշխարողների մեղքերին անմիջապես թողություն է տրվում: Ո՞չ: Ապաշխարողը պետք է չարչարի իր հոգին, խոնարհվի իր բոլոր գործերում, եւ բազում ու զանազան դառնու-

թյուններ կրի: Եվ երբ այն ամենը, որ իրեն նշանակված է, կրի, այնժամ, իհարկե, նա, Որն արարել եւ հաստատել է ամեն բան, իր ողորմությամբ կդառնա նրա կողմը ու կտա նրան փրկարար բժշկություն, այն էլ այն ժամանակ, երբ տեսնի, որ ապաշխարողի սիրտը մաքուր է ամեն տեսակի չար գործից: Իսկ քեզ ու քո ընտանիքին, այժմ տառապելն օգտակար է: Սակայն ինչո՞ւ եմ երկար խոսում, հարկավոր է տառապել այնպես, ինչպես պատվիրել է Տիրոջ այն հրեշտակը, որը քեզ հանձնել է ինձ: Իսկ դու ավելի լավ է գոհություն հայտնիր Աստծուն, որ նա արժանի է համարել, որ նախօրոք հայտնեմ քեզ քո պատժի մասին, որպեսզի նախապես իմանալով այդ մասին, տոկունությամբ կրես այն»: Ես ասում եմ նրան. «Տե՛ր, եղիր ինձ հետ եւ հեշտությամբ կտանեմ ամեն մի փորձություն»: «Ես, -ասում է նա, -քեզ հետ կլինեմ եւ անգամ կլինդրեմ պատժի հրեշտակին, որ նա ավելի մեղմ հարվածի քեզ: Սակայն դու երկար չես տառապի եւ կրկին կվերադառնաս քո բարվոք վիճակին, միայն խոնարհամիտ եղիր ու հնազանդվի Տիրոջը մաքուր սրտով. եւ՝ դու, եւ՝ զավակներդ, եւ՝ քո ընտանիքը ընթացեք ըստ այն պատվիրանների, որ ես տվել եմ քեզ, ու քո ապաշխարությունը կարող է լինել հաստատուն ու մաքուր: Եվ, եթե դու, ընտանյօք հանդերձ, պահես դրանք, ապա քեզնից կհեռանան բոլոր գործախտությունները. Նաեւ բոլոր նրանցից, որոնք կընթանան ըստ այս պատվիրանների՝ կհեռանա ամեն դժբախտություն»:

## ԱՌԱԿ ՈՒԹԵՐՈՐԴ

Շատ ընտրյալ սերունդներ եւ մեղքի համար ապաշխարողներ կան, բայց բոլորը վարձք կունենան ըստ ապաշխարության աստիճանի եւ իրենց բարի գործերի:

1. Հովիվն ինձ մի ուռենի ցույց տվեց, որը ծածկում էր դաշտերն ու լեռները, որի ստվերի տակ էին եկել Տիրոջ անվամբ բոլոր կոչվածները: Եվ այդ ուռենու մոտ կանգնած էր փառավոր ու շատ երկայնահասակ մի հրեշտակ: Նա մեծ մանգաղով ուռենուց ճյուղեր էր կտրում եւ այդ ոչ

մեծ, բազկաչափ ճյուղերը բաժանում էր նույն ուռենու ստվերի տակ կանգնած ժողովրդին: Այն բանից հետ, երբ բոլորը ճյուղեր ստացան եւ հրեշտակը վար դրեց մանգաղը, այդ ծառը մնացել էր ամենեւին անխաժար, ինչպես որ տեսել էի նախկինում: Ես զարմանում էի դրա վրա եւ խորհում էի ինքս իմ մեջ: Հովիվն ասաց ինձ. «Մի՛ զարմացիր, որ այս ծառը այն բանից հետո, երբ նրա այդքան ճյուղերը կտրվեցին, մնաց անխաժար: Սպասի՛ր, եւ երբ կտենես ամեն բան, քեզ կբացատրվի, թե ի՞նչ է այդ նշանակում»:

Մարդկանց ճյուղեր բաժանող հրեշտակը նորից նրանցից ետ պահանջեց դրանք, եւ յուրանքաչյուրը նույն հերթականությամբ, ինչպես որ ստացել էին, կանչվում էր նրա մոտ ու վերադարձնում ճյուղերը: Տիրոջ հրեշտակը դրանք ընդունում էր եւ գննում: Ոմանցից նա ետ էր ստանում չորացած եւ կարծես թե, ցեցը կերած, ու հրամայում էր որպեսզի այդ ճյուղեր վերադարձնողները կանգնեն առանձին: Մյուսները ճյուղերը վերադարձնում էին չորացած, բայց ցեցը չկերած, եւ դրանց էլ հրամայեց կանգնել առանձին: Ոմանք ճյուղերը վերադարձնում էին կիսով չափ չորացած, եւ դրանք էլ կանգնեցին առանձին: Ոմանք իրենց ճյուղերը վերադարձնում էին կիսով չափ չորացած ու ճաքճքված, եւ դրանք եւս առանձին կանգնեցին: Մյուսները իրենց ճյուղերը բերում էին կեսը չոր, կեսը կանաչ, ու նրանք էլ էին կանգնում առանձին: Ուրիշները այնպիսի ճյուղեր էին վերադարձնում, որոնց երկու մասը չոր էր, իսկ երրորդը՝ կանաչ եւ դրանք եւս կանգնեցին առանձին: Ոմանք բերում էին այնպիսի ճյուղեր, որ դրանց երկու մասը կանաչ էին, իսկ երրորդ մասը՝ չոր, եւ սրանք էլ կանգնեցին առանձին: Իսկ մյուսների ճյուղերի վրա շատ փոքր կանաչ մաս կար եւ մնացած ամբողջը չորացած էր. ու նրանք նույնպես առանձին կանգնեցին: Իսկ ոմանք գալիս էին բերելով ճյուղերն այնպիս կանաչ, ինչպես որ ստացել էին հրեշտակից. եւ ժողովրդի մեծ մասը այդպիսի ճյուղեր էին վերադարձնում: Հրեշտակը շատ էր ուրախանում դրանց համար, ու նրանք առանձին էին կանգնում: Ոմանք ճյուղեր էին

բերում կանաչ ու դալար շիվերով, եւ դրանք առանձին էին դրվում: Հրեշտակը դրանք եւս մեծ հաճույքով էր ընդունում: Ոմանք ճյուղերը բերում էին կանաչ եւ շիվերի վրա որոշ պտուղներով: Նրանք, որ վերադարձնում էին այդպիսի ճյուղեր, տեսքով շատ ուրախ էին, եւ ինքը՝ հրեշտակը շատ էր ուրախանում նրանցով, եւ հովիվը նույնպես ուրախ էր:

2. Եվ Տիրոջ հրեշտակը պատվիրեց պսակներ բերել: Բերված պսակները, որոնք ասես հյուսված էին արմավենու ճյուղերից, հրեշտակը դրեց այն այրերի վրա, ում ճյուղերը ընձյուղներով ու պտուղներով էին, եւ նրանց հրամայեց գնալ աշտարակ: Եվ մյուսներին եւս, ում ճյուղերը կանաչ էին եւ շիվերով, բայց առանց պտուղների, ուղարկեց նույնպես այնտեղ. նրանց կնիքներ տալով: Բոլոր աշտարակ մտնողները նույն զգեստներն ունեին՝ ճերմակ, ինչպես ճյունը: Նա նույն աշտարակն ուղարկեց եւ նրանց, ովքեր իրենց ճյուղերը վերադարձրել էին այնպես, ինչպես որ ստացել էին՝ կանաչ, նրանց տալով կնիք եւ ճերմակ զգեստներ: Այդ բոլորի ավարտից հետո, նա ասաց հովիվն. «Ես գնում եմ, իսկ դու նրանց թող պատերից ներս, այն տեղը, որը յուրանքաչյուրը վաստակել է իր բնակության համար, սակայն նախօրոք ուշադիր կզննես նրանց ճյուղերը: Նայի՛ր, որ ոչ ոք չշրջանցի քեզ, իսկ եթե մեկը ճողոպարի առանց քո իմանալու, ես նրան խորանի առջեւ կբացահայտեմ»: Այս ասելով հովիվն, նա հեռացավ: Նրա հեռանալուց հետո, հովիվն ասաց ինձ. «Վերցնենք բոլորի ճյուղերը եւ տնկենք հողի մեջ, թերեւս դրանցից ոմանք կարող է նորից կանաչեն»: Ես ասացի նրան. «Տե՛ր, ինչպե՞ս կարող են նորից կանաչել ճյուղերը, որոնք արդեն չորացած են»: Նա պատասխանեց ինձ. «Այս ծառը ուռենի է եւ այդպիսի ծառերը կենսունակ են: Ուստի, եթե այս ճյուղերը տնկվեն ու ջրվեն, ապա նրանցից շատ շատերը վերստին կծաղկեն: Արի փորձենք ջրել եւ, եթե սրանցից որեւէ մեկը կարող կլինի վերակենդանանալու, ապա ես ուրախ կլինեմ նրա հա-

մար. իսկ եթե ոչ, գոնե հայտնի կլինի, որ ես անտարբեր չեմ եղել»: Այ-նուհետեւ հովիվն ինձ հրամայեց նրանց կանչել այն հերթականությամբ, ինչպես որ կանգնած էին: Նրանք եկան եւ հանձնեցին իրենց ճյուղերը: Հովիվը վերցրեց ճյուղերը եւ ըստ նույն հերթականության տնկեց: Ապա այնքան առատ ջրեց, որ նրանք ծածկվեցին ու չին երեւում ջրի տակ: Ճյուղերը բերելուց հետո նա ասաց ինձ. «Գնանք, եւ մի քանի օրից կվերադառնանք ու կստուգենք բոլոր ճյուղերը. քանի որ այս ծառի Արարի-չը ցանկանում է, որ բոլոր նրանք, որ ճյուղեր են ստացել այս ծառից՝ ողջ մնան: Իսկ ես հուսով եմ այն բանից հետո, երբ այս ճյուղերը ջրվեցին, նրանցից շատերը խոնավությամբ հագեցած կվերակենդանանանան»:

3. Ես ասացի նրան. «Տե՛ր, բացատրիր ինձ այս ծառի խորհուրդը: Ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես է այն անխաթար մնում, իրենից այսքան ճյուղեր կտրելուց հետո եւ չի երեւում, որ նրանից որեւէ բան է պակասել: Այս ինձ տարակուսանքի մեջ է գցում»: «Լսի՛ր, -ասում է նա: Այդ մեծ ծառը, որը ծածկում է դաշտերն ու լեռները եւ ամբողջ երկիրը, խորհրդանշում է ողջ աշխարհին տրված Աստծո օրենքը: Օրենքն այս՝ երկրի բոլոր ծագերում ավետարանված Աստծո Որդին է: Ծառի ստվերի տակ կանգնած մարդիկ նրանք են, ովքեր լսել են այդ քարոզությունը եւ հավատացել նրան: Վեհափառ ու զորեղ հրեշտակը՝ Միքայելն է, որն իշխանություն ունի այս ժողովրդի վրա եւ նրանց կառավարիչն է: Նա օրենքը տնկում է հավատացյալների սրտերում եւ հետեւում է նրանց, ում տվել է օրենքը, տեսնելու համար, թե պահէ՞լ են արդյոք: Ամեն մեկը ճյուղ ունի, եւ ճյուղերը խորհրդանշում են Տիրոջ օրենքը: Տեսնո՞ւմ ես, որ նրանցից շատերը անպիտան են դարձել, եւ դու կարող ես ճանաչել բոլոր նրանց, որ չեն պահել օրենքը, ու կտեսնես նրանցից յուրանքաչյուրի տեղը»: «Տե՛ր, իսկ ինչո՞ւ նա ոմանց ուղարկեց աշտարակ, իսկ մյուսներին թողեց քեզ», ասացի ես: «Նրանք, -ասում է նա, -որ նրանից ստացած օրենքը խախտել են, թողնված են իմ իշխա-

նության տակ, որպեսզի քավեն իրենց հանցանքները, իսկ նրանք որոնք բավարարեցին օրենքին եւ պահեցին այն, գտնվում են իր սեփական իշխանության տակ»: «Տե՛ր, իսկ ովքե՞ր են նրանք, որ պսակավորվեցին ու մտան աշտարակ», -ասում եմ ես: Նա ասաց. «Այդ նրանք են, որ մարտնչեցին սատանայի դեմ եւ հաղթել են նրան, նրանք, որ պահելով օրենքը, տառապել են դրա համար: Մյուսները, ճյուղերը վերադարձրին կանաչ եւ ընձյուղներով, բայց անպառող, դրանք նրանք են, որ տառապել են հանուն այդ նույն օրենքի, սակայն մահ չեն ճաշակել, բայց չեն էլ ուրացել իրենց օրենքը: Իսկ նրանք, որ ճյուղերը վերադարձրել են կանաչ, ինչպես որ ստացել էին, խոնարհներն են, որոնք ապրել են մաքուր սրտով եւ պահել են Աստծո պատվիրանները: Մնացածը դու կիմանսաս այն ժամանակ, երբ կստուգեմ այն ճյուղերը, որ տնկեցի հողում եւ ջրեցի»:

4. Մի քանի օրից մենք վերադարձանք նույն վայրը, եւ հովիվը նստեց այն հրեշտակի տեղը: Իսկ ես կանգնեցի նրա կողքին: Այնժամ նա ասաց ինձ. «Կապի՛ր գոգնոցդ եւ օգնի՛ր ինձ»: Ես գոտեւորվեցի քթանե մաքուր գոգնոցով: Տեսնելով, որ ես գոտեւորված եմ եւ պատրաստ իրեն ծառայելու, նա ասաց. «Կանչիր այն մարդկանց, որոնց ճյուղերը տնկված են հողում, ըստ այն հերթականության, ինչպես որ վերադարձրել է յուրաքանչյուրը: Եվ ես գնացի դաշտ, բոլորին կանչեցի ու նրանք կանգնեցին իրենց տեղերում: Այնուհետեւ նա ասաց ինձ. «Թող ամեն մեկը հանի իր ճյուղը եւ բերի ինձ»: Ամենից առաջ տվեցին նրանք, որոնց ճյուղերը այն ժամանակ չորացած էին եւ փտած: Եվ քանի որ նրանք կրկին փտած ու չորացած դուրս եկան, նա հրամայեց նրանց կանգնել առանձին: Այնուհետեւ տվեցին նրանք, որոնց ճյուղերը թեեւ չորացած էին, բայց փտած չէին: Սրանցից ոմանք ճյուղերը կանաչած տվեցին, իսկ ոմանք՝ չորացած, կարծես ցեցը կերած: Նրանց, որ վերադարձրին կանաչած, հրամայեց կանգնել առանձին, իսկ նրանց, որ վերադարձրին չորացած ու փտած, հրամայեց կանգնել առաջինների հետ: Ապա տվեցին

նրանք, որոնց ճյուղերը կիսով չափ չորացած էին ու ճաքճքած. նրանցից շատերը վերադարձրին կանաչած ու առանց ճաքերի, իսկ ոմանք՝ կանաչած, իսկ ոմանք կանաչած եւ պտուղներ ունեցող, ինչպես նրանք, որ պսակավորված մտան աշտարակ: Մյուսները տվեցին չորացած, բայց չփառած, իսկ ոմանք էլ՝ առաջիկ պես չորացած ու ճաքճքված: Նրանց ամեն մեկին նա հրամայեց զատ-զատ կանգնել, ոմանց՝ իր դասում, իսկ մյուսներին առանձին:

5. Այնուհետեւ վերադարձրին նրանք, որոնց ճյուղերը թեեւ կանաչ էին, սակայն ճաքեր ունեին: Նրանք բոլորը վերադարձրին այժմ կանաչած եւ կանգնեցին իրենց տեղում, ու Հովհիկը ուրախանում էր սրանց համար, որ բոլորը ուղղվել եւ ազատվել են իրենց ճաքերից: Տվեցին եւ նրանք, որոնց ճյուղերը կեսկանաչ էին եւ կեսչորացած: Սրանցից ոմանց ճյուղերը ամբողջովին կանաչ դուրս եկան, ուրիշներինը՝ կիսաչոր, ոմանցը՝ չորացած ու վնասված, իսկ ոմանցն էլ կանաչ ու ընծյուղված: Սրանք բոլորն էլ ուղարկվեցին իրենց դասը: Ապա տվեցին նրանք, որոնց ճյուղերի երկու մասը կանաչ էր, իսկ երրորդը՝ չորացած. սրանցից շատերը վերադարձրին կանաչ ճյուղեր, շատերը՝ կիսով չափ չորացած, ոմանք էլ՝ չորացած ու փտած: Եվ սրանցից ամեն մեկը կանգնեց իր դասում: Այնուհետեւ տվեցին նրանք, որոնց ճյուղերի երկու մասը չորացած էր, իսկ երրորդը՝ կանաչ. սրանցից շատերը եւս վերադարձրին կիսով չափ չորացած, ոմանք՝ չորացած ու փտած, ոմանք՝ կիսով չափ չորացած ու ճաքճքված, ոմանք էլ կանաչած: Սրանցից ամեն մեկը, նույնպես, կանգնեց իր դասում: Ապա տվեցին նրանք, որոնց ճյուղերը կանաչ էին, բայց մի փոքր չորացած եւ ճաքճքած. սրանցից ոմանք ճյուղերը վերադարձրին կանաչած, իսկ ոմանք էլ՝ կանաչած ու բողբոջած. սրանք եւս գնացին իրեն տեղը: Վերջապես տվեցին նրանք, որոնց ճյուղերի շատ փոքր մասը կանաչ էր, իսկ մնացածը՝ չորացած: Սրանց ճյուղերը մեծ մասամբ դուրս եկան կանաչած, ընծյուղված եւ անդամ պտուղներով, իսկ մնացածը՝ կա-

նաչ: Հովհիկն այս ճյուղերի համար շատ էր ուրախանում, որ նրանք այդպիսին դուրս եկան: Եվ սրանք եւս գնացին ամեն մեկն իր դասը:

6. Վերանայելով բոլոր ճյուղերը, հովհիկն ինձ ասաց. «Ես ասում էի քեզ, որ այս ծառը կենսունակ է: Տեսնո՞ւմ ես, շատերն ապաշխարել են եւ փրկություն ստացել»: «Տեսնում եմ, տե՛ր»-ասում եմ ես: «Ուրիմն, իմացի՛ր, -ասում է նա, -որ մեծ ու փառակոր է Տիրոջ բարությունն ու ողորմածությունը, Որը եւ ապաշխարության հնարավորություն պարզեց»: «Տե՛ր, ուրիմն ինչչո՞ւ բոլորը չապաշխարեցին», -ասացի ես: Նա ասաց ինձ. «Տերն ապաշխարություն է տվել նրանց, որոնց նա տեսավ, որ իրենց սրտերը մաքուր կլինեն եւ ամբողջ սրտով կծառայեն իրեն: Իսկ ում մեջ տեսավ ստություն ու անզգամություն եւ դեպի իրեն դարձի գալու կերպավորություն. սրանց ապաշխարություն չտվեց, որպեսզի նորից չպղծեն իր Անունը»: Ես ասացի նրան. «Տե՛ր, այժմ ցույց տուր ինձ ճյուղեր վերադարձնողներից ամեն մեկի նշանակությունն ու տեղը, որպեսզի այդ մասին լսեն հավատացյալները, որոնք կնիք են ստացել, բայց քանդել ու անխաթար չեն պահել եւ, որպեսզի ճանաչելով իրենց գործերը, ապաշխարեն ու քեզնից կնիք ընդունելով փառաբանություն մատուցեն Տիրոջը, որ նա իր ողորմությունը մեկնելով քեզ ուղարկել է իրենց հոգիները նորոգելու համար»: «Լավ՛ր, -ասում է նա, -նրանք, որոնց ճյուղերը դուրս եկան չորացած ու ցեցը կերած՝ եկեղեցին ուրացողներն ու դավաճանողներն են, որոնք իրենց մեղքերով հայհոյել են Տիրոջը եւ ամաչել են նրա անունից, որ կոչված էր իրենց վրա. սրանք բոլորը մեռած են Աստծո համար: Եվ տեսնո՞ւմ ես, որ նրանցից եւ ոչ մեկը չի ապաշխարել, թեեւ քեզնից լսել են /Աստծո/ խոսքը, որը ես պատմել եմ քեզ. այսպիսի մարդկանցից կյանքը հեռացել է: Հավասարապես սրանցից հեռու չեն եւ նրանք, որոնք ճյուղերը վերադարձրել են թեեւ չփտած, բայց չորացած, որովհետեւ սրանք երեսպաշտ են եղել, խորթ ուսմունքներն են տարածել եւ մոլորեցրել են Աստծո ծառաներին, հատկապես նրանց,

որոնք մեղանչել են, արգելք լինելով նրանց ապաշխարությանը, ներշնչելով հիմար ուսմունքներ: Արանք ապաշխարության հույս ունեն: Եվ տեսնո՞ւմ ես, որ սրանցից շատերը այն բանից հետո, որ ես հաղորդեցի իրենց իմ պատվիրանները, ապաշխարել են. եւ դեռ էլի պիտի ապաշխարեն: Նրանք, որ չեն ապաշխարի, կզրկվեն կյանքից, իսկ նրանք, որ ապաշխարել են, դարձել են բարի, նրանց տեղերը առաջին պատերի մեջ են, իսկ ոմանք նույնիսկ աշտարակի մեջ մտան: Ուստի, տեսնո՞ւմ ես, -ասաց նա, -որ մեղավորների ապաշխարությունը կյանք է բերում, իսկ անզղությունը՝ մահ»:

7. «Լսի՛ր նաեւ նրանց մասին, որոնք ճյուղերը վերադարձրին կիսաչոր ու ճաքերով: Նրանք, որոնց ճյուղերը միայն կիսաչոր էին՝ երկմիտներն են. որոնք ոչ ողջ են, ոչ՝ մեռած: Իսկ նրանք, որոնք ճյուղերը վերադարձրին կիսաչոր ու ճաքերով՝ եւ՝ երկմիտ են եւ՝ չարակեզու, որոնք բամբասում են բացակա եղողներին, իրենց մեջ երեք խաղաղություն չունեն եւ մշտապես գտնվում են անհաշտության մեջ: Բայց ինչեւիցէ, նրանց համար էլ ապաշխարություն կա: Տեսնո՞ւմ ես, նրանցից ոմանք ապաշխարել են: Արանցից շատերը, որոնք չուտափութ ապաշխարեցին, աշտարակում տեղ ունեն, իսկ նրանք, որ ավելի ուշ են ապաշխարել՝ կբնակվեն պատերի մեջ: Իսկ նրանք, որ չեն ապաշխարել, այլ մնացել են իրենց գործերի մեջ՝ մահով կմեռնեն: Նրանք, ովքեր ճյուղերը վերադարձրին թեեւ կանաչ, բայց ճաքերով, միշտ հավատարիմ ու բարի են եղել, բայց առաջնության ու պատվի համար իրար նկատմամբ ունեցել են խանդ ու նախանձ: Սակայն, առաջնության համար իրար հետ վիճող բոլոր մարդիկ հիմար են: Ինչեւէ, քանի որ նրանք ուրիշ հարաբերություններում բարի են եղել, անսացել են իմ պատվիրաններին, ուղղվել են եւ ճեպով ապաշխարել, այդ պատճառով նրանց տեղը աշտարակի մեջ է: Իսկ եթե նրանցից որեւէ մեկը վերստին դիմի գժտության, կվոնդվի աշտարակից եւ կկորցնի իր կյանքը, որովհետեւ Աստծո կանչվածների կյանքը կայանում է Տիրոջ պատվիրանների կատարման մեջ: Արանում է

կյանքը, այլ ոչ թե առաջնության, կամ որեւէ մի արժանիքի: Համբերության ու հոգու խոնարհության միջոցով, մարդիկ Տիրոջից կյանք կստանան, իսկ խոռվարաններն ու օրենքն արհամարողներն մահ ձեռք կբերեն:

8. Նրանք, որոնց ճյուղերի կեսը չորացած էր, կեսը կանաչ՝ աշխարհական զբաղմունքներով կապվածներն ու սրբերի հետ շփումից օտարածներն են: Ուստի, նրանց կեսը ողջ է, կեսը՝ մեռած: Եվ սրանցից շատերը անսալով իմ պատվիրաններին՝ ապաշխարեցին եւ տեղ գտան աշտարակում, իսկ ոմանք բոլորիվին դուրս մնացին: Արանց համար ապաշխարություն չկա, որովհետեւ իրենց գործերի պատճառով հայհոյեցին Տիրոջը եւ ի վերջո, ուրացան: Եվ նրանք այդ ամբարշտության պատճառով կորցրեցին իրենց կյանքը: Սակայն նրանցից շատերը երկմտեցին. սրանց համար դեռեւս կա ապաշխարություն, եւ եթե շուտափույթ ապաշխարեն՝ աշտարակում բնակարան կունենան, իսկ եթե ուշ՝ կբնակվեն պատերի մեջ, բայց եթե բնավ չափաշխարեն՝ կկորցնեն իրենց կյանքը: Իսկ ում ճյուղերի երկու մասը կանաչ էր եւ երրորդը չորացած՝ նրանք են, որ զանազան գայթակղություններով մոլորված, ուրացել են Տիրոջը: Նրանցից շատերը ապաշխարել են եւ արդեն տեղ են ստացել աշտարակում, իսկ շատերը իսպառ հեռացել են Աստծուց ու բոլորովին կորցրել են իրենց կյանքը: Իսկ սրանցից ոմանք երկմտել են եւ խոռվություններ գոգուել: Արանց համար դեռեւս կա ապաշխարություն, եթե շուտ ապաշխարեն ու չմնան իրենց վայելքների մեջ, իսկ եթե մնան իրենց գործերի մեջ, ապա մահ կպատրաստեն իրենց համար:

9. Իսկ որոնք իրենց ճյուղերը վերադարձրին երկու մասը չոր, իսկ երրորդը կանաչ՝ նրանք են, որ բարեպաշտ են եղել, բայց հարստանալով եւ հեթանոսների մոտ համբավ ձեռք բերելով, ընկել են մեծ հպարտության մեջ, սկսելով մեծամտանալ, լքեցին ճշմարտությունը, արդարների հետ, շփում չունեցան, այլ ապրեցին հեթանոսների հետ եւ նրանց նման,

ու այդ կյանքը նրանց ավելի հաճելի երեւաց: Ասկայն նրանք Աստծուց չեն հեռացել, եւ մնացել են հավատքի մեջ, միայն թե հավատքի գործեր չեն գործել: Սրանցից շատերը արդեն ապաշխարել են եւ իրենց տեղն ու նեն աշտարակում: Մյուսները ապրելով հեթանոսների հետ եւ հպարտանալով նրանց մոտ ունեցած սին փառքից, խսպառ հեռացան Աստծուց՝ տրվելով հեթանոսական զբաղմունքներին: Այսպիսի մարդիկ հեթանոսների շարքն են դասվել: Սրանցից ոմանք սկսել են երկմտել, Հույս չունենալով, որ իրենց կատարած գործերով կփրկվեն: Մյուսներն ընկել են երկմտանքի մեջ եւ սկսել են պառակտություն գոգովել: Եվ սրանց, եւ՝ մյուսների համար, որ սկսել են երկմտել իրենց գործերի համար, դեռեւս կա՛ ապաշխարություն. սակայն դրանց ապաշխարությունը պետք է անհապաղ լինի, որ իրենց տեղ լինի աշտարակում: Իսկ նրանց, որ չեն ապաշխարում, այլ շարունակում են մնալ իրենց վայելքների մեջ, շուտով մահ է սպասվում:

10. Իսկ նրանք, որոնք իրենց ճյուղերը բացի չոր գագաթներից ու ճաքերից, կանաչ են վերադարձել, նրանք են, որ միշտ եղել են բարի, արդար եւ Աստծո մոտ փառակոր, բայց մեղանչել են ոչ մեծ վայելքների եւ իրար մեջ ունեցած անհաշտությունների պատճառով: Լսելով իս խոսքերը, շատերը իսկույն եւեթ ապաշխարել են եւ տեղ են դտել աշտարակում: Իսկ սրանցից ոմանք ընկել են երկմտանքի մեջ եւ ավելին՝ խոռվություն են դցել: Այսպիսիների համար ապաշխարության հույս կա, որովհետեւ միշտ բարի են եղել ու հազիվ թե սրանցից որեւէ մեկը մեռնի: Իսկ նրանք, որոնք իրենց ճյուղերը չորացած են վերադարձել, բացի կանաչ գագաթից՝ նրանք են որոնք միայն հավատացել են Աստծուն, բայց անօրենություններ են գործել, թեեւ երբեք չեն հեռացել Աստծուց ու միշտ ուրախությամբ են կրել Նրա անունը, եւ սիրով իրենց տներն են ընդունել Աստծո ծառաներին: Լսելով ապաշխարության մասին, նրանք առանց վարանելու ապաշխարել են բարի ու արդար գործեր են կա-

տարել: Սրանցից ոմանք մահ ճաշակեցին, մյուսները հոժարությամբ դժբախտություններ կրեցին՝ հիշելով իրենց գործերի մասին: Բոլոր այդպիսինները տեղ կունենան աշտարակում»:

11. Ավարտելով բոլոր ճյուղերի վերաբերյալ բացատրությունը, նա ասաց ինձ. «Գնա՛ եւ բոլորին ասա՛, որ ապաշխարեն եւ ապրեն Աստծո համար, քանի որ Աստված իր գթասրտությամբ ինձ ուղարկել է բոլորին քավություն տալու, անգամ նրանց, որոնք իրենց գործերով արժանի չեն փրկության: Բայց երկայնամիտ է Տերը, եւ ցանկանում է որպեսպի փրկվեն իր Որդու կողմից կանչվածները»: Ես ասացի նրան. «Տե՛ր, ես հուսով եմ, որ բոլորը երբ լսեն այս, կապաշխարեն: Քանի որ համոզված եմ, որ ամեն մեկը, ճանաչելով իր գործերը, եւ երկուղելով Աստծուց՝ կապաշխարի» «Բոլոր նրանք, ասում է նա, որ կապաշխարեն ամբողջ սրտով եւ կմաքրվեն իրենց անօրեն գործերից, որոնց մասին նախօրոք ասվել է, եւ ավելին չեն բարդի իրենց հանցանքներին՝ Տիրոջից իրենց նախկին մեղքերին թողություն կստանան, եթե չկասկածեն իմ այս պատվիրաններով մասին ու ապրեն Աստծո հետ: Եվ գու նույնպես քայլիր այս պատվիրաններով, ու կապրես Աստծո հետ. եւ բոլոր նրանք, որ կընթանան այդ պատվիրաններով եւ ճշտությամբ կպահեն դրանք՝ կապրեն Աստծո հետ»: Ցույց տալով ինձ այս ամենը, նա ասաց. «Մնացյալը ես քեզ ցույց կտամ մի քանի օր հետո»:

**ԱՌԱԿԻ ԻՆՆԵՐՈՐԴ**  
Աստծո պատերազմող եւ հաղթական եկեղեցու կառուցումը:

1. Այն բանից հետո, երբ ես գրի առա հովվի՝ ապաշխարության հրեշտակի պատվիրանները եւ առակները, նա ինձ մոտ եկավ եւ ասաց. «Ես ուղում եմ քեզ ցույց տալ այն ամենը, որ ցույց տվեց քեզ Սուլրբ Հոգին, Որը խոսում էր հետդ եկեղեցու կերպարանքով: Հոգին այդ՝ Աստծո

Որդին էօ: Եվ քանի որ դու թույլ էիր մարմնով, մինչեւ չհաստատվեցիր Հոգով եւ զորացար ուժով, որպեսզի կարողանաս հասկանալ հրեշտակին: Այն ժամանակ Եկեղեցին շատ լավ ու սքանչելի կերպով քեզ ցույց տվեց աշտարակի շինարարությունը, սակայն դու այն տեսար այնպես, ինչպես որ ցույց տվեց կույսը: Իսկ արդ, դու հայտնություն կստանաս հրեշտակի միջոցով, թեեւ նույն Հոգու կողմից: Դու պետք է ինձանից ամեն ինչ մանրամասն իմանաս, որովհետեւ ես այն մեծափառ հրեշտակի կողմից դրա համար եմ ուղարկված՝ բնակվելու քո տանը, ինչպես եւ առաջ»: Եվ նա ինձ տարավ Արկադիա, մի լեռան վրա, որը կրծքի ձեւ ուներ, եւ մենք տեղավորվեցինք նրա գագաթին: Եվ նա ինձ ցույց տվեց մի մեծ հովիտ, որը շրջապատված էր տասներկու լեռներով՝ ամեն մեկը տարբեր տեսքի: Սրանցից առաջինը մուրի նման սեւ էր, երկրորդը՝ լերկ, առանց բուսականության, երրորդը լի էր փուշ ու տատասկով, չորրորդի վրա կիսաչոր բույսեր կային, որոնց վերին մասերը կանաչ էին, իսկ արմատի մոտ չորսցած, իսկ որոշ բույսեր նույնիսկ ամբողջովին էին չորացել արեւի շորով: Հինգերորդ լեռը ժայռոտ էր, բայց նրա վրա կանաչ բույսեր կային: Վեցերորդը լի էր ծերպերով՝ որը մեծ, որը փոքր, եւ այս ծերպերում բույսեր կային, բայց ոչ շատ ծաղկուն, որոնք, կարծես թե, թոշնած էին: Յոթերորդ լեռը փարթամ բուսականություն ուներ եւ համակ պտղառատ էր, եւ բոլոր տեսակի անասուներն ու թռչունները սնվում էին նրանից, եւ որքան շատ էին ուտում, այնքան ավելի էին առատանում բույսերը: Ութերորդ լեռը հարուստ էր աղբյուրներով, եւ այդ աղբյուրներից հագենում էին Աստծո բոլոր տեսակի արարածները: Իններորդ լեռը կատարյալ անջրդի էր, եւ ամբողջովին մերկ. այնտեղ մահաբեր օձեր կային, որոնք կորստաբեր էին մարդկանց համար: Տասներորդ լեռան վրա շատ մեծ ծառեր կային եւ այն ամբողջովին ստվերեծածկ էր, եւ ստվերի տակ անասունները հանգստանում էին ու որոճում: Տասնմեկերորդ լեռը ամբողջապես ծառախիտ էր, եւ այդ ծառերն այնքան բերքառատ էին տարբեր տեսակի պտուղներով, որ տեսնողը կուզեր ճաշակել դրանց պտուղներից:

Տասներկուերորդ լեռը ամբողջովին ճերմակ էր եւ ամենահաճելի տեսքն ուներ: Նրա վրա ամեն բան հիանալի էր:

2. Հովտի կենտրոնում նա ինձ ցույց տվեց մի հսկայական, սպիտակ վեմ՝ վեր խոյացած հենց Հովտից: Այդ վեմը բարձր էր այն լեռներից եւ քառանկյունի էր /այնպես, որ կարող էր պահել ողջ աշխարհը/: Այն շատ հնամենի էր եւ փորփած դուռը ուներ, որը նորատաշ տեսք ուներ: Եվ դուռը փայլվում էր արեւի շողերի տակ, այնպես, որ ես զարմանում էի նրա փայլով: Դուան շուրջը կանգնած էին տասներկու կույսեր: Նրանցից չորսը՝ դռան անկյուններում կանգնածները, ավելի սքանչելի էին թվում, սակայն մյուսներն էլ էին գեղեցիկ: Եվ նրանք կանգնած էին դռան չորս կողմում, իսկ մեջտեղում՝ զույգեզույգ: Եվ նրանք հագել էին քթանե պարեգուսներ եւ կապել էին գեղեցիկ գոտիներ, մերկացնելով աջ ուսերը, կարծես պատրաստվում էին որեւէ բեռ կրել. այսպես նրանք ուրախ ու զվարթ պատրաստ վիճակում էին: Տեսներով այս բաները, ես զարմանում էի տեսածներիս սքանչելի վեհությամբ: Եվ նորից շվարած մտածում էի այդ կույսերի մասին, որ նրանք լինելով այդքան նուրբ, տղամարդու պես կանգնած էին, կարծես պատրաստ իրենց վրա կրելու ողջ երկինքը: Երբ ես խորհում էի այդ մասին, հովիկն ինձ ասաց. «Ի՞նչ ես շվարել եւ ինքդ քեզ մտածում ու հոգս պատճառում: Ինչ որ չես կարողանում հասկանալ, մի ջանա, իբրեւ թե իմաստուն ես, այլ խնդրիր Տիրողը, որպեսզի իմաստություն ստանալով հասկանաս այն: Ինչ որ քո ետեւում է՝ չես կարող տեսնել, իսկ ինչ որ քո առջեւում է՝ կարող ես: Այն բաները, որ չես կարող տեսնել, թո՛ղ, եւ մի՛ անհանգստացիր: Իսկ այն բաները, որ տեսնում ես, տնօրինի՛ր, եւ մնացածով մի՛ հետաքրքրվիր: Եվ ես քեզ կբացարեմ այն ամենը, որ ցույց կտամ, իսկ հիմա տե՛ս մնացածը»:

3. Եվ ահա ես տեսա. Եկան վեց բարձրահասակ ու պատկառելի տղամարդիկ, եւ բոլորը իրար նման: Նրանք կանչեցին ուրիշ շատ մարդ-

կանց, որոնք նույնպես բարձրահասակ էին, գեղեցիկ եւ ուժեղ: Եվ այն վեց տղամարդիկ սրանց հրամայեցին դռան վրա աշտարակ կառուցել: Այնժամ մեծ ազմուկ բարձրացավ, որովհետեւ այն մարդիկ, որ եկել էին աշտարակ կառուցելու համար, վազվում էին այս ու այն կողմ, քանի որ դռան մոտ կանգնած կույսերը նրանց ասացին, որ արագացնեն աշտարակի շինությունը: Կույսերն իրենց ձեռքերը մեկնել էին առաջ, կարծես պատրաստվել էին ինչեռ բան վերցնել նրանցից: Այն վեցը պատվիրեցին որոշ խորությունից քարեր հանել ո >ւ բերել աշտարակի շինարարության համար: Եվ հանվեցին տասը՝ ճերմակ, քառակուսի եւ Հղկված քարեր: Այն վեց մարդիկ կանչեցին կույսերին եւ նրանց պատվիրեցին, որ տանեն այն բոլոր քարերը, որոնք պիտի օգտագործվեն շինության մեջ եւ դռնից անցկացնելով փոխանցեն նրանց, որ պետք է կառուցեին աշտարակը: Եվ իսկույն կույսերը իրար վրա շարեցին այն առաջին քարերը, որոնք հանված էին խորքից եւ միասին՝ քար առ քար տարան:

4. Կույսերն ինչ կարգով որ կանգնած էին դռան մոտ, նույն կարգով էլ տանում էին քարերը. նրանք, որ ավելի ուժեղ էին երեւում բռնում էին քարի անկյուններից, իսկ մյուսները բարձրացնում էին կողքերից: Եվ այսպես, տանում էին դռնով ու փոխանցում աշտարակ կառուցցողներին, իսկ սրանք այն վերցնելով, կառուցում էին այն մեծ վեմի վրա՝ դռան վերեւում: Այն տասը քարերը դրվեցին աշտարակի հիմքում, իսկ վեմն ու դռուը պահում էին ամբողջ աշտարակը: Տասը քարերից հետո, խորքից հանվեցին ուրիշ քսանհինգը եւս, որոնք, ինչպես եւ առաջինները, բերվեցին կույսերի կողմից եւ օգտագործվեցին աշտարակի շինության մեջ: Սրանցից հետո հանվեցին եւս ուրիշ երեսունհինգը, որոնք նույնպես օգտագործվեցին աշտարակի շինության մեջ: Ապա հանվեցին քառասունհինգ քարեր, եւս սրանք եւս բոլորը օգտագործվեցին աշտարակի շինության մեջ: Այսպիսով, աշտարակի հիմքը դրվեց չորս շարք քարերից: Երբ խորքից հանված քարերը վերջացան, շինարարները մի փոքր

դադար առան: Այնուհետեւ այն վեց մարդիկ ժողովրդին պատվիրեցին աշտարակի շինության համար քարերը բերել տասներկու լեռներից: Եվ մարդիկ սկսեցին քարեր բերել բոլոր լեռներից՝ Հղկված, տարբեր գույնի, եւ տալիս էին կույսերին, իսկ սրանք դռնով անցկացնելով՝ տալիս էին աշտարակի շինության համար: Եվ երբ այս տարբեր քարերը դրվեցին շինության մեջ, դարձան ճերմակ ու միակերպ եւ փոխեցին իրենց գույները: Բայց որոշ քարեր շինարարներին տրվում էին անմիջապես տղամարդկանց կողմից, եւ սրանց գույները չէին ճերմակում, այլ մնում էին նույնը. ինչպես որ տրվել էին, որովհետեւ ո՛չ փոխանցված էին կույսերի կողմից եւ ո՛չ էլ դռնով անցկացված: Այս քարերը անհամապատասխան էին աշտարակի շինությանը: Այս տեսներով, այն վեց տղամարդիկ հրամայեցին դրանք դուրս հանել եւ տանել այն տեղը, որտեղից բերել էին: Եվ նրանք այս քարերը բերողներին ասացին. «Շինության համար քարերը դուք մի՛ մատուցեք, այլ դրեք աշտարակի մոտ, որ կույսերը անցկացնեն դռնով եւ փոխանցեն, քանի որ դրանք չեն կարող փոխել իրենց գույնը, եթե կույսերն այս դռնով չանցկացնեն: Ուստի զուր տեղը մի՛ չարչարպեք»:

5. Եվ այդ օրը շինարարությունն ավարտվեց, բայց աշտարակը տակավին անավարտ էր: Նրա շինությունը պետք է վերսկսվեր, ու միայն ժամանակավորապես ընդհատվեց: Այն վեց մարդիկ շինարարներին հրամայեցին հեռանալ եւ մի փոքր հանգստանալ: Իսկ կույսերին հրամայեցին, որ չհեռանան աշտարակից, որպեսզի հսկեն այն: Բոլորի հեռանալուց հետո, ես հովվին ասացի. «Տե՛ր, ինչո՞ւ չափարտվեց աշտարակի շինությունը»: Նա ասաց. «Այն չի կարող ավարտվել մինչեւ նրա տերը չգտ եւ չփորձի կառույցը, որպեսզի, եթե որոշ քարեր անպետք դուրս գան՝ փոխի դրանք, քանի որ Նրա կամքով է կառուցվում այս աշտարակը»: «Տե՛ր, ասում եմ, ես կուզեի իմանալ, թե ինչ է նշանակում այս աշտարակի շինությունը, իմանալ նաև այս վեմի ու դռան, լեռների, կույսերի

եւ քարերի մասին, որ հանված են խորքից եւ չհղկված, այլ նույնությամբ դրված շինության մեջ. նաեւ՝ ինչո՞ւ սկզբում հիմքում դրվեցին տասը քարեր, ապա՝ քսանհինգ, այնուհետեւ՝ երեսունհինգ, եւ ի վերջո՞ քառասուն, ինչպես նաեւ այն քարերի մասին, որ սկզբում դրեցին շինության մեջ, բայց հետո հանեցին ու տարան իրենց տեղը: Տե՛ր, բացատրի այս ամենը եւ հանգստացրու իմ հոգին»: Նա ինձ ասաց. «Եթե անտեղի հետաքրքրասիրություն չցուցաբերեն, ամեն բան կիմանաս ու դու կտեսնես աշտարակի հետ մնացած կատարվելիքը եւ բոլոր առակները կհասկանաս»: Մի քանի օրից մենք եկանք այն նույն տեղը, որտեղ առաջ նստած էինք, եւ նա ինձ ասաց. «Գնանք աշտարակի մոտ, քանի որ նրա տերը պիտի գա եւ փորձի»: Մենք գնացինք աշտարակի մոտ եւ բայցի կույսերից ոչ ոքի չգտանք: Հովիկը հարցրեց նրանց. «Այս աշտարակի տերը դեռ չի՞ եկել»: Եվ նրանք պատասխանեցին, որ նա շուտով պիտի գա՝ նայելու շինությունը»:

6. Որոշ ժամանակ անց, ես տեսա, որ մարդկանց հոծ բազմություն է գալիս, եւ նրանց կենարոնում չափազանց բարձրահասակ մի մարդ, այնքան, որ աշտարակից անդամ բարձր էր: Նրա շուրջը քայլում էին այն վեց մարդիկ, որ կառավարում էին շինությունը եւ բոլոր նրանք, որ կառուցում էին աշտարակը, ու շատ ուրիշ փառավոր ուղեկիցներ: Աշտարակը հսկող կույսերը շտապեցին նրան դիմավորել, համբուրեցին նրան եւ սկսեցին նրա հետ շրջել աշտարակի չորս բոլորը: Եվ նա այնքան ուշադիր էր զննում կառուցը, որ ամեն մի քար փորձեց: Յուրաքանչյուր քարին նա երեք անդամ հարվածում էր ձեռքում բոնած դավազանով: Որոշ քարեր հարվածներից հետո դարձան սաթի նման սեւ, ոմանք անողորկ, ոմանք ճեղքվեցին, ոմանք կարձացան, ոմանք դարձան ոչ սեւ, ոչ սպիտակ, ոմանք անհարթ, եւ այլեւս չէին համընկնում մյուս քարերին, ոմանք ծածկվեցին բազմաթիվ բծերով: Այսքան բազմազան էին շինության համար անպետք դուրս եկած քարերը: Տերը հրամայեց բոլորը հա-

նել աշտարակից եւ թողնել իր մոտ, իսկ դրանց փոխարեն բերել եւ տեղադրել ուրիշ քարեր: Եվ շինարարները նրան հարցրին. «Ո՞ր լեռից կհրամայես քարեր բերել ու տեղադրել դուրս նետվածների փոխարեն»: Նա արգելեց լեռներից բերել, այլ հրամայեց բերել մոտակա դաշտից: Դաշտը փորեցին եւ գտան փայլուն, քառակուսի քարեր, իսկ որոշ քարեր կլոր էին: Եվ դաշտում եղած բոլոր քարերը բերվեցին, եւ կույսերն անցկացրին դռնով: Սրանցից քառակուսիները հղկեցին ու տեղադրեցին դուրս նետվածների փոխարեն, իսկ կլորները չօգտագործեցին շենքում, որովհետեւ սրանց հղկելը դժվար էր ու երկար ժամանակ էր պահանջում. բայց սրանք դրեցին աշտարակի մոտ, որ հետո տաշեն եւ օգտագործեն շինության համար, որովհետեւ սրանք շատ փայլուն էին:

7. Ավարտելով այդ, վեհասքանչ մարդը՝ այս աշտարակի տերը, կանչեց հովվին եւ նրան հանձնեց բոլոր խոտանված քարերը, որոնք պիտանի չէին շինության համար, եւ ասաց. «Մանրակրկտորեն մաքրիր այս քարերը եւ զետեղիր աշտարակի շենքի մեջ, որ կարող են համընկնել մյուսների հետ, իսկ չհամընկնողները չպատիր աշտարակից հեռու»: Այս պատվիրելով, նա հեռացավ բոլոր նրանց հետ, ում հետ որ եկել էր: Իսկ կույսերը մնացին աշտարակը հսկելու: Ես հարցրի հովվին. «Ինչպէ՞ս կարող են այս քարերը աշտարակի շինության մեջ կրկին օգտագործվել, երբ արդեն անպիտան են գտնվել»: Նա պատասխանեց. «Ես այս քարերի մեծ մասը կտաշեմ եւ կօգտագործեմ շինարարության մեջ, եւ դրանք մյուսների հետ կհամընկնեն»: «Տե՛ր, ասացի ես, ինչպէ՞ս կարող են այդ քարերը գրավել նույն տեղը, երբ նորից հղկված, փոքրացած են»: «Նրանք, որ փոքր դուրս կգան՝ կդրվեն շինության միջին մասում, իսկ մեծերը կդրվեն դրսի կողմից եւ կպահեն դրանց»: Այս խոսքերից հետո նա ինձ ասաց. «Արի գնանք եւ երկու օրից կվերադառնանք ու մաքրելով այս քարերը, կտեղադրենք շենքի մեջ: Քանի որ աշտարակի մոտ եղած ամեն բան պիտի մաքրվի, որ եթե տերը հանկարծ գա աշտարակի շուրջը թափթա-

ված չգտնի, եւ չբարկանա. այդ ժամանակ այս քարերը չեն օգտագործվի շինության մեջ, ու ես անփուլթ կգտնվեմ տիրոջ մոտ»: Երկու օր անց, երբ մենք եկանք աշտարակի մոտ, նա ինձ ասաց. «Արի՛ ստուգենք բոլոր քարերը եւ տեսնենք, թե նրանցից որը կարող է օգտագործվել շինության մեջ»: Ես ասացի նրան. «Ստուգենք, տե՛ր»:

8. Ակզերից մենք ստուգեցինք սեւ քարերը, բայց դրանք անպետք էին, ինչպես որ հանվել էին շինությունից: Հովիվը հրամայեց դրանց աշտարակի մոտից հեռացնել ու առանձին դնել: Հետո նա ստուգեց անողորկ քարերը եւ սրանցից շատերը տաշեց ու կույսերին պատվիրեց տանել ու զետեղել շենքում: Եվ կույսերը դրանք տարան ու զետեղեցին աշտարակի միջնամասում: Իսկ մնացածները նա հրամայեց դնել սեւ քարերի հետ, որովհետեւ դրանք նույնպես սեւ դուրս եկան: Ապա նա ստուգեց ճեղքերով քարերը, եւ սրանցից շատերը տաշեց ու պատվիրեց, որ կույսերի միջոցով տանեն շինություն: Սրանք դրվեցին դրսի կողմից, քանի որ ավելի ամուր դուրս եկան: Իսկ մնացածը, շատ ճեղքերի պատճառով, անհնար էր օգտագործել, ուստի՝ հեռացվեցին աշտարակի շինությունից: Ապա ստուգեց կարճացած քարերը, սրանցից շատերը սեւ դուրս եկան, իսկ որոշը՝ խոչոր ճեղքերով, եւ նա հրամայեց սրանց նույնպես տեղափոխել դեն շպրտվածների մոտ: Իսկ մնացած մաքրվածներն ու առանձնացվածները, նա պատվիրեց օգտագործել շինության մեջ, եւ կույսերը վերցնելով դրանք տարան աշտարակի կենտրոն, քանի որ այնքան էլ ամուր չէին: Այնուհետեւ նա ստուգեց կես ճերմակ, կես սեւ քարերը: Սրանցից շատերը սեւ դուրս եկան եւ նա պատվիրեց տանել դուրս՝ շպրտվածների մոտ: Իսկ մնացածը ճերմակ դուրս եկան, ու կույսերը տարան եւ օգտագործեցին շինության մեջ: Սրանք դրվեցին դրսի կողմից, որովհետեւ ամուր էին, այնպես որ կարող էին պահել միջնամասում դրված քարերը, քանի որ նրանցից ոչ մի բան տաշված չէր: Ապա նա ստուգեց ծուռումուռ ու կարծր քարերը: Սրանցից որոշ մասը դեն շպրտվեց,

քանի որ անհնար էր դրանք տաշել, որովհետեւ շատ կարծր էին, իսկ մյուսները տաշվեցին, եւ կույսերը գետեղեցին դրանք աշտարակի միջնամասում: Ապա նա ստուգեց բծավոր քարերը, եւ սրանցից շատ քչերը սեւ դուրս եկան որոնք շպրտվեցին մյուսների մոտ, իսկ մնացածները ճերմակ դուրս եկան եւ կույսերի կողմից ամբողջությամբ դրվեցին շինության մեջ, բայց դրանց կարծրության պատճառով՝ տեղադրվեցին դրսի կողմից:

9. Այնուհետեւ նա եկավ ստուգելու ճերմակ ու կլոր քարերը եւ հարցրեց ինձ. «Ի՞նչ անենք այս քարերի հետ»: «Ի՞նչ իմանամ, տե՛ր», ասացի: «Եվ այսպես ոչ մի ճար չե՞ս կարող գտնել սրանց համար», ասաց նա: «Տե՛ր, ասում եմ, ես այդ արվեստը չունեմ, եւ ես ո՛չ քարտաշ եմ եւ ո՛չ էլ դրանցից որեւէ բան եմ հասկանում»: Եվ նա ասաց. «Չե՞ս տեսնում, որ նրանք շատ կլոր են: Եթե ես ուզեմ քառակուսի դարձնել, ապա նրանցից շատ բան պիտի տաշվի, հեռացվի. հարկավոր է, որ դրանցից ոմանք մտնեն կառույցի մեջ»: «Եթե անհրաժեշտ է, ասացի ես, ինչո՞ւ ես դժվարանում եւ չես ընտրում ում որ ուզում ես, ու չես կցում աշտարակին»: Եվ նա սրանցից ընտրեց ամենամեծերն ու փայլունները, եւ տաշեց, իսկ կույսերը տարան ու զետեղեցին շինության արտաքին կողմում: Իսկ մնացածը տարան այն հովիտը, որտեղից որ բերել էին, բայց դեն չնետեցին, քանի որ, ասաց հովիվը, աշտարակին մի քիչ դեռ չի հերթում աշտարակի ավարտին, եւ տերը ուզում էր, որ այս քարերը գնան աշտարակի մեջ, որովհետեւ դրանք շատ ճերմակ էին»: Այնուհետեւ կանչվեցին տասներկու չքնաղագեղ կանայք՝ սեւ զգեստներով, մերկ ուսերով եւ արձակված մազերով: Այս կանայք ինձ գեղջկուհիներ թվացին: Հովիվը նրանց հրամայեց. շինությունից դեն շպրտված քարերը վերցնել ու տանել լեռները, որտեղից որ բերվել էին: Եվ նրանք ուրախությամբ բոլորը վերցրին, տարան ու դրեցին այնտեղ, որտեղից որ վերցված էին: Երբ աշտարակի շուրջն այլեւս ոչ մի քար չկար, նա ասաց ինձ. «Արի պտտվենք աշտարակի շինության մեջ արդյոք որեւէ

**թերություն»:** Աշտարակի շուրջը պտույտ կատարելով, հովիվը տեսավ, որ այն իր կառուցվածքով հիանալի է, եւ շատ ուրախացավ: Այն այնքան լավ էր կառուցված, որ ամեն մի տեսնող կհիանար նրա շինությամբ, քանի որ թվում էր, թե մի քարից էր պատրաստված: ու չէր երեւում եւ ոչ մի զուգակապ, այլ ասես մի վեմից էր կերտված:

10. Եվ ես, հովի հետ քայլելով, ինձ երջանիկ էի գգում այդ զմայլելի տեսարանից: Եվ նա ասաց ինձ. «Գնա շաղախ եւ փոքրիկ կղմինդրներ բեր, որ շտկեմ այն քարերի տեսքը, որոնք բերվել են ու նորից դուրս են մնացել շինությունից: քանի որ աշտարակի շուրջը ամեն բան պետք է ուղղի եւ հարթ լինի»: Եվ ես արեցի այնպես, ինչպես որ նա համայեց. եւ երբ բերեցի, նա ասաց ինձ. «Օգնի՛ր ինձ, եւ այս գործը արագ կավարտվի»: Այսպիսով նա շտկեց այն քարերը ու հարամայեց աշտարակի շուրջը մաքրել: Եվ կույսերը վերցնելով ավելները, մաքրեցին ամբողջ աղբը եւ ջրեցին, ու աշտարակի շուրջը դարձավ գեղեցիկ եւ ուրախարար: Հովիվն ասաց. «Լրիկ մաքրված է, եթե Տերը գա աշտարակը դիտելու, ոչինչ չի գտնի մեզ հանդիմանելու համար»: Այս ասելով նա ուզում էր հեռանալ սակայն ես բռնեցի նրա ուղեպարկից եւ սկսեցի աղաչել նրան հանուն իր Տիրոջ, որ բացատրի ինձ բոլոր ցույց տվածը: «Ինձ պետք է մի քիչ հանգստանալ եւ հետո ես ամեն բան կբացատրեմ քեզ: Սպասիր ինձ այստեղ, մինչեւ վերադառնամ»: «Տե՛ր, ես այստեղ մենակ ի՞նչ եմ անելու», -ասում եմ ես: «Դու մենակ չես, -պատասխանում է նա, -բոլոր կույսերը քեզ հետ են»: «Տե՛ր, հանձնիր ինձ նրանց»: Եվ նա կանչեց նրանց եւ ասաց. «Մրան, մինչեւ վերադարձս ձեզ եմ հանձնում»: Եվ այսպես ես այն կույսերի հետ մենակ մնացի: Նրանք շատ ուրախ էին եւ քնքշությամբ էին վարվում ինձ հետ. հատկապես այն չորսը՝ նրանցից հմայիչները:

11. Կույսերն ինձ ասացին. «Այսօր հովիվն այստեղ չի գալու»:

«Ուրեմն, ի՞նչ եմ անելու ես», -ասացի: Նրանք ասում են. «Սպասիր մինչեւ երեկո, թերեւս կզա եւ հետո կխոսի, իսկ եթե չգա, կմնաս մեզ հետ, մինչեւ նա կվերադառնա»: «Ես կսպասեմ նրան մինչեւ երեկո, -ասացի ես, -իսկ եթե չգա, տուն կդնամ ու առավոտյան կվերադառնամ»: Բայց նրանք պատասխանեցին. «Դու մեզ ես հանձնված եւ չես կարող մեզնից հեռանալ»: «Իսկ որտե՞ղ եմ մնալու», -ասացի ես: «Մեզ հետ, -ասացին նրանք, -դու գիշերը մեզ հետ կքննես ինչպես եղբայր, այլ ոչ թե՝ ամուսին, որովհետեւ դու մեր եղբայրն ես, եւ հետո էլ մենք պիտի բնակվենք քեզ հետ, քանի որ քեզ շատ սիրեցինք»: Ես ամաչում էի նրանց հետ մնալուց: Բայց նա, որ թվում էր, թե նրանցից առաջինն էր, ինձ գրկեց եւ սկսեց համբուրել: Եվ մյուսները տեսնելով, որ նա գրկել է ինձ, նույնպես սկսեցին ինձ համբուրել ինչպես եղբոյր, պատել աշտարակի շուրջը եւ խաղալ ինձ հետ: Նրանցից ոմանք սաղմոսներ էին երգում, ոմանք՝ խմբապարի էին բռնվել: Իսկ ես լուս ու երջանիկ ման էի գալիս նրանց հետ աշտարակի շուրջը եւ ինձ թվում էր, թե երիտասարդացել եմ: Բայց երեկոն վրա հասնելուն պես ես ուզեցի տուն գնալ, սակայն նրանք ինձ պահեցին ու թույլ չտվեցին հեռանալ: Այդպիսով, ես այդ գիշերն անցկացրի աշտարակի մոտ՝ նրանց հետ: Նրանք իրենց վուշե պարեգուտները փոեցին գետնին եւ ինձ տեղավորեցին մեծագուռմ, իսկ իրենք բացի աղոթելուց ուրիշ ոչինչ չէին անում: Եվ ես նույնպես անդադար աղոթում էի նրանց հետ, ու ոչ պակաս քան նրանք: Կույսերն ուրախանում էին, որ ես այդպես աղոթում եմ: Այսպես ես մնացի նրանց հետ մինչեւ հաջորդ առավոտ: Այնուհետեւ եկավ հովիվն ու ասաց. «Դուք նրան չե՞ք նեղացրել»: Եվ նրանք ասացին. «Իրեն հարցրու»: «Տե՛ր, -ասում եմ նրան, -ես մեծ բավականություն ստաց իրենց հետ մնալուց»: «Ինչո՞վ ես ընթրել», -հարցրեց նա: Ես ասացի. «Տե՛ր, ամբողջ գիշեր ես սնվել եմ Տիրոջ խոսքերով»: «Նրանք քեզ լա՞զ ընդունեցին»: «Լավ, տե՛ր», -ասացի ես: «Այժմ, ամենից առաջ ի՞նչի մասին ես ուզում լսել», -ասաց նա: «Տե՛ր, այն մասին, -ասացի ես, -որ դու ինձ ցույց տվեցիր սկզբում: Ես խնդրում

եմ քեզ բացատրել ինձ այն կարգով, ինչպես կհարցնեմ: «Ինչպես ուղում ես, այնպես էլ կբացատրեմ եւ քեզնից ոչինչ չեմ թաքցնի», -ասաց նա:

12. «Տե՛ր, նախ եւ առաջ բացատրիր ինձ, թե ի՞նչ են նշանակում վեմն ու դուռը», -ասացի ես: «Այս վեմը եւ դուռը Աստծո Որդին է», -ասաց նա: «Տե՛ր, ինչպե՞ս է, որ վեմը հինավուրց է, իսկ դուռը՝ նոր»: «Լսի՛ր անմիտ եւ հասկացի՛ր», -ասաց նա: «Աստծո Որդին հինավուրցն է բոլոր արարածներից, այնպես որ Նա ներկա է եղել իր Հոր արարչագործությանը: Իսկ դուռը նոր է, որովհետեւ Նա հայտնվել է վերջին օրերում եւ նոր դուռ է դարձել այն բանի համար, որ փրկվել ցանկացողները Նրա միջով անցնեն Աստծո արքայություն: Դու տեսա՞ր, -ասում է նա, -որ քարերը դռնով անցկացրին աշտարակ, իսկ որոնք այնտեղով չանցկացվեցին, այլ վերադարձվեցին իրենց տեղը»: «Տեսա, տե՛ր», -ասացի ես: «Ուրեմն, -ասում է նա, -ոչ չի մտնի Աստծո արքայությունը, եթե չընդունի Աստծո Որդուն: Որովհետեւ, եթե դու ուզենաս մտնել որեւէ քաղաք, իսկ այդ քաղաքը շրջափակված լինի պարսպով եւ ունենա մեկ դարպաս, դու ուրիշ տեղով չես կարող մտնել այդ քաղաքը, բացի Նրա ունեցած միակ դարպասից»: «Տե՛ր, ինչպե՞ս կարող է ուրիշ կերպ լինել», -ասացի ես: «Ուրեմն, -ասում է նա, -ինչպես որ բացի այդ դարպասով, այլ կերպ անհնար է մտնել այդ քաղաքը, այդպես էլ Աստծո արքայություն չի կարող մտնել մարդը, այլ միայն Աստծո միրելի Որդու անունով»: «Դու տեսա՞ր աշտարակը կառուցող բազմությունը», -հարցրեց նա: «Տեսա, տե՛ր», -ասացի: «Նրանք բոլորը, -ասաց նա, -մեծափառ հրեշտակներ են: Նրանցով, ինչպես պատ շրջափակված է Տերը, իսկ դուռը՝ Աստծո Որդին, միակ մուտքն է առ Աստված: Ոչ ոք այլ կերպ չի կարող մտնել Նրա մոտ, այլ միայն Նրա Որդու միջոցով: Դու տեսա՞ր այն վեց մարդկանց եւ Նրանց մեջտեղում այն վեհ ու մեծափառ մարդուն, որը շրջում էր աշտարակի շուրջը եւ ստուգում շինության քարերը»: «Տեսա, տե՛ր», -ասում եմ ես: Այն մեծափառ մարդը, -ասում է նա, -Աստծո Որդին է, իսկ վեց

մարդիկ, կանգնած Նրա աջ ու ձախ կողմերում՝ փառավոր հրեշտակները եւ նրանցից ոչ մեկը չի կարող մտնել Աստծո մոտ, առանց Նրա Որդու: Եվ այսպես, ով չի ընդունի Նրա անունը, չի մտնի Աստծո արքայությունը»:

13. «Իսկ աշտարակը ի՞նչ է նշանակում», -հարցրեցի ես: «Դա եկեղեցին է», -ասաց նա: «Իսկ ովքե՞ր են այդ կույսերը»: «Նրանք, -ասում է, -սուրբ Հոգիներ ենո: Մարդը չի կարող Աստծո արքայությունը մտնել, եթե նրանք չզգեստավորեն իրենց այդ հանդերձներով: Որովհետեւ ոչ մի օգուտ չի լինի քեզ, եթե ընդունես Աստծո Որդու անունը, բայց միեւնույն ժամանակ նրանից հանդերձներ չնդունես: Այս կույսերը, /ըստ էության/ Աստծո Որդու գորություններն են. իզուր կլինի քեզ կրել Նրա անունը, եթե չկրես եւ Նրա գորությունները»: «Դու տեսա՞ր այն քարերը, -ասում է նա, -որ մի կողմ շպրտվեցին: Այդ նրանք ենեւ կրել են Նրա անունը, բայց չեն զգեստավորվել կույսերի հանդերձներով: «Ինչպիսի՞ն են տե՛ր նրանց հանդերձները» -հարցրեցի ես: «Իրենց իսկ անունները, -ասաց նա, -նշանակում են իրենց հագուստները: Ամեն ոք, որ կրում է Աստծո Որդու անունը, պետք է կրի նաև նրանց անուները, քանի որ ինքը՝ Որդին կրում է այդ կույսերի անունները: Այն քարերը, որոնք, ինչպես տեսար, փոխանցվում էին նրանց ձեռքով եւ մնում էին շինության մեջ՝ նրանց գորությամբ համակվածներն են: Դրա համար էլ, տեսնո՞ւմ ես, որ ամբողջ աշտարակը կարծես կերտված է մի քարից: Այդպես էլ նրանք, որոնք հավատացել են Տիրոջը իր Որդու միջոցով, եւ լցվել են այս հոգեւոր գորություններով, կլինեն մեկ հոգի եւ մեկ մարմին ու նրանց հանդերձները կլինեն միագույն: Հենց նրանք աշտարակում բնակվելուն կհասնեն, որոնք կլրեն այդ կույսերի անունները»: «Տե՛ր, հարցրեցի ես, -ինչո՞ւ խոտանվեցին այն քարերը, որ դուրս շպրտվեցին աշտարակից, այն դեպքում, եթե նրանք նույնպես կույսերի ձեռքով էին անցկանցվել դռնով եւ դրվել աշտարակի մեջ»: «Քանի որ դու ջանասի-

բարար ամեն բան քննում ես, -ասաց նա, -ապա, լսի՛ր եւ այն քարերի մասին, որոնք դեն չպրտվեցին: Բոլոր այդպիսիները ընդունել են Աստծո Որդու անունը եւ այս կույսերի զորությունները: Ընդունելով Հոգու այս շնորհները, նրանք հաստատվել են ու եղել են Աստծո ծառաների թվում. եւ նրանք դարձել են մեկ անձ եւ մեկ մարմին եւ ունեցել մեկ զգեստ, քանի որ եղել են համախոհ եւ արդարություն են գործել: Սակայն որոշ ժամանակ անց, նրանք տարվել են այն գեղեցիկ կանանցով, որոնց դու տեսար սեւ զգեստներ հագաց հերարձակ, լանջամերկ: Տեսնելով նրանց, նրանք ցանկություն են ունեցել նրանց նկատմամբ եւ լցվել նրանց զորությամբ, իսկ այս կույսերի զորությունը իրենցից թոթափել են: Դրա համար նրանք դուրս են չպրտվել Աստծո տնից եւ արվել այդ կանանց: Իսկ նրանց գեղեցկությամբ չգայթակղվողները մնացել են Աստծո տանը: Ահա եւ քեզ դուրս չպրտված քարերի նշանակությունը», -ասում է նա:

«Տե՛ր, -հարցրի ես, -ի՞նչ կլինի, եթե այդպիսի մարդիկ ապաշխարեն, ու իրենցից հեռացնեն այդ կանանց նկատմամբ ունեցած ցանկությունները, դառնան դեպի կույսերը եւ լցվեն նրանց զորությամբ. կմտնե՞ն արդյոք նրանք Աստծո տունը»: «Կմտնեն, -ասում է նա, -եթե հրաժարվեն այդ կանանց գործերից ու վերստին ձեռք բերեն կույսերի զորությունները եւ ընթանան նրանց գործերով: Դրա համար էլ շինարարության դադար եղավ, որ նրանք ապաշխարեն եւ մտնեն աշտարակ, իսկ եթե չապաշխարեն, նրանց փոխարեն ուրիշները կմտնեն, իսկ նրանք կհեռացվեն մեկընդմիշտ»: Այս ամենի համար ես գոհություն հայտնեցի Տիրոջը, որ Նա ողորմությամբ իր անունը կանչողների նկատմամբ՝ իր դեմ մեղանչողներիս համար, առաքեց ապաշխարության հրեշտակին ու նորոգեց մեր հոգիները. արդեն տկարացած եւ փրկության հույս չունեցող մեր կյանքը»: «Տե՛ր, այժմ բացատրիր ինձ, թե ինչու է աշտարակը կառուցվում ոչ թե գետնի, այլ վեմի ու դռան վրա», -ասացի ես: «Դու այդ հարցնում ես, -ասում է նա, -որովհետեւ հիմար ես ու անմիտ»: «Տե՛ր, -ասացի ես, -ես քեզնից ամեն բան հարցնելու կարիք ունեմ, որովհետեւ բացար-

ձակապես ոչինչ չեմ հասկանում, քան որ այս ամենը այնքան վեհ է ու հրաշալի, որ մարդկանց համար հասկանալը դժվար է»: «Լսի՛ր, -ասում է նա, -Աստծո Որդու անունը մեծ է ու անչափելի, եւ այն պահում է ողջ աշխարհը: Եթե բոլոր արարածները պահվում են Աստծո Որդու կողմից, ապա ի՞նչ ես կարծում, նա պահո՞ւմ է արդյոք նրանց, որ կանչվում են իր կողմից, կրում են իր անունը եւ ընթանում են իր պատվիրաններով: Տեսնո՞ւմ ես, որ նա պահում է նրանց, որոնք ամբողջ սրտով կրում են իր անունը: Նա՝ ինքը, նրանց համար հիմք է ծառայում եւ սիրով պահում է նրանց, որովհետեւ նրանք չեն ամաչում իր անունը կրելուց»:

15. «Տե՛ր, բաց արա ինձ կույսերի եւ սեւազգեստ կանաց անունները»: «Լսի՛ր, -ասում է նա, -այն կույսերի անունները, որ ավելի ուժեղ էին եւ կանգնած էին դռան անկյուններում, նրանցից առաջինը կոչվում է Հավատք, երկրորդը՝ Պահեցողություն, երրորդը՝ Զորություն, չորրորդը՝ Համբերություն: Իսկ մնացածները, որ կանգնած էին նրանց մեջտեղում, ունեն հետեւյալ անունները՝ Պարզություն, Անմեղություն, Ողջախություն, Ուրախություն, Արդարություն, Իմաստություն, Միաբանություն եւ Սեր: Նրանք, ովքեր կրում են այս անուններն ու Աստծո Որդու անունը, կարող են մտնել Աստծո արքայություն: Այժմ լսիր սեւ զգեստներով կանանց անունները: Նրանից չորսը մյուսներից ավելի ուժեղ են. առաջինի անունն է Ուխտադրություն, երկրորդինը՝ Անչափավորություն, երրորդինը՝ Անհավատություն, չորրորդինը՝ Հեշտասիրություն: Իսկ մյուսների անուններն են՝ Տիրություն, Խորամանկություն, Ասելություն: Աստծո ծառան, որն այս անուններն է կրում, չնայած Աստծո արքայությունը կտեսնի, բայց չի մտնի այնտեղ»: «Տե՛ր, իսկ այն քարերը, -ասում եմ ես, -որ հանված են խորքից ու դրված շինության մեջ դրանք ովքե՞ր են»: «Առաջին տասը, -ասում է, -որ դրված են հիմքում, առաջին դարն էօ, հաջորդ քսանհինդը՝ արդարների երկրորդ դարը, երեսունհինդը՝ մարգարեներն ու Տիրող սպասավորներն են, քառասունը՝

Առաքյալներն ու Աստծո Որդու ավետարանի վարդապետները»: «Տե՛ր՝ ասացի ես-այդ դեպքում կույսերն ինչո՞ւ էին քարերը տանում շինության մեջ՝ գոնից անցկացնելով»: «Որովհետեւ, -ասում է, -նրանք առաջինն էին, որ ունեին այս կույսերի զորությունները, եւ մեկը մյուսից չէին զատվում, ոչ հոգեւոր զորությունները մարդկանցից, ոչ էլ մարդիկ զորություններից: Եվ այս զորությունները մնացին նրանց հետ մինչեւ իրենց ննջելու օրը: Եթե նրանք չունենային հոգեւոր զորությունները, ապա պիտանի չէին լինի աշտարակի շինության համար»:

16. «Տե՛ր, շարունակիր բացատրել», -ասացի ես: «Սրանցից բացի, էլ ի՞նչ ես ուզում իմանալ», -ասաց նա: Այս քարերն ինչո՞ւ հանվեցին խորքից եւ տեղադրվեցին աշտարակի շինության մեջ, այն դեպքում, երբ նրանք արդեն ունեին հոգեւոր զորություններ», -ասացի ես: «Նրանց համար անհրաժեշտ էր անցնել ջրի միջոցովք, -ասում է նա, -որպեսզի վերակենդանանային, այլապես նրանք չէին կարող մտնել Աստծո արքայությունը, առանց մի կողմ դնելու իրենց նախկին կյանքի անկենդանությունը: Դրա համար այս ննջեցյանները ստացան Աստծո Որդու կնիքը եւ մտան Աստծո արքայությունը: Որովհետեւ մարդը, մինչեւ Աստծո Որդու անունը ընդունելը, մեռած է, բայց երբ ստանում է այդ կնիքը, մի կողմ է դրվում անկենդանությունը եւ ընդունում կյանքը: Այդ կնիքը ջուրն է. մարդիկ ջրի մեջ մտնում են մեռած եւ նրանից գուրսա են գալիս կենդանի: Ուստի, նրանց եւս քարոզվել է այդ կնիքը, ու նրանք օգտվել են դրանից՝ Աստծո արքայությունը մտնելու համար»: «Տե՛ր, այդ դեպքում ինչո՞ւ քառասուն քարերը նույնպես հանվեցին խորքից, որոնք արդեն ունեին այդ կնիքը», -ասացի ես: «Որովհետեւ, -ասաց նա, -նրանք՝ առաքյալներն ու վարդապետներն են, որ վարողել են Աստծո Որդու անունը, Աստծո Որդու զորության եւ հավատքի մեջ ննջելուց հետո քարոզել են իրենցից առաջ ննջածներին ու նրանց իրենք են տվել կնիքը: Նրանք նրանց հետ ջուրն են ընկղմվել եւ նրանց հետ դուրս եկելիս: Բայց իրենք

ողջ են ընկղմվել, իսկ նրանք, որ ննջել էին իրենցից առաջ, ընկղմվել են մեռած, բայց զուրս են եկել ողջ: Առաքյալների միջոցով նրանք կյանք են ստացել ու ճանաչել են Աստծո Որդուն եւ դրա համար նրանց հետ միասին են վերցվել ու դրվել աշտարակի շինության մեջ: Նրանք շինության համար օգտագործվել են առանց հղկվելու, որովհետեւ ննջել են արդարության ու սրբության մեջ: Ահա եւ քեզ այդ քարերի մասին բացատրությունը»:

17. «Տե՛ր, այժմ բացատրիր ինձ լեռների նշանակությունը. ինչո՞ւ են նրանք այդքան տարբեր եւ ամեն մեկը մի տեսքի», -ասացի ես: «Լսի՛ր, -ասում է նա, -այս տասներկու լեռները, որ տեսնում ես, տասներկու ցեղերն են, որոնք բնակեցնում են ողջ աշխարհը: Նրանց մեջ քարոզվել է Աստծո Որդին՝ առաքյալների կողմից»: «Տե՛ր, իսկ ինչո՞ւ են նրանք զանազան եւ ոչ միակերպ», -ասացի ես: «Լսի՛ր: Այս տասներկու ցեղերը, որ բնակեցնում են ողջ աշխարհը, տասներկու ժողովուրդներն են. ինչպես որ տեսար, տարբեր են լեռները. այդպես էլ՝ այդ ազգերի միտքն ու ներքին տրամադրությունը: Ես հիմա քեզ ցույց կտամ նրանցից յուրանքաչուրի նշանակությունը»: «Տե՛ր, նախ եւ առաջ բացատրիր ինձ հետեւյալը. երբ այդ լեռներն այդքան տարբեր են, ինչպե՞ս է, որ նրանցից բերված քարերը եւ դրվելով աշտարակի մեջ, խորքից հանված քարերի պես դարձան միագույն ու նրանց պես փայլուն»: «Որովհետեւ, -ասաց նա, -երկինքի տակ բնակվող բոլոր ժողովուրդները լսելով քարոզությունը եւ հավատալով, կոչվել են Աստծո Որդու միակ անունով, ուստի ընդունելով նրա կնիքը, բոլորը ունեն մեկ հոգի եւ մեկ հասկացողություն, ու նրանց մոտ դարձել է մեկ հավատք եւ մեկ սեր, ու նրա անվան հետ միասին լցվել են կույսերի հոգեւոր զորություններով: Դրա համար էլ աշտարակը դարձավ միագույն եւ արեւի պես լուսաշող: Բայց այն բանից հետո, երբ նրանք միաբանվեցին եւ դարձան մեկ մարմին, նրանցից ոմանք իրենց պղծեցին եւ դուրս շպրտվեցին արդարների ցեղից, նորից

վերադասն իրենց նախկին վիճակին եւ, անգամ ավելի վատթար դարձան»:

18. «Տե՛ր, նրանք ճանաչելով Տիրոջը, ինչպէ՞ս ավելի վատթար դարձան», -ասացի ես: Եվ նա ասաց. «Տիրոջը չճանաչողը, եթե չարիք է գործում, պատժում է իր չարագործության համար: Բայց ով ճանաչել է Տիրոջը, նա այլեւս պիտի խուսափի չարությունից ու պիտի բարիք գործի: Եվ եթե նա, ով պիտի բարիք գործի, դրա փոխարեն չար գործեր է կատարում, ապա նա ավելի հանցավոր չէ՞՝ քան Աստծուն չճանաչողը: Ուստի, նրանք, որ Աստծուն չեն ճանաչում եւ չարիք էին գործում, դատապարտվում են մահվան, իսկ նրանք, որ ճանաչում են Տիրոջը եւ տեսել են Նրա հրաշալի գործերը, բայց այնուամենայնիվ չարիք են գործում, կստանան կրկնակի պատիժ եւ կմեռնեն առհավետ: Այսպես կմաքրվի Աստծո Եկեղեցին: Ինչպես տեսար, երբ անպետք քարերը դուրս շպրտվեցին աշտարակից եւ տրվեցին չար ողիներին, աշտարակն այնպես մաքրվեց, որ թվում էր, թե ամբողջովին մեկ քարից է կերտված, այդպիսին կրկնի եւ Աստծո Եկեղեցին, երբ կմաքրվի ու նրանից կհեռացվեն չարերը, կեղծավորները, Աստված հայհոյողները, երկմիտներն, ու բոլոր նրանք, որ տարբեր անօրենություններ են գործում, այն կդառնա մեկ մարմին, մեկ հոգի, մեկ միտք, մեկ հավատք եւ մեկ սեր, ու այնժամ Աստծո Որդին կվեհանա նրանց միջնեւ եւ իր ժողովրդին լընդունելով՝ սրբված կուրախանա: » «Տե՛ր, -ասացի ես, -այս ամենը վեհ է ու փառավոր: Այժմ բացատրիր ամեն մի լեռան իմաստն ու նշանակությունը, որպեսզի Տիրոջն ապավինող ամեն ոք այս լսելով, փառաբանի Նրա մեծ, հրաշալի ու փառավոր անունը»: «Լսի՛ր, -ասում է, -այդ տարբեր լեռների, այսինքն՝ տասներկու ժողովուրդների մասին»:

19. Առաջին լեռը, որ սեւ է, նշանակում է ուրացող հավատացյալներ, Տիրոջ հայհոյողներ եւ Աստծո ծառաներին դավաճանողներ:

Սրանց մահն է սպասում եւ ապաշխարություն չկա այլեւս ու նրաք սեւ են, որովհետեւ սրանց ցեղն անօրեն է: Երկրորդը՝ մերկը, կեղծավոր հավատացյալներն ու անարդարության ուսուցիչներն են. սրանք շատ մոտ են առաջիններին եւ արդարության պտուղ չունեն: Որովհետեւ ինչպես իրենց լեռն է ամայի ու անպտուղ, այդպես էլ այս մարդիկ, թեեւ անուն ունեն, բայց չունեն հավատք, եւ նրանց մեջ ճշմարտության ոչ մի պտուղ չկա: Նրանց համար, այնուամենայնիվ, ապաշխարություն կա, եթե իսկույն եւեթ ապաշխարեն, իսկ եթե հապաղեն, նրանց առաջինների հետ միասին մահ է սպասվում»: «Տե՛ր, -ասում եմ ես, -իսկ ինչո՞ւ առաջինների համար ապաշխարության իրավունք կա, իսկ վերջիններին՝ ոչ: Զէ՞ որ նրանց գործերը համարյա նույնն են»: Որովհետեւ, -ասում է նա, -նրանք չեն հայհոյել իրենց Տիրոջը եւ չեն մատնել Աստծո ծառաներին, այլ շահի համար գայթակղել են մարդկանց ու յուրաքանչյուրը ուսուցանել է մեղսագործ ցանկասիրությունով: Այս գործերի համար սրանք կպատվեն, սակայն սրանց ապաշխարություն կա այն բանի համար, որ Տիրոջը չեն հայհոյել ու մատնիչ չեն եղել»:

20. Երրորդը՝ փշերով ու տատասկներով ծածկված լեռը. նշանակում է հավատացյալներ որոնցից ոմանք հարուստ են, իսկ մյուսները իրենց տվել են բազում զբաղմունքերի, քանի որ փշերը նշանակում է հարուստներ, իսկ տատասկները նրանք, որոնք բազում զբաղմունքների արվեցին: Այդպիսիները Աստծո ծառաների հետ հարաբերություն չունեն, այլ տարվելով իրենց գործերով հեռանում են նրանցից: Իսկ հարուստները գժվարությամբ են շփվում Աստծո ծառաների հետ, վախենալով, որ իրենցից որեւէ բան չխնդրեն: Նման մարդկանց համար դժվար է մտնել Աստծո արքայությունը: Ինչպես բոբիկ ոտքերով դժվար է քայլել փշերի վրայով, այդպես էլ այսպիսի մարդկանց համար դժվար է մտնել Աստծո արքայությունը: Բայց սրանց համար ապաշխարություն կա, միայն թե պետք է անհապաղ դիմեն դրան, եւ կյանքի մնացյալ օրերում լրացնեն

անցյալում բաց թողածները ու բարիք գործեն: Ապաշխարելով եւ բարիք գործելով կապրեն Աստծո հետ, իսկ եթե մնան իրենց գործերի մեջ, կտրվեն այն կանանց ձեռքը, որոնք նրանց կզրկեն կյանքից»:

21. Չորրորդ լեռը, որի վրա շատ բույսեր կան, որոնց ծայրերը կանաչ են, իսկ արմատի մոտ չոր. եւ նույնիսկ թոշնած արեւի շոգից՝ այն հավատացյալներն են, ովքեր երկմտում են, կամ էլ Աստծուն ունեն շուրջերին, իսկ սրտերում՝ ոչ: Դրա համար սրանց հիմքը չոր է եւ տկար, եւ միայն սրանց խոսքերն են կենդանի, իսկ գործերը՝ անկենդան, այսինքն ոչ կենդանի են, ոչ՝ մեռած: Ինչպես այն խոտերը, որ արեւի երեւալուն պես չորանում են, ճիշտ այդպես էլ այդ երկմիտները, լսելով հալածանքների մասին, վախկոտության պատճառով երկրպագում են կուռքերին, եւ ամաչում են իրենց Տիրոջ անունից. այսպիսի մարդիկ ոչ ողջ են, ոչ էլ մեռած: Սակայն սրանք եւս կարող են ապրել, եթե առանց հապաղելու ապաշխարեն, իսկ եթե չափաշխարեն, կմատնվեն այն կանանց ձեռքը, որոնք նրանց կզրկեն կյանքից:

22. Հինգերորդ լեռը, որը ժայռոտ է, բայց կանաչ խոտեր ունի, այն հավատացյալներն են, որոնք թեեւ հավատում են, բայց քիչ են սովորում, հանդուգն են եւ ինքնագուհ, ուզում են ամենագետ երեւալ, բայց ոչինչ չգիտեն: Այդ համառության պատճառով նրանց միտքը հեռացել է իրենցից ու նրանց մեջ է մտել անմտությունը: Իրենք իրենց խելոքի տեղ են, գնում բայց հիմար լինելով, ուզում են ուսուցիչ լինել: Այդ մեծամատության պատճառով սրանցից շատերը իրենց անձը բարձրացնելով ստորացվել են, որովհետեւ մեծագույն դիվություն է համառությունն ու դատարկ ինքնավստահությունը: Սրանցից շատերը մերժվել են, իսկ մյուսները, գիտակցելով իրենց մոլորությունը, ապաշխարել են եւ հարել իմաստուններին: Սակայն սրանց նման մյուսների համար էլ կապաշխարություն, քանի որ նրանք ոչ այնքան չար էին, որքան՝ անմիտ

ու հիմար: Ուստի եթե ապաշխարեն, կապրեն Աստծո հետ, իսկ եթե չափաշխարեն, կբնակվեն իրենց հանդեպ նենդություն անող կանանց հետ:

23. Վեցերորդ մեծ ու փոքր ծերպերով եւ չորացած բույսերով լեռ, նշանակում է այսպիսի հավատացյալները. փոքր ծերպերը նրանք են, ովքեր իրար մեջ խռովություն են ունեցել եւ փոխադարձ վեճերից բժացել է իրենց հավատը: Մրանցից շատերը ապաշխարել են, նույնը կանեն նաեւ մյուսները, լսելով իմ պատվիրանները, որովհետեւ նրանց վեճերն աննշան են եւ նրանք հեշտությամբ կդիմեն ապաշխարության: Մեծ ծերպերը նրանք են, ովքեր համառ են խռովությունների մեջ, ոխակալ են ու ցասկոտ. այսպիսիները գուրս են շպրտվել աշտարակից եւ պիտանի չեն շինության համար: Նրանց դժվար է ապրել Աստծո հետ: Եթե մեր Աստվածն ու Տերը, Որն իշխում է իր բոլոր արարածների վրա, իրենց մեղքերը խռոսովանվողների նկատմամբ անհիշաշար է եւ ողորմած, ապա մահկանացու մարդուն ինչպես կարելի է համառորեն բարկանալ մարդու վրա, ասես նա կարող է փրկել, կամ կործանել նրան: Ես՝ ապաշխարության հրեշտակս, հավատացնում եմ ձեզ, որ եթե նման կեցվածք ունիք, մի կողմ թողե՛ք եւ դիմեք ապաշխարության. եւ Տերը կրժէկի ձեր նախկին մեղքերը. մաքրվե՛ք այդ դիվական չարից, եթե ոչ՝ կմատնվեք մահկան:

24. Յոթերորդ լեռը, որի վրայի բույսերն այնքան կանաչ էին, ծաղկուն եւ առատ, որ բոլոր տեսակի անասուններն ու թուչունները սնվում էին դրանցով, եւ դրանք պոկելուց հետո ավելի լավ էին աճում. այն հավատացյալներն են, որոնք միշտ բարի են եւ համեստ, ու իրար մեջ խռովություններ չունեն, այլ միշտ ուրախանում են Աստծո ծառաներով, լցված են կույսերի հոգով, գթասիրտ են բոլոր մարդկանց նկատմամբ, եւ առանց հապաղելու ու երկմտելու իրենց ծառայություններն են մատուցում բոլոր կարիք ունեցողներին: Ուստի Տերը տեսնելով նրանց պարզու-

թյունն ու ողջ բարությունը, առատությունն է շնորհել նրանց ձեռքերի ծառայություններին, եւ բոլոր գործերում հաջողությունն է պարզեւել: Ես, ապաշխարության հրեշտակս, հորդորում եմ ձեզ՝ լինել նման բարեհաճության մեջ, եւ ձեր սերմերը հավետ արմատախիլ չեն լինի: Տերը հավանել է ձեզ ու մեր թվին է դասել, եւ ձեր բոլոր սերմերը հավետ արմատախիլ չեն լինի ու կապը Աստծո Որդու հետ, որովհետեւ դուք նրա Հոգուց եք:

25. Ութերորդ լեռը՝ բազում աղբյուրներով, որոնցից հագենում են Աստծո բոլոր արարածները՝ առաջալներն ու վարդապետներն են, ովքեր քարոզել են ողջ աշխարհում, եւ սրբորեն ու անարատությամբ ուսուցանել են Աստծո խոսքը, եւ չեն շեղվել դեպի չար ցանկությունները, այլ Սուրբ Հոգին ընդունելուց հետո, մշտապես ընթացել են արդարության եւ ճշմարտության մեջ: Դրա համար նրանք բնակվում են հրեշտակների հետ:

26. Իններորդ՝ ամայի եւ մարդկանց համար մահացու շատ օձերով լեցուն լեռան բծավոր քարերը, խորհրդանշում է այն սարկավագները, որոնք վատ են ծառայել. Թալանել են այրիների եւ որբերի ապրուստը եւ հարստացել են իրենց ծառայությունից: Եթե շարունակեն մնալ իրենց չար գործերի մեջ, ապա մեռած են ու նրանց համար ապրելու ոչ մի հույս չկա, եթե ուղղվեն եւ արդարությամբ կատարեն իրենց ծառայությունը՝ կարող են ապրել: Իսկ անողորկ քարերը նրանք են, ովքեր ուրացել են եւ չեն շրջվել դեպի Տերը, վայրենացել են ու դարձել անապատ, քանի որ չեն շփվում Աստծո ծառաների հետ, այլ միայնակ ապրելով, կործանում են իրենց հոգիները: Ինչպես առանց որեւէ ինսամքի թողած որթառունկը կորչում եւ խեղդվում է խոտերից, ու ժամանակի ընթացքում դառնում է վայրի եւ տիրոջ համար անօգուտ, այդպես էլ այս մարդիկ՝ իրենք իրենց հուսալքած, վայրենացել են եւ իրենց Տիրոջ համար

դարձել անպիտան: Նրանց համար ապաշխարության կա, եթե նրանք ի սրտեւ չեն ուրացել, իսկ եթե որեւէ մեկն այդ արել է ի սրտեւ, չգիտեմ, թե կարո՞ղ է արդյոք այդպիսի մեկը կյանք ունենալ: Ես չեմ ասում ներկա օրերի մասին, թե մեկը ուրանալով իր Տիրոջը, կարող է ապաշխարել քանի որ անհնար է փրկություն ստանալ նրան, ով այժմ կուրանա իր Տիրոջը. այլ, ապաշխարություն է տրվում նրանց, ովքեր ուրացել են անցյաներում: Ուրեմն, ով մտադիր է ապաշխարել, թող այդ անի անհապաղ, քանի դեռ աշտարակի շինարարությունը չի ավարտվել, իսկ եթե չշտապի, այն կանանց կողմից մահվան կմատնվի: Իսկ կարճացած քարերը, նշանակում են նենդ եւ զրապարտիչ մարդիկ, որոնք նման են այն օձերին, որ տեսար իններորդ լեռան վրա: Որովհետեւ ինչպես օձի թույնը մահացու է մարդու համար, այդպես էլ այս մարդկանց խոսքերը կործանարար են ուրիշների համար: Սրանք իրենց հավատքի մեջ կարճացել են իրենց արարքների պատճառով: Սակայն սրանցից ոմանք ապաշխարել են ու փրկվել: Նույնպես եւ ուրիշ այդպիսիները կստանան փրկություն, եթե ապաշխարեն. իսկ եթե չեն ապաշխարի, կմեռնեն այն կանանց միջոցով, որոնք զորություն եւ իշխանություն ունեն:

27. Տասներորդ լեռը, որի ծառերը որպես հովանի էին ծառայում կենդանիների համար, դրանք եպիսկոպոսներն են եւ օտարասեր անձինք, ովքեր անկեղծորեն եւ ուրախությամբ միշտ իրենց տներն են ընդունել Աստծո ծառաներին, եպիսկոպոսներին, որոնք միշտ հովանավորել են աղքատներին եւ այրիներին ու հարատեւել են մաքրության մեջ: Այսպիսի մարդկանց հովանավորում է Ինքն՝ Աստված: Նրանք հարդանք են վայելում Աստծո մոտ, ու նրանց տեղը հրեշտակների հետ է, եթե մինչեւ վերջ մնան Աստծո սպասավորության մեջ:

28. Տասնմեկերորդ լեռը, որի ծառերը պտղառատ են՝ հավատացյալներն են, որոնք չարչարանքներ են կրել Աստծո Որդու անվան հա-

մար, տառապել են սիրով եւ ամբողջ սրտով ուրացել են իրենց անձը: Ես հարցյացի. «Տե՛ր, իսկ ինչո՞ւ բոլոր ծառերը պտուղներ ունեն, բայց դրանց որոշ պտուղներ մյուսներից ավելի լավն են»: «Լսի՛ր, -ասաց նա, -Տիրոջ անվան համար տառապածները փառավորված են Աստծո մոտ, եւ նրանց բոլորի մեղքերը թողնված են, քանի որ տառապել են Աստծո Որդու անվան համար: Արդ լսիր, թե ինչո՞ւ են նրանց պտուղները տարբեր, եւ նրանցից ոմանք ավելի լավը մյուսներից: Նրանք, ովքեր բերվելով իշխանությունների մոտ, հարցաքննության են ենթարկվել եւ Տիրոջը չեն ուրացել, այլ հոժարությամբ տառապանքներ են կրել, առավել փառավորված են Աստծո մոտ. ու նրանց պտուղը շատ բարի է: Իսկ ովքեր ընկել են վախի ու շփոթության մեջ եւ իրենց սրտերում խորհել են խոստովանե՞լ, թե ուրանալ Աստծուն, եւ տառապանքներ են կրել: Սրանց պտուղները պակաս բարի են, քանի որ իրենց սրտում չար խորհուրդ է եղել. որպեսզի ծառան իր Տիրոջը ուրանա: Դուք՝ այդպես մտածողներդ, տեսե՞ք, որ այդ խորհուրդը չհաստատվի ձեր սրտում, որպեսզի չմեռնեք Աստծո համար: Իսկ դուք՝ Աստծո անվան համար տառապողներդ, պիտի փառաբանեք Աստծուն, որ ձեզ արժանացնում է իր անունը կրելուն, որովհետեւ պիտի բժշկվեն ձեր բոլոր մեղքերը: Մի՞թե դուք ձեզ մյուսներից պիելի երանելի չեք համարում: Դուք մտածում եք, թե մեծ բան էք արել, եթե ձեզանից մեկը տառապել է: Բայց Տերը ձեզ կյանքօ է պարզեւում, եւ դուք դրա մասին չեք մտածում: Ձեզ ճնշում էին ձեր մեղքերը, եւ եթե դուք չտառապեիք հանուն Տիրոջ, մեռած կլինեիք Աստծո համար՝ ձեր մեղքերի պատճառով: Ես այս ասում եմ ձե՛զ, որ խորհուրդ եք՝ խոստովանե՞լ Աստծուն, թե՞ ուրանալ: Խոստովանե՞ք, որ Տեր ունեք եւ չուրանալով՝ ձեզ շղթաների մատնեք: Եթե բոլոր ազգերը պատժում են իրենց ստրուկներին, երբ նրանցից մեկը ուրանում է իր տերը, ապա, ի՞նչ եք կարծում, ձեզ հետ ի՞նչ կանի Տերը, որն ամեն բանի վրա իշխանություն ունի: Ուստի ձեր սրտերից հեռացըք՝ այդպիսի խորհուրդները, որպեսզի հավիտյան ապրեք Աստծո հետ:

29. Տաներկուերորդը՝ ճերմակ լեռը. այն հավատացյալներն են, ովքեր նման են երեխաների, որոնց սրտում չարություն չի մտել եւ չգիտեն ինչ է կեղծավորությունը, այլ հարատեւել են պարզության մեջ: Այսպիսի մարդիկ անկասկած պիտի բնակվեն Աստծո արքայությունում, քանի որ նրանք ոչ մի գործում չեն խախտել Աստծո պատվիրանները, այլ պարզությամբ, իրենց կյանքի բոլոր օրերում ընթացել են նույն վիճակի մեջ: Նրանք, ովքեր կլինեն երեխաների նման, որ չարություն չունեն, ավելի փառավոր պիտի լինեն բոլոր նրանցից, որ հիշատակվեցին վերը, որովհետեւ երեխաները փառավորյալ են Աստծո մոտ եւ նրա մոտ առաջիններից են պատվզում: Օրհնյալ եք դուք, որ ձեզնից հեռացըել եք չարը եւ հագել եք անմեղությունը, որովհետեւ դուք առաջինը պիտի բնակվեք Աստծո հետո»: Այնուհետեւ երբ հովիվն ավարտեց բոլոր լեռների բացատրությունը, ես ասացի նրան. «Տե՛ր, այժմ ինձ ասա այն քարերի մասին, որոնք բերված են հովտից եւ դրված են շինության մեջ՝ դուրս հանված քարերի փոխարեն, նաեւ այն կլոր քարերի մասին, որոնք մտել են աշտարակի շինության մեջ, ու նրանց, որոնք ցարդ կլոր են մնում»:

30. «Լսի՛ր, -ասում է, -նաեւ այս ամենի մասին: Քարերը, որոնք վերցվել են հովտից եւ մերժվածների փոխարեն դրվել են շինության մեջ, այս ճերմակ լեռան նստվածքաշերտերն են: Քանի որ այդ լեռան հավատացյալները անմեղ դուրս եկան, ապա Տերը պատվիրեց սրանց, որ այս լեռան հիմնաքարերն են, դնել աշտարակի շինության մեջ, քանի որ ճերմակ կմնան եւ ոչ մեկը չի սեւանա: Իսկ եթե նա դներ մյուս լեռներից, ապա ստիպված կլիներ աշտարակը վերստին գննել եւ մաքրել: Այս ճերմակ քարերը նորագարձներն ենօ, որոնք հավատացել են եւ պիտի հավատան, որովհետեւ անմեղ է: Արդ, լսի՛ր նաեւ կլոր ու փայլուն քարերի մասին: Սրանք եւս ճերմակ լեռից են: Իսկ ինչու են նրանք կլոր դուրս եկե՞լ.

որովհետեւ հարստությունը մի քիչ մթագնել է նրանց, բայց նրանք ոչ Աստծուց են հեռացել եւ ոչ էլ երեւէ վատ խոսք է դուրս եկել նրանց բերանից, այլ միշտ ճշմարտություն, առաքինություն եւ արդարություն։ Ուստի, Տերը ճանաչելով նրանց հոգին, նաեւ, որ նրանք ծնվել ու մնում են բարի, հրամայել է կտրել, հեռացնել նրանց հարստությունները, բայց ոչ ամբողջովին, որպեսզի մնացածով նրանք կարողանան բարեգործություն անել եւ ապրել Աստծո հետ, որովհետեւ նրանք բարիների սերնդից են։ Դրա համար նրանք մի քիչ հղկվեցին եւ դրվեցին աշտարակի մեջ։

31. Իսկ մյուս քարերը, որոնք մնացել են կլոր եւ ոչ պիտանի շենության համար՝ դեռ կնիք չեն ստացել եւ վերադարձվել են իրենց տեղը, որովհետեւ շատ կլոր են գտնվել։ Նրանցից պետք է հատվի այս աշխարհի բարիքներն ու փուչ հարստությունը, եւ այնժամ նրանք պիտանի կլինեն Աստծո արքայության համար։ Նրանք պիտի մտնեն Աստծո արքայությունը, որովհետեւ Տերն օրհնել է այս սերունդը, ու ոչ մեկը պիտի չկործանվի։ Կարող է պատահել, որ նրանցից որեւէ մեկը չար սատանայից գայթակղված, մեղանչի ինչ որ բանում, բայց չուտով վերատին կդառնա դեպի իր Տերը։ Ես՝ ապաշխարության հրեշտակս, օրհնում եմ ձեզ, որ անմեղ եք, ինչպես երեխաները, որովհետեւ ձեր բաժինը բարի է ու փառավորյալ Աստծո մոտ։ Եվ բոլորին, որ ստացել են Աստծո Որդու կնիքը՝ ասում եմ. եղե՛ք պարզ, մի՛ հիշեք վիրավորանքները, մի՛ մնացեք չարության մեջ, եւ ձեզնից ոչ մեկի սրտում հիշաշարության պատճառով դառնություն թող չլինի. բժշկե՛ք եւ հեռացրե՛ք ձեզնից չար խռովությունները, որպեսզի հոտի տերը գա եւ իր ոչխարներին ամբողջական գտնելով, ուրախանա։ Իսկ եթե որեւէ մեկը կորած լինի հովիվների պատճառով, կամ էլ հենց իրենք՝ հովիվները տիրոջ կողմից անպետք գտնվեն, ի՞նչ պատասխան պիտի տան նրան։ Մի՞թե պիտի ասեն, թե իրենք հալածված են հոտի կողմից։ Քանի որ անհնար է, որ հովիվը հալածվի իր ոչխարների կողմից, ուստի նա ավելի պատիժ կրուի իր ստի համար։ Եվ ես, հովի-

վս, ձեզ համար հաշվետվություն պիտի տամ Բարձրյալին։

32. Եվ այդպես, հոգացեք ձեր մասին, քանի դեռ կառուցվում է աշտարակը։ Տերը բնակվում է խաղաղասեր մարդկանց մեջ, որովհետեւ նա ինքը սիրում է խաղաղությունը ու շատ հեռու է կովասերներից եւ չար գործերով ապականվածներից։ Անխաթար վերադրեք նրան այն հոգին, որը ստացել եք նրանից։ Քանի որ, եթե լվացարարին հագուստով անվնաս վիճակում տաս, ապա կուզես ետ ստանալ անվնաս, իսկ եթե լվացարարը քեզ այն պատառութված վիճակում վերադարձնի, կվերցնե՞ս այն։ Չե՞ս բարկանա եւ չե՞ս հանդիմանի, ասելով. «Ես քեզ հագուստու տվեցի անվնաս, դու ինչո՞ւ այն պատառութեցիր ու անպիտան դարձրիր։ Հիմա քո արած պատովածքների պատճառով այն չի կարող օգտագործվել։» Արդյոք այս չե՞ս ասի լվացարարին, որ պատովածք է արել հագուստիդ վրա։ Ուրեմն, եթե դու վշտանում ես հագուստիդ համար եւ տրտնջում ես, որ այն անվնաս չես ստացել, ի՞նչ ես կարծում, ի՞նչ կանի քեզ Տերը, որը քեզ հոգին տվել է մաքուր վիճակում, իսկ դու այն դարձրել ես այնքան անպիտան, որ այն ոչ մի բանով չի կարող ծառայել Տիրոջը, որովհետեւ այն քո միջոցով վնասվեց ու դարձավ անպետք։ Այս պիտի գործի համար Տերը քեզ մահվան կմատնի։ Այսպես նա կպատճի բոլոր նրանց, որոնց գտնի վիրավորանքները համառությամբ հիշելիս։ «Իհարկե, -ասացի ես, -բոլոր նրանց, որ համառորեն ոխ են պահում, Տերը պիտի պատժի»։ «Մի՛ արհամարհեք նրա ողորմածությունը, -ասաց նա, -այլ փառաբանեք նրան, որ նա ի տարբերություն ձեզ այդքան համբերատար է ձեր հանցանքների հանդեպ։ Ապաշխարե՛ք, քանի որ այդ է օգտակարը ձեր համար»։

33. «Այն ամենը, որ նկարագրվեց վերը, ես՝ ապաշխարության հրեշտակս, ցույց տվեցի ձեզ, որպեսզի ապաշխարեք։ Ես Աստծո ծառաներին ասել եմ, այժմ էլ եմ ասում, որ եթե հավատաք եւ լսեք իմ խոսքե-

բը. Վարվեք ըստ դրանց եւ ուղղեք ձեր ճանապարհները, կարող եք փրկվել, իսկ եթե համառորեն ընթանաք կեղծավորությամբ ու հիշաչարությամբ, այդպիսիներից եւ ոչ մեկը չի ապրի Աստծո հետ, որովհետեւ այս ամենը նախապես ասվեց ձեզ»: Այնուհետեւ հովհան ասաց ինձ. «Դու բոլո՞րը հարցրեցիր»: «Այո,՝ տե՛ր», - ասացի ես: «Իսկ ինչո՞ւ դու չհարցրիր շինության մեջ դրված այն քարերի մասին, որոնց տեսքը մենք շտկեցինք», - ասաց նա: «Մոռացա, տե՛ր», - ասացի ես: «Լսիր նաեւ դրանց մասին, - ասում է. այդ նրանք են, որ այժմ լսեցին իմ պատվիրանները եւ ամբողջ սրտով ապաշխարեցին, եւ Տերը տեսնելով որ նրանց ապաշխարությունը բարի է ու մաքուր, եւ որ նրանք այդպես կշարունակեն, հրամայեց մաքրել նրանց նախկին մեղքերը: Եվ այդպես նրանց մեղքերը քավվեցին, որ հետո տեսանելի չլինեն»:

### ԱՌԱԿ ՏԱՍԵՐՈՐԴ

Ապաշխարության եւ ողորմության մասին:

1. Այն բանից հետո, երբ ես ամբողջությամբ գրի առա այս գիրքը, այն հրեշտակը, որ ինձ հանձնել էր հովհին, եկավ իմ տունը եւ նստեց բազմոցին, իսկ հովհիը կանգնեց նրա աջ կողմում: Հետո նա ինձ կանչեց եւ ասաց. «Ես քեզ, ու քո ընտանիքը հանձնեցի այս հովհին. նրա հովանավորության տակ»: «Այդպես է, տե՛ր», - ասում եմ ես: «Ուրեմն այսպես, - ասում է, - եթե ուզում ես բոլոր փորձանքներից պահպանված լինել եւ պատահարներից, եւ հաջողություն ունենալ ամեն մի բարի գործի ու խոսքի, եւ ամեն առաքինության մեջ, վարվի՛ր ըստ այն պատվիրանների, որ նա տվել է քեզ, եւ կարող կլինես իշխանու ամեն ստություն վրա: Որովհետեւ եթե պահես այդ պատվիրանները, քեզ կենթարկվեն բոլոր ցանկություններն ու այս աշխարհի հեշտասիրությունները, եւ հաջողությունը քեզ կուղեկցի բոլոր բարի գործերում: Պատվի՛ր նրա արժանիքներն ու սրբությունը, եւ բոլորին վկայիր, որ նա Աստծո մոտ մեծ

փառք ու պատիվ ունի, եւ մեծ իշխանության ու զորության տեր է: Ողջ տիեզերքում միայն նրան է տրված ապաշխարության իշխանությունը: Մի՞թե նա քեզ զորավոր չի թվում: Բայց դուք արհամարհում եք նրա արժանիքներն ու իշխանությունը, որ ձեր վրա ունի»:

2. Ես ասում եմ նրան. «Տե՛ր, հարցրու իրենից, մի՞թե այն ժամանակից ի վեր, ինչ նա գտնվում է իմ տանը, ես որեւէ վատ բան եմ արել, կամ որեւէ բանով վիրավորել եմ իրեն»: «Ես, - ասում է, - գիտեմ, որ ոչ մի վատ բան չես արել եւ չես էլ անի: Եվ դրա համար ասում եմ քեզ, որ պեսզի դու միշտ այդպիսին մնաս: Ուրեմն, այս կասես եւ մյուսներին, որպեսզի նրանք եւս, որ ապաշխարել են, կամ մտադիր են ապաշխարելու, զգան նույնը ինչ որ դու, որպեսզի նա նրանց մասին բարի վկայի իմ առջեւ, իսկ ես՝ Աստծո»: «Տե՛ր, - ասում եմ, - ես բոլոր մարդկանց ավետում եմ Աստծո մեծամեծ գործերը եւ հուսով եմ, որ բոլոր նախկինում մեղանչողները լսելով այն, ուրախությամբ կապաշխարեն, որ կյանք ստանան»: «Այսպիսով, - ասում է նա, - շարունակիր տանել այդ ծառայությունը եւ ավարտիր այն: Ով կկատարի նրա պատվիրանները, կյանք ու մեծ պատիվ պիտի ունենան Աստծո մոտ: Իսկ ով չի պահի նրա պատվիրանները՝ ինքն իր կյանքից է փախչում. ով չի պատվում նրան, կորցնում է իր պատիվը Աստծո մոտ: Նրան արհամարհողները եւ պատվիրանները չպահողները, իրենք իրենց մահվան են մատնում ու նրանցից ամեն մեկը դառնում է իր արյան մեղապարտը: Իսկ քեզ ասում եմ, որ պահես այս պատվիրանները, ու քո բոլոր մեղքերին բժշկություն կտանաս»:

3. Ես քեզ մոտ ուղարկեցի նաեւ այս կույսերին, որպեսզի նրանք բնակվեն քեզ հետ, քանի որ տեսա, որ նրանք շատ գորովալից են քո նկատմամբ: Նրանք քեզ օգնական կլինեն, որ դու ավելի կարող լինես պահելու նրա պատվիրանները, քանի որ առանց այս կույսերի անհնարի պահել պատվիրանները: Ես տեսնում եմ, որ նրանց համար հաճելի է

լինել քեզ հետ եւ ես կպատվիրեմ, որ նրանք երբեք դուրս չգան քո տառից: Միայն դու մաքրիր քո տունը. մաքուր տանը նրանք հաճույքով են ապրում, որովհետեւ իրենք մաքուր են, անարատ եւ հոգատար ու շատ հաճելի են Տիրոջը: Ուրեմն եթե քո տունը մաքուր լինի, նրանք կշարունակեն քեզ հետ բնակվել: Իսկ եթե քո տունը որեւէ բանով պղծվի, նրանք առհավետ կհեռանան քո տանից, որովհետեւ այս կույսերը չեն սիրում եւ ոչ մի անմաքրություն»: «Տե՛ր, ես հուսով եմ գոհացնել նրանց, ասում եմ, եւ նրանք հաճույքով եւ մեկընդմիշտ կրնակվեն իմ տանը: Եվ ինչպես որ նա, որին դու հանձնել էիր, ոչ մի բանում իմ դեմ չի բողոքում, այդպես էլ նրանք չեն բողոքի»: Նա հովին ասում է. «Ես տեսնում եմ, որ Աստծո ծառան ուզում է պահել այս պատվիրանները եւ կույսերին տեղափորել մաքուր բնակարանում»: Այս ասելով, նա ինձ վերստին հանձնեց հովին եւ դառնալով կույսերին, ասաց. «Քանի որ ես տեսնում եմ, որ ձեզ համար հաճելի է ապրել նրա տանը, ես նրան ու նրա տունը հանձնում եմ ձեզ. պայմանով՝ որ դուք չըացակայեք նրա տառից»: Եվ նրանք ուրախությամբ լսեցին այս խոսքերը:

4. Ապա նա ասաց ինձ. «Արիաբար տար այս ծառայությունը եւ բոլորին վկայիր Աստծո մեծափառությունը ու չնորհ կունենաս քո ծառայության մեջ: Ամեն ոք, ով կկատարի այն պատվիրանները, պիտի ապրի եւ երանելի պիտի լինի, իսկ ով կարհամարի դրանք, չի՛ ապրի ու իր կյանքում դժբախտ կլինի: Բոլորին ասա՛, որ չդադարեն ով որքան կարող է բարիք գործելուց, որովհետեւ բարեգործությունն օգտակար է իրենց: Ի նկատի ունեմ այն, որ պետք է ամեն մարդու հանել չքավորությունից: Որովհետեւ ընչափուրկը իր հանապազօյյա կյանքում խիստ տառապանքներ ու վշտեր է կրում: Ով կարիքից ազատում է այդպիսի մարդու հոգին, նա մեծ ուրախություն պիտի ստանա, որովհետեւ նման թշվառություններ կրողը նույն չարչարանքներն է կրում, ինչպես զնդանում շղթայվածը: Շատերը չտանելով այդ թշվառությունները, հուսալք-

ված իրենք իրենց մահվան ձեռքն են հանձնում: Ուստի, ով գիտի այսպիսի մարդու թշվառությունների մասին եւ նրան չի փրկում, նա մեծ մեղք է թույլ տալիս ու դառնում է նրա արյան մեղավորը:

Եվ այսպես բարիք արե՛ք, ով որքան ստացել է Տիրոջից: Մի՛ հապաղեք, քանի գեռ չի ավարտվել աշտարակի շինությունը, որովհետեւ ձեզ համար է դադարեցված շինության գործը: Եթե չշտապեք ուղղվել աշտարակի շինությունը կավարտվի եւ դուք չեք ընկնի այնտեղ»: Այս խոսքերից հետո, նա վեր կացավ բազմոցից եւ հեռացավ, իր հետ տանելով հովին ու կույսերին, բայց ինձ ասաց, որ ինքը հովին եւ կույսերին նորից ետ կուղարկի իմ տուն:

+

<sup>1</sup> Հնուց ի վեր, նաեւ քրիստոնեական շրջանում, երկար ժամանակ օգտագործվել է անընդհատ գրության ձեւը, որտեղ բառերն իրարից տարանջատված չեն:

Ք Այսինքն՝ ամուսնական կապերից օգտվելու ժուժկալության միջոցով:

Խ Այսինքն՝ Հերմասի քարոզությունից հետո սկսվող ապաշխարության ժամանակաշրջան:

Հ Այսինքն՝ քրիստոնյաների:

Ո Հասկանալի է, արդեն եկեղեցի կազմող քրիստոնյաների համար Աստծո կողմից որոշված ապաշխարության ժամկետը: Նրանք պետք է խուսափեն երկրորդ ապաշխարհության անհրաժեշտությունից, այսինքն՝ կրկին մեղք գործելուց:

Ճ Քրիստոնյաների համար ապաշխարհությունը սահմանափակված է, մի կողմից, Քրիստոսի երկրորդ գալստյան մոտալուտությամբ եւ աշտարակի կառուցման ավարտով, որը եկեղեցու խորհուրդն ունի: Մյուս կողմից, բարոյական բարդությամբ

\* Աստվածամոր մակղինսերից է՝ շուշան հովտաց՝ հովիտների շուշան (թարգմ. ծան.):

եւ անպտղաբերությամբ, այն քրիստոնյաների համար, որոնք հաճախակի մեղք են գործում եւ հաճախակի դիմում ապաշխարության:

յ Այսինքն՝ հեթանոսների, որոնք կարող են ընդունել Քրիստոնեություն եւ մկրտությամբ բոլոր նախակին մեղքերի թողություն ստանալ մինչեւ վերջին օրը, այսինքն՝ մինչեւ Քրիստոսի գալուստը:

ղ Այսինքն՝ որպեսզի մահվանից հետո միանանք սուրբ Հրեշտակներին:

ը Այսինքն՝ կնոջը:

օծ Եղաղի եւ Մովլադի մասին տես՝ գիրք Թվոց, գլ. ԺԱ 26և 27: «Եղաղն Մովլադ Աստվածաշնչի պարականոն գրքերից մեկը, որը կորած է: Այս գիրքը հիշատակվում է Մխիթար Այրիվանցու ձառնտիրում՝ «Գիրք զոր ունեին հրայք ի ծածուկ» ցուցակում» /Ե. Հարությունյան, «Մխիթար Այրիվանեցի», Երեւան, 1985, էջ 132, 222/:

օ Միանձնուհուն Հերմասը համարում է Միքիլլա, հավանաբար այն պատճառով, որ ինքը գտնվել է Կումի շրջանում, որտեղ Հայտնի է Եղել Կումյան Միքիլլան, որին վերագրել են սիրիլյան մատյանները: /Տե՛ս «Դիցաբանական բառարան», Երեւան 1985, էջ 219/:

ք Այստեղ՝ Կղեմեսը եւ Գրափթան ընդունվում են, որպես Հերմասին ժամանակակից եւ Հայտնի քրիստոնյաներ, եւ այդ իսկ պատճառով բացի նրանց անուներից, նրանց մասին ուրիշ ոչինչ չի ասվում:

իս Ենթադրվում է, որ այս Կղեմոսը նույն ինքը՝ Հռոմի Եկեղեցու Հայտնի Կղեմիոս Եպիսկոպոսն է /92և 101թթ./: Գրափթան, ինչպես կարծում են շատ գիտնականներ, եղել է սարկավագուհի կամ Հռոմի Եկեղեցու որբերի եւ այրիների հովանավո-

րուհի:

օ Եկեղեցու կառույցը, ինչպես որ այստեղ այն նկարագրված է, պատկերված է Նեապոլում գտնվող հին քրիստոնեական կատակոմբների որմնանկարներում: Նաեւ՝ հռոմեական քարանձավաներից մեկում գտնվող մի նկարում նույնպես պատկերված է Հսկայական սպիտակ քառակուսի մի վեմ՝ հին, բայց նոր դռնով, որի վրա վեր է խոյանում աշտարակի շենքը /Հմմտ. Առակ. թ. 13/:

ք Այսինքն՝ մկրտության խորհրդի միջոցով:

իս Այսինքն՝ Քրիստոսի երկրորդ գալուստը, դատը եւ հատուցումը բարուն ու չարին: /Հմմտ.՝ Բառնաբասի թուղթը, գլ. ԺԹ/:

շ Հավանաբար նկատի ունի Հին ուխտի արդարներին:

ո Այսինքն՝ Հեռացել են Եկեղեցուց:

օ Այսինքն՝ քրիստոնեական վարդապետությունը:

օ Հմմտ. Հակոբոս. Ե. 4:

ք Այսինքն՝ հոգեւոր եւ հավիտենական:

իս Հռոմեացիների մոտ այն հավասար է 625 ֆութի կամ 125 քայլի:

օ Սաղմոս ԾԴ 23, ԸԱ 25, Ղուկ ԺԲ 27, Փիլ. ԴԿ 6:

ք Մատթեոս ԻԶ 24: Մարկոս ԺԴ 21:

իս ՏԵ՛ս, Բ. Թուղթ Պետրոսի:

շ ՏԵ՛ս, Ա. Թուղթ Պետրոսի Ա. 7:

ո Այսինքն՝ այս աշխարհի մարդկանց մեջ:

օ Հնում այս պատվիրանի բառերով օգտվում էին սուրբ Հայրերը, օրինակ Իրենոսը, Աթանաս Ալեքսանդրացին. Հմմտ.՝ Երեսիոս, Ցոյցը առաքելական քարոզության 1907, Տ4, էջ

ք Այսինքն՝ հավիտենական կյանք ունենալ:

իս Այսինքն՝ սեռական կյանքի պարկեշտություն:

օ Մատթեոս Ե. 2, Մարկոս Ժ. 11,:

ք Այսինքն՝ երկրպագում է կուռքերին եւ այլն:

իս Այսինքն՝ եթե բաժանվեք:

շ Ներողամտությամբ ներշնչվելով մեղանչած կնոջ կամ ամուսնու հանդեպ, Հովիվը չի ցանկանում շնության առիթ տալ:

ու Այսինքն՝ փրկություն:

ձ Մկրտության խորհուրդը:

յ Այսինքն՝ որը տրվում է մկրտությամբ:

ղ Այսինքն՝ քրիստոնեության կոչվելը մկրտության միջոցով:

օ Այսինքն՝ բոլոր նրանք, որ ամբողջ սրտով ապաշխառում են ու հեռու մնում զայրութից:

ո Առ Եբրայացիս ԺԴ. 14:

ք Այսինքն՝ սատանայի:

իս Եսայի Ա. 17, նաեւ պատվիրան Բ:

շ Լատին տեքստում՝ «Եվ մի՛ չնացեք»:

օ Այս տեղը ապացուցում է, որ հնուց ի վեր, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը քրիստոնյաների կողմից առանձնացվել են պահպակ, հիշելու Տիրոջ չարչարանքների եւ մահվան մասին:

ք Կեղծ պահքի մասին է խոսքը:

իս Որթատունկի մասին առակը կա Մատթեոսի /գլ. Ի/ եւ Ղուկասի /գլ. Ի/ ավետարաներում:

օ Սուրբ Հոգին է՝ արտահայտության տակ, մեկնիչների կարծիքով պետք է հասկանալ ոչ թե Սուրբ Երրորդության երրորդ դեմքի, այլ Հիսուս Քրիստոսի Աստվածային բնությունը:

ք Այսինքն՝ Քրիստոսի Աստվածային բնությունը:

իս Մարմին ասելով այստեղ նկատի ունի Քրիստոսի մարդկային բնությունը: Տե՛ս Հովհաննես Ա. 14:

շ Այսինքն՝ Քրիստոսի մարդեղությունը դարձրեց Աստծո փառքին մասնակից:

ու Հանգրվան՝ Փառք եւ երանություն երկնքում: Հմմտ. Կղեմիոս թուղթ Բ. գլ. Ե:

օ Սուրբ Հոգին՝ այսինքն Որդին Աստծո, որ Հովիվը նկարագրեց Հերմասին առաջին գրքում, բացելով իր գաղտնիքը եկեղեցու տեսքով, իսկ այժմ Հերմասը ստանում է հայտնությունը Աստծու Որդուց՝ Հրեշտակի միջոցով, որը նրան ցույց է տալիս եկեղեցու շինությունն ու ավարտը:

օ Այստեղ՝ կույսերի անվան տակ /Հմմտ.՝ Տեսիլք Բ, 8: Առակ. Թ. 13, 15/ պատկերվում են Սուրբ Հոգու պարզեւները՝ քրիստոնեական առաքինություններ, որոնցով պետք է զգեստագորվի հավատացյալը Քրիստոսի պատկերի եւ շնորհների նման: Սրանք կոչվում են նաեւ Աստծո Որդու Հոգեւոր զորություններ:

օ Առաջին սերունդը, ըստ Հինգելֆելդի, մինչըսեղեղեղան տասը հայրապետներն են /Ելք. Ե/:

ք Այսինքն մկրտությունով. բայց այստեղ ի նկատի չունի եկեղեցու մկրտության խորհուրդ. իրական իմաստով, այլ մկրտության խորհուրդի զորությանը, Աստծու շնորհի միջոցով:

իս Նահապետները, մարդարեներն ու հին ուխտի մյոս արդարները, որոնք ննջել են հավատով եւ իրենց առաքինի կյանքով, Աստծո արքայությունը մտնելու համար կարիք ունեին միայն Աստծո Որդու կնիքին՝ այսինքն մկրտության եւ հոգու նորոգության: Այդ պատճառով առաքյալները որոնք արդեն ունեին մկրտության կնիքը, մահից հետո քարոզում էին մեռած արդարներին եւ նրանց հետ ջուրը մտնելով (ինչպես Փիլիպոսը Ներքինու հետ. Գործք. Ը. 38), նորից դուրս եկան:

օ Այսինքն՝ հավիտենական եւ երանելի:

օ Նորադարձներ անվան տակ պետք է հասկանալ հեթանությունից դարձաց այն քրիստոնյաներին, որոնց Աստված տեղ տվեց Եկեղեցու շինության մեջ:  
D\$SLξm፩F»L<sup>D</sup> ւ Հ Հ Հ Հ Հ Հ Հ

QLYLKL”(“( ULLKLPLKLKD “( “δgTMHwLξKFLF,, \$

*#D\$SL\x{m}\#F» \E \L \S \S \S \S*

*QLY***L***L**f&* *l**f&* *l**o\$*      *6'LLLD* *l* *l**2^TMHwLzK#F,,5*